ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912 Թ.

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱ» Մադվեյսկի փող. № 8
1913

361
Կ-76

361
Ա-76
103

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912 Թ.

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մադաթեանի փող. № 8
1913

23 MAY 2013
42.830
28449-Հ.Լ
1 MAR 2010

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՒ ՆՐԱ 1912 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի կազմը 1912 թ. յունուարի 1-ին հե-
տեւեալն էր՝—նախագահ խորհրդի՝ Սամսոն Յարութիւնեան, փոխ նա-
խագահներ՝ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան և իշխ. Մարիամ Թու-
մանեան, գանձապահ՝ Զաքարիա Մամուլեան, քարտուղար՝ Յակոբ
Շահնազարեան, խորհրդի անդամներ՝ տիկին Հեղինէ Առստամեան,
բժ. Բողդան Աղասարեան, Սահակ Լիսիցեան, Սարգիս Մելքու-
մեան, Բժ. Արամ Մխիթարեան, Աղէքսանդր Շահիկեան և Կարա-
պետ Տիրինեան. փոխ անդամներ՝ Երուանդ Ղալայեան, Արտաշէս
Սէյլանեան և Կարապետ Տէրեան։ 1912 թ. ապրիլի 21-ին կայացած
ընդհանուր ժողովում հերթով դուրս գնացող բժ. Բ. Աղասարեանի,
Ս. Մելքումեանի, Աղ. Շահիկեանի և ինքնակամ հրաժարուած Յ.
Սպենդիարեանի տեղ ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ
ընտրուեցին բժ. Բողդան Աղասարեան, Սարգիս Մելքումեան, Աւե-
տիս Պօղոսեան և Ներսէս Աբէլեան։ Վերստուգիչ յանձնաժողովի
անդամներ վերընտրուեցին՝ Սարգիս Խարազեան, Սիմէօն Շահվեր-
դեան և Առաքել Աւագեան. փոխ անդամներ վերստուգիչ յանձնա-
ժողովի՝ Մկրտիչ Մաղաքեան և Ջահանգիր Աթայեան։ Նոյեմբերի
10 ին ընտրուեցին խորհրդի փոխ անդամներ՝ բժ. Աղէքսանդր Ղա-
զազեան և Արամ Նազարէթեան։

Խորհուրդը իր առաջին հերթական նիստում, կանոնադրութեան
§ 31-ի համաձայն, ընտրեց խորհրդի պաշտօնատար անձանց,
նախագահ խորհրդի՝ Սամսոն Յարութիւնեանին, փոխ—Նախա-
գահներ՝ Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեանին և իշխ. Մարիամ
Թումանեանին, գանձապահ՝ Աւետիս Պօղոսեանին և քարտուղար՝
Յակոբ Շահնազարեանին։

Հաշուէտարւայ ընթացքում խորհուրդը ունեցել է 43 նիստ.
Հաշուէտարւայ ընթացքում խորհուրդը ունեցել է 43 նիստ.
խորհրդի անդամների նիստերի յաճախումները արտայայտուել են հե-
տեւեալ կերպով· 39

Ս. Յարութիւնեան . . . 14
Եփրեմ եպիսկոպոս . . .

ԳՈՍ. библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
11513-57

Իշխ. Մ. Թումանեան . . .	15
Տիկ. Հ. Առստամեան . . .	33
Բժ. Բ. Աղասարեան . . .	31
Ս. Լիսիցեան . . .	27
Ս. Մելքումեան . . .	38
Ջ. Մամուլեան . . .	12
Բժ. Ա. Մխիթարեան . . .	19
Յ. Շահնազարեան . . .	41
Ն. Աբէլեան	25
Ա. Պօղոսեան	27
Ա. Շահիկեան. . . .	24
Կ. Շիրինեան	8
Փոխ անդամ՝ Կ. Տէրեան. . .	4

Խորհուրդը սկսելով իր գործունէութիւնը 1912 թւին, նրա առաջին հոգսն էր վերջացնելու և պարզելու անցեալ տարւանից սկսուած երեսնամեայ յօբէլեանի առթիւ հիմնած դպրոցական ուսուցչական ֆոնդի հանգանակութեան գործը, որի ժամանակը լրացել էր 1911 թ. դեկտեմբերի 31-ին։ Նա բազմաթիւ գրութիւններով սկսեց դիմել այն բոլոր հիմնարկութեանց և անձանց, որոնց ուղարկել էր հանգանակութեան թերթեր՝ Ստացուած դրամներն և տեղեկութիւնները նա կարգի բերեց և պարզեց ժողոված գումարի քանակը։ Ընդամենը Խորհուրդը ուղարկել էր 539 հիմնարկութեանց և անձանց հանգանակութեան թերթեր և ժողովել էր 324 թերթով մինչև 1913 թւի յունուարի 1 ը 77537 ր. 05 կ., բացի այդ, ֆոնդի ընթացիկ հաշիւներով բանկերից ստացել է $^{0}/_{0}{}^{0}/_{0}$ 566 ր. 92 կ. և ֆոնդի գումարով գնուած արժէթղթերի կուպոններով 2517 ր. 97 կ.։ Այսպիսով առ 1 ն յունւար 1913 թ. դպրոցական-ուսուցչական ֆոնդի մուտքը կազմում էր 80621 ր. 94 կ.։ Այդ գումարից գնուած է 92700 ր. արժէթղթեր և վճարուած է 78892 ր. 25 կ., համաձայն կանոնադրութեան, ֆոնդի $^{0}/_{0}{}^{0}/_{0}$-ից վերջուած է անձեռնմխելի և պահեստի գումարների $5^{0}/_{0}$-ը—224 ր. 32 կ., տոմսակի ապահովագրութեան 10 ր. 55 կ., ընդամենը ծախս եղել է 79127 ր. 12 կ., որը դուրս գալով 80621 ր. 94 կ. մուտքից, առ 1-ն յունւար 1913 թ. կանխիկ գումար մնում է 1494 ր. 82 կ.։ *)

*) Առ մէկն մարտի 1913 թ. վերոյիշեալ կանխիկ 1494 ր. 82 կոպէկը

Գնուած արժէթղթերը հետևեալներն են.—

Թ. Ք. Վ. ընկ. $5^{0}/_{0}$ օբլիգ. անւ. արժ.	72400 ր.	վճարուած է	61166 ր. 25 կ.
Ազնւ. բանկ. $5^{0}/_{0}$ արժէթ. » »	20000 ր.	»	16570 ր. —
3 հատ I, II և III կարգի խաղ. տոմս »	300 ր.	»	1156 ր. —
Ընդամենը գնուած է արժէթուղթ	92700 ր.	վճարուած է	78892 ր. 25 կ.

Այդ 92700 ր. արժէթղթի գումարը և 1494 ր. 82 կ. կանխիկ ունեցածը, Խորհուրդը, համաձայն 11-ն նոյեմբերի ընդհանուր ժողովի որոշման, ուղիղ երկու բաժին է արել, որից մէկը՝ 47097 ր. 41 կ. յատկացրել է դպրոցական ֆոնդին, իսկ միւսը՝ նոյնքան գումար՝ ուսուցչական ֆոնդին։ Այդ երկու դրամագլուխներն էլ մնալու են անձեռնմխելի, իսկ տոկոսները գործադրւելու են յատուկ իրենց նպատակին։

Ապա, խորհուրդը ի նկատի ունենալով զանազան հիմնարկութեանց և անձանց դիմումներն և դահլիճի շահեցողութիւնը, սեպհական դահլիճում շինեց փոքրիկ շարժական բեմ, որ ներկայիս ծառայում է թէ մանկական ներկայացումների և թէ զանազան համերգներ, դասախօսութիւններ, ժողովներ և այլ հանդէսներ կազմելու համար. Կարելի է համարձակ ասել, որ շնորհիւ այդ բեմի, ընկերութեանս դահլիճը ստացաւ հասարակական բնոյթ և եկամուտը մի քանի անգամ աւելացաւ, քան նախկին տարիները։ Ինչպէս փորձը ցոյց տուեց, ներկայ դահլիճի ծաւալը այլևս բաւականութիւն չի տալիս, իւր մի քանի անյարմարութիւնների պատճառով, ուստի խորհուրդս որոշել է թէ մեծացնել այն և թէ առաստաղը բարձրացնել, օդափոխութեան գործիք դնել և այլ հարկաւոր վերանորոգութիւններ կատարել։ Այդ նպատակով, ներկայիս կատարւում են նախապատրաստական աշխատանքներն, որոնք իւր ժամանակին կը ներկայացնեն ընդհանուր ժողովին ի հաստատութիւն։

Գաւառներում դպրոցներ պահելու և նրանց նպաստելու գործը, նոյնպէս խորհրդիս գործունէութեան մէջ առաջին տեղն է բռնել, մանաւանդ նա լուրջ խորհրդակցութեան առարկայ դարձաւ, երբ խորհուրդս յանկարծ և անսպասելի կերպով իմացաւ կողմնակի աղբիւրներից, որ Պետերբուրգի եկեղեց. խորհուրդն որոշել է ընդ-

դարձել է 1717 ր. 20 կ. որով գնուած է 2000 ր. Թ. Ք. Վարկ. Ընկ. $5^{0}/_{0}$ օբլիգ. և վճարուած է 1700 ր.։ Բացի այս, ընկերութիւնը շատ մօտիկ ապագայում ստանալու է յօգուտ նոյն ֆոնդի եղբ. Ա. և Մ. Անանեաններից 10,000 ռուբլի։

հատելու իւր նպաստը, 4000 ր., որ տալիս էր ընկերութեանս այդ նպատակի համար։

Խորհուրդը առանձին ուշադրութեամբ հետեւում էր Պետերբուրգի եկեղեց. խորհրդի պահանջներին, այդ գումարի գործադրութեան նկատմամբ։ Չբաւականանալով սովորական տեղեկագրերով, որ ամեն տարի լոյս ընծայելուց յետոյ ուղարկւում էր նրանց, նա իւրաքանչիւր տարի երկու-երեք անգամ առանձին ընդարձակ գրութիւններով ծանօթացնում էր նրանց, իրենց նպաստով պահւող դպրոցների վիճակի մասին, որոնք միմիայն շնորհիւ այդ նպաստի պահւում էին իրենց գոյութիւնը։ Խորհուրդը շատ լաւ հասկանալով և համոզւած լինելով, որ կարճել այդ նպաստը, միեւնոյն է թէ փակել այն քան դպրոցները, որոնց յատկացւած էր այն, ուստի մի շարք գրութիւններով, սկսած յունւարի 8-ից և հեռագրներով նա դիմեց և պարզելով գործի դրութիւնը, խնդրեց չընդհատել յատկարած նպաստը, որի մասին, ինչպէս վերն ասւեց, խորհուրդս ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չունէր։

Մինչև մայիսի վերջերը, Պետերբուրգի խորհրդից ոչ մի պատասխան չըստանալով, և, ի նկատի առնելով բոլոր դպրոցների վարչութեանց դիմումները, պարզել իրենց, գրութիւնը, թէ որքան նըպաստ են ստանալու, որ ըստ այնմ կարգադրեն իրենց ապագայ գործը, ուսուցիչներ հրաւիրել կամ չըհրաւիրելու նկատմամբ, խորհուրդս, ենթադրելով, որ Պետերբ. եկ. խորհուրդը երևի յարգել է իւր դիմումը, նա կրկին սկսում է յատկացնել նպաստը դպրոցներին և յայտնում նրանց։

Սակայն ի մեծ զարմանս խորհրդի, յունիսի 9 ին նա ստանում է Պետ. եկեղ. խորհրդից № 540 գրութիւնը, որով նրանք փոխադրում են $19^{11}/_{12}$ ուս. տար. նպաստի մնացորդը 1300 րուբլին և յայտնում են, որ այդ վերջինն է, այլ ևս ոչ մի նպաստ չի տըրւելու նոյն իսկ լռում են ընկերութեանս բազմաթիւ գրութիւնների և դիմումների մասին երկու խօսք ասել։

Խորհուրդս, իրեն գտնելով բոլորովին անել դրութեան մէջ, կրկին, յունիսի 20-ին դիմում է նրանց և մանրամասն պարզելով իրերի վիճակը, գիւղացոց ցաւալի դրութիւնը, տիրող տգիտութիւնը և այլն, խնդրում է գէթ այս 1912/13 ուս. տարում տալ նպաստը. մինչև ընկ. խորհուրդը ինքը գտնի այլ աղբիւրներ։ Բայց այս, նա մասնաւոր նամակներով ևս դիմում է նոյն խորհրդի ան-

դամներին, խնդրելով օգնել և հանել այս անել դրութիւնից։

Այս գրութիւնը ևս առաջինների նման մնում է անպատասխան։ Հոկտեմբերի 9-ին խորհուրդս օգտւելով սրբազան Մեսրոպ եպիսկոպոսի Պետերբուրգ գնալուց, գրաւոր յանձնարարում է նըրան միջնորդելու և թարգման հանդիսանալու խորհրդիս ցաւերի։ Չըստանալով կրկին ոչ մի պատասխան, և ի նկատի առած, որ դպրոցները արդէն բացւել էին և իրենց նպաստն էին պահանջում, հոկտեմբերի 15-ին նա հեռագրով խնդրում է տեղեկութիւն, որին 21-ին միայն ստացւում է պատասխան, որ խորհրդի բոլոր դիմումները մնացել են անհետեւանք։

Խորհուրդս սպառելով իւր բոլոր միջոցները, նա յայտնեց այս ամենը Նոյեմբերի 10-ի ընդհանուր ժողովին, որը որոշեց ինքը դիմել իւր կողմից, որ և կատարւեց, հէնց նոյն օրը։

Պատասխան ստացւեց, որ խորհուրդը ի նկատի կառնի նախահաշիւ կազմելիս, այդ օրից անցել է մի քանի ամիս, և այլ ևս ոչ մի դրական կամ բացասական պատասխան չըկայ. թէև մասնաւոր աղբիւրներից խորհուրդս լսել է, որ ոչ մի գումար չի յատկացւած։ Այժմ ընկերութեանս խորհուրդն ինքն է աշխատում միջոցներ գտնել, բաւարարութիւն տալու բացւած դպրոցներին, նա կազմել է որոշ անձանց ցուցակը, դիմելու և խնդրելու որ օգնեն իրեն և հանեն այս նեղ դրութիւնից, որ դրաւ Պետերբ. եկեղ. խորհուրդը։

Անդամակցական վճարների պակասեցումն, որի մասին խորհուրդը դիմել էր անցեալ տարի, ստանալով դրական լուծումն, պատճառ եղաւ ընկերութեանս ճիւղերի աւելանալուն. ներկայ 1912 թւին բացւել են հետևեալ տեղերում նոր ճիւղեր.— Ջաքաթալա Հադրութ, Բերդ, Սուլդա Մայկոպ, Օնի, Բաշ գիւղ, Սև Քար, Ալիղամար և Վերին Ագուլիս։ Սրանք բոլորն էլ, թէև փոքր են, բայց ցոյց են տալիս որոշ ակտիւ գործունէութիւն և կենդանութիւն մտցնում մեր գաւառում, որ անպայման ուրախալի է և կունենայ իւր օգտակար ազդեցութիւնը։

Չքաւորներին դրամով օգնելու ձևը, խորհուրդը գտնելով ոչ վերջնական և ցանկանալով աւելի արմատական օգնութիւն ցոյց տալ նրանց, նա ունեցել է մի շարք խորհրդակցութիւններ, հիմնելու աշխատանքի տուն, լայն հիմունքների վրայ. այդ առթիւ կազմւել է յատուկ ծրագիր և բանակցութեան մէջ մտել մի բա-

Վերը ասացինք թէ մանուկը համարեա թէ մանկական բոլոր գրքերը կարդում է, այդ շեշտեցինք, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընկերութեան գրադարանում հայերէն մանկական գրքերից շատ քիչը կըպակասի։

Աչքի առաջ ունենալով որ ընթերցող հասարակութիւնը աւելի հետաքրքրւում է նորագոյն գրականութեամբ, ուստի Խորհուրդը առաջ գնալով դրանց մտաւոր պահանջին, պարբերաբար գրադարանը գրադարանական մասնաժողովի միջոցով հարստացնում է նորանոր լոյս տեսած գրքերով և այսպիսով ժամանակի հետ զուգընթացաբար գրադարանը հարստանում ու ճոխանում է գրքերով։

Թէև ընկերութեան գրադարանում գլխաւորապէս մեծ պահանջ է լինում գեղարւեստական գրքերի, սակայն Խորհուրդը դրանց հետ միասին չի մոռանում ձեռք բերել նաև զանազան ճիւղերի վերաբերեալ գիտական և տեղեկատու գրքեր*)։

Եւ ներկայիս այդպիսի գրքերից այնքան է ձեռք բերել Խորհուրդը, որ որոշել է մի առանձին պահարան ունենալ, որտեղ պահւեն գրադարանի թանկարժէք և հազւագիւտ գրքերը։

Խորհուրդը հանգուցեալ Ս. Վարդապետեանի նւիրած 1114 ր. 82 կ. գնել է հայերէն լեզւով զուտ հայագիտական գրքեր, որոնք տեղաւորւած են առանձին պահարանում «Վարդապետեանի բաժանմունք» մակագրութեամբ։

Այդ գրքերի համար առանձին գրացուցակ է տպւած, որ բաղկացած էր 32 երեսից։ Վարդապետեանի բաժանմունքի գրքերի թիւն է 400։

Բացի այդ գրացուցակից այս տարի շարունակւել և աւարտւել է հայերէն և ռուսերէն գրացուցակների տպագրութիւնը, ռուսերէնը՝ 3 և հայերէնը՝ 1 յաւելւածներով։ Իւրաքանչիւր տարի նոր ստացած գրքերի համար կտպւեն լրացուցիչ յաւելւած գրացուցակներ, որի համար նախահաշւում նշանակւում է առանձին գումար։

Ընդհանուր գրացուցակը բաղկացած է 977 երեսից, որից ռուսերէն 670 և հայերէն 307 երեսներից, որոնք վաճառւում են բաժանորդներին շատ մատչելի գներով։

*) Ծանօթ. Ի թիւս այդպիսի գրքերի 1913 թ. Համբուրգից ձեռք է բերւած «Լարուսի» ֆրանսերէն յայտնի հանրագիտական բառարանը, որը բաղկացած է 17 մեծադիր հատորներից իւրաքանչիւրը մօտ 1600 մեծադիր 4 սիւնեակաւոր երեսներից բաղկացած և տպւած մանր տառերով։

Գրացուցակների վերջում տպւած է հեղինակների այբբենական ցուցակը և իւրաքանչիւր հեղինակի դիմացը նշանակւած են այն երեսները, որտեղ տպւած են այդ հեղինակի գրւածքները։

Այդ ցուցակներից երևում է, որ գրադարանում կայ ռուսերէն լեզւով 2400 և հայերէն լեզւով 1300 հեղինակների գրքեր։ Ընդհանուր գրքերի թիւը ներկայիս կազմում է.—

Ռուսերէն	8100	կտոր
Հայերէն	4500	»
Ֆրանսերէն	1400	»
Բոլորը	14000	կտոր

1912 թւի Նոյեմբերից գրադարանում մտցւած է մի առանձին ձև, որի միջոցով պէտք է իմացւի թէ իւրաքանչիւր գիրք տարւայ ընթացքում կամ նրա մի որոշ ժամանակում քանի անգամ է կարդացւել։

Այդպիսի ստատիստիկան շատ կարևոր նշանակութիւն ունի, բայց քանի որ այդ ձևը գործադրւել է 1912 թւին միայն 2 ամիս, ուստի որևէ գրքի մասին յայտնել թէ քանի անգամ է կարդացւել, հնարաւորութիւն չկայ։

Բայց ընդհանրապէս վերցրած, մենք առաջ կբերենք և ցոյց կտանք թէ ո՛ր հեղինակների գրքերը աւելի շատ են կարդացւում։

Գրքերից օգտւողների թիւը ի նկատ առնւած, ինչպէս ցոյց է տալիս 3 տարւայ փորձը, հայ հեղինակների մէջ առաջին տեղը բռնում է Րաֆֆին, 2-րդ՝ Շիրվանզադէն, 3-րդ՝ Ահարոնեանը և այնուհետև միւս հեղինակները։

Այդ երեք հեղինակների (մանաւանդ Րաֆֆի և Շիրվանզադէ) գրքերի պահանջը այնքան մեծ է, որ չնայած իւրաքանչիւր հեղինակի գրքերից 4—6 օրինակ կայ գրադարանում, բայց դարձեալ բաւականութիւն չի տալիս։

Շատ են կարդացւում նաև հայ հեղինակների հետևեալ ինքնուրոյն նշանաւոր երկերը.—

Լէօի—Մելիքի աղջիկը, Նար—Դոսի—Մահը և Պայքար, Խ. Աբովեանի—Վէրք Հայաստանի, Ր. Այվազեանի—Աշոտ երկաթ, Անիի կործանումը և Տանջանքի բովից, Ծերենցի—Երկունքը, Թորոս Լևոնի և Թէոդորոս Ռշտունի, Ս. Արարատեանի—Երկու թումբ, Պ. Պռօշեանի—Սօս և Վարդիթեր, Ատրպետի-Ալմաստ, Տիկ. Մարխեանի—

Հեղինէ և Դժբախտ կին, Փափազեանի—մի քանի երկերը, Յովհ. Թումանեանի և Ղ. Աղայեանի մանկական բոլոր գրքերը, Լումայի—Կողոպտած եկեղեցին, Մուրացանի — Գէորգ Մարզպետունին, Շանթի—Լեռան աղջիկը և այլն։

Ռուս հեղինակներից ամենաշատ կարդացւում են Տօլստօյ, Տուրգենեվ, Դոստոևսկի, Գօգօլ, Վերբիցկի, Չեխով և ուրիշներ։

1912 թւի ընթացքում գրքերով նւէրներ ստացւել է հետևեալ անձերից.—

Բագւի Կուլտուրական Միութիւնից	543	կտոր
Քեր. Պատկանեանից	975	»
Խ. Խաչատրեանից տիկ. Առստամեանի միջոցով	423	»
Բժ. Տէր-Նիկողոսեանի միջոցով	355	»
Ա. Ք. Մինասեանից	213	»
Տիկ. Նունէ Միրաքեանից Հ. Առստամեանի միջոցով	156	»
Դ. Տէր-Սահակեանի ժառանգներից	142	»
Յ. Մութաֆեանից Յ. Չաթալբաշեանի միջոցով	100	»
Գ. Սուլիէվից	97	»
Բժ. Գ. Մեհրաբեանից	65	»
Բժ. Գօնիէվից	14	»
Բ. Խիզանեանից	12	»
Ա. Շահիկեանից	10	»
Զանազան անձերից	121	»
Բոլորը	3226	կտոր գ.

Բացի այդ նւէրներից ստացւած է «Հասկերի» խմբագրութիւնից «Հասկեր» ամսագրից 2053 հատ 1905—1910 թւականների և Ստ. Լիսիցեանի միջոցով Կ.-Պօլսի պատրիարքարանի Ազգային Ժողովի արձանագրութեանց ժողովածուն։

Թէ նւէրներ ստացածներից և թէ ընկերութեան միջոցներով գնւած գրքերից նւէր են ուղարկւած հետևեալ տեղերը։

Արդւինի դպրոցին	44	գիրք
Թիֆլիսի Մետեխի բանտին	110	»
Ղարաջալիլի դպրոցին	200	»
Դաշքաշի »	191	»
Սուրամի ճիւղին	60	»

Դիլիջանի ճիւղի և «Աղայեան» գրադար. համար	500	»
Իգդիրի ճիւղին	50	»
Բոլորը	1155	գիրք

Բացի այդ, խորհուրդը դպրոցական գրադարաններ է հիմնել հետևեալ 16 վայրերում։—

1) Զոռլի, 2) Ջիթեհանք, 3) Ախալքալաք, 4) Սուլդա, 5) Հադրութ, 6) Լագօդաղ, 7) Կորինապատ, 8) Ղոճաբէկ, 9) Դսեղ, 10) Վելիսցիխէ, 11) Ցարսկիէ Կօլօդցի, 12) Ջալալօղլի, 13) Քարվանսարա, 14) Դիլիջան, 15) Արասթուման, 16) Բաշգիւղ։ Դրանցից իւրաքանչիւրին ուղարկւած է 352-ական գիրք, ընդամենը 5632 հատ։ Այսպիսով խորհուրդը 1912 թւի ընթացքում նւէր է ուղարկել գաւառները 6787 կտոր գիրք։

Թէև վերոյիշեալ գրադարանները հիմնւել են դպրոցներին կից, բայց և այնպէս դպրոցին համապատասխան գրքերից զատ, ուղարկւած են նաև այնպիսիները, որոնցից կարող են օգտւել նաև հասակաւորները։

Գաւառներից յաճախ դիմել են խորհրդին և խնդրել—ուղարկել գրադարանի կանոնները և մատեանների այն ձևերը, որոնցով առաջ է տարւում գրադարանական գործը, աւելացնելով—տալ հարկաւոր ցուցումներ գրադարան—ընթերցարան բանալու վերաբերեալ։

Խորհուրդը բաւարարութիւն տալով դոցա դիմումներին և ի նըկատի ունենալով այն հանգամանքը, որ գաւառներում մի տեսակ շարժում և ձգտում է նկատւում գրադարան-ընթերցարաններ հիմնելու համար, մշակել է մի հրահանգ, որի մէջ մանրամասն նկարագրւած է թէ ինչ ձևով պէտք է սկսել և առաջ տանել գրադարանի գործը։ Խորհուրդը մտադիր է տպագրել այդ հրահանգը և ուղարկել գաւառները, դրանով առաջնորդւելու համար։

Տարւայ սկզբից գրադարանն ունեցել է	320	բաժ.
Տարւայ ընթացքում բաժանորդագրւել են	840	»
	1160	բաժ.
Տարւայ ընթացքում դուրս են գնացել	832	»
1912 թւի դեկտեմբ. 31-ին գրադարանն ունէր	328	բաժ.

Գրադարանից բաց թողած գրքերի և ընթերցարան յաճախողների թւերի մասին ճիշտ գաղափար կազմելու համար առաջ ենք բերում հետևեալ աղիւսակը.

1912 ԹՈՒԻ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՆ

Ամիսներ	Ընթերցարան յաճախողներ			Տուած է գրքեր		
	Արական սեռից	Իգական սեռից	Ընդամենը	Գրադարանի բաժանորդ.	Ընթերցարանում կարդալու	Ընդամենը
Յունուար	2307	1393	3700	1886	218	2114
Փետրուար	2465	1525	3990	2100	262	2362
Մարտ	2267	1568	3835	1933	369	2302
Ապրիլ	3154	2118	5272	1820	268	2088
Մայիս	3296	2135	5431	1301	395	1696
Յունիս	3598	2131	5729	1651	459	2110
Յուլիս	2792	1270	4062	1531	275	1806
Օգոստոս	3033	1370	4403	1191	420	1611
Սեպտեմբեր	2704	1046	3750	826	201	1027
Հոկտեմբեր	2761	1660	4421	1545	314	1859
Նոյեմբեր	2840	1760	4600	2006	304	2310
Դեկտեմբեր	3075	1837	4912	2570	320	2890
Ընդամենը	34292	19813	54105	20360	3805	24165

Ցոյց տալու համար թէ գրադարան-ընթերցարանը իր գոյութեան ընթացքում ինչպիսի պատկեր է ներկայացնում և ինչպիսի յառաջընթացութիւն է ցոյց տալիս, առաջ ենք բերում հետևեալ համեմատական աղիւսակը.

Համեմատական աղիւսակ 1910—1912 թ.*)

Տարիներ	Ընթերցարան յաճախողներ			Տուած է գրքեր			Բաժանորդ. թիւը	Գրադարանի գրքերի թիւը			
	Արական	Իգական	Ընդամենը	Բաժան.	Ընթերց.	Ընդամենը		Հայերէն	Ռուսերէն	Օտարերէն	Ընդամենը
1910 թ.	18534	3641	22175	7848	3182	11 30	300	3400	6500	923	10823
1911 թ.	30410	12768	43178	19644	3038	22682	320	3650	7600	1350	12700
1912 թ.	34292	19813	54105	20360	3805	24165	328	4500	8100	1400	14000

11513-57

Սոյն աղիւսակից երևում է որ իւրաքանչիւր սիւնեակի թիւը պարբերաբար աճում է։ 1912 թւին տուած գրքերի և ընթերցարան յաճախողների թւերը 1910 թւի հետ համեմատած, կրկնապատկել է։ Այս հանգամանքը պէտք է բացատրել նրանով, որ նախ, առաջին տարին գրադարան-ընթերցարանը, իբրև նոր հիմնարկութիւն, դեռ շատերին ծանօթ չէր իր ներքին բովանդակութեամբ և երկրորդ՝ առաջին տարին հասարակութիւնը օգտւում էր գրադարանի մէջ եղած այն գրքերով, որոնք մեծ մասամբ իբրև հին գրականութեան պտուղներ, չէին կարող լայն չափերով բաւարարութիւն տալ հասարակութեան մտաւոր պահանջներին։ Որքան թարմ և տարբեր տեսակի լինի սպառելի նիւթը, նոյնքան շատ կլինեն և սպառողները։ Այս դէպքում 3 տարուայ զգալի չափերով աճելը պէտք է բացատրել նրանով, որ գրքերը շատացել են թէ քանակով, թէ որակով և գրադարան—ընթերցարանն էլ որոշ հեղինակութիւն է ձեռք բերել ընթերցող հասարակութեան մէջ։

Թէև բաժանորդների թւի մէջ էլ հետզհետէ նկատւում է աճեցում, սակայն 1912 թւի 328 բաժանորդը շատ քիչ է մի այդպիսի գրադարանի համար։

Սա առաջ է գալիս այն հանգամանքից. որ ընթերցողների մեծ մասը գրքերից օգտւում է գրադարանում։

*) Թէև գրադարան-ընթերցարանը հիմնւել է 1909 թւին, բայց այդ տարւայ համեմատական աղիւսակը առաջ չենք բերում, որովհետև այդ թւին գործել է միայն 2 ամիս—նոյեմբերին և դեկտեմբերին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна

Գլխաւորապէս բաժանորդ են գրւում այնպիսինները, որոնք գիրքը վերցնում են լոկ ընթերցանութեան համար։ Սակայն գրադարանն ունի գիտական գրքերի մեծ պաշար, որոնցից շատը տուն չի տըրւում, հազւագիւտ և թանկարժէք լինելու պատճառով։ Ահա այդպիսի գրքերով օգտւողները փոխանակ բաժանորդ գրւելու, քանի որ հնարաւորութիւն չեն ունենալ տուն տանելու, ուղղակի գիրքը կարդում են ընթերցարանում։

1912 թւի ընթացքում ընթերցարանում ստացւել են հետևեալ պարբերական թերթերը.—

Մշակ (2 օր)	Ազգագրական հանդէս
Հորիզոն (2 օր.)	Լումա
Սուրհանդակ (2 օր.)	Тифлискій Листокъ
Կովկասի լրաբեր	Кавказъ
Աղբիւր	Закавказье
Տարազ	Закавказская Рѣчь
Հասկեր	Баку
Հովիտ	Кавказскій телеграфъ
Գիւղատնտես	Русское Слово
Նոր Առողջապահիկ	Искры
Խաթաբալա	Русскія Вѣдомости
Արօր	Рѣчь
Բիւզանդիոն	Новое Время
Ժամանակ	Петерб. газета копѣйка
Մարմնամարզ	Синій Журналъ
Ծանթ	Будильникъ
Ղարաբաղ	Сатириконъ
Ախուրեան	Нива
Ժայռ	Нева
Մեր կեանքը	Родина
Կռան	Хуторъ
Կոչնակ	Вѣстникъ здоровья
Նոր-դպրոց	Вѣстникъ Знанія
Հանդէս Ամսօրեայ	Недѣля
Բազմավէպ	Свѣтлячекъ
Լոյս	Путеводный огонекъ
Ընկեր	Школа и Жизнь

Русское Богатство	Վրացերէն՝
Русская Мысль	Սախալխո գազէթի
Вѣстникъ Европы	Ֆրանսերէն՝
Современ. Міръ	Revue des deux mondes
Запросы Жизни	Թուրքերէն՝
	Մօլլա Նասր-էդդին

ՃԱՇԱՐԱՆ

Կ. Հ. Բ. Ընկ. ճաշարանը գործելով նախընթաց տարիների ծրագրով, աշխատել է որքան կարելի է ընդարձակ չափով օգնութեան հասնել առողջարար սնունդ մատակարարելով հայոց դպրոցների չքաւոր աշակերտ—աշակերտուհիներին։

Սակայն վերջիններիս թիւը 1912 թ. ընթացքում այնքան շատ էր, որ խորհուրդը մնում էր անելանելի դրութեան մէջ՝ ընդունելով բոլորին՝ նիւթական միջոցները չէին ներում, մերժել՝ դա խորհրդի համար մի ցաւալի իրողութիւն էր։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ խնդրատու երեխաների մէջ զգալի % էր կազմում նաև քաղաքային դպրոցներինը, խորհուրդը դիմեց Թիֆլիսի քաղաքային վարչութեանը և խնդրեց մի որոշ գումար նպաստ տալ, որպէսզի հնարաւոր լինի քաղաքային դպրոցների սաներին ևս ճաշ տալ ընկերութեան ճաշարանից։ Այդ խնդիրը համակրելով, քաղաքային վարչութիւնը որոշեց իւրաքանչիւր տարի նւիրել 200-ական ռուբլի 1913 թւից։

Ճաշող աշակերտների ամենամեծ տոկոսը կազմում էին Ներսիսեան դպրոցինը։ Ներկայ ուսումնական տարւայ սկզբին Ներսիսեան դպրոցը տեղափոխւեց իր նոր շինութիւնը, որ անհամեմատ շատ հեռու է ճաշարանից և այսպիսով խոչնդոտ հանդիսացաւ այդ դպրոցի սաներին ընկերութեան ճաշարանից օգտւելու։ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը ի նկատի ունենալով այդ հանգամանքը, դիմեց խորհրդին, խնդրելով իրանց դպրոցին կից բանալ ճաշարանի ճիւղ կամ նպաստել դպրոցում ճաշարան բանալու։ Խորհուրդը աւելի

յարմար գտաւ վերջինը և որոշեց 1913 թ. յունուարից մինչև մայիս ամսեկան 100 ր. նպաստ տալ դպրոցին։

Ներկայ 1912 թ. ճաշարանը գործել է յունուարի 1-ից մինչև մայիսի 31-ը և սեպտեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 31-ը։

Բացի ընկերութեան հաշւով ձրի ճաշողներից Ներսիսեան դըպրոցի հաշւով ճաշել են 63, ժողովարանի հաշւով 79, օրիորդ Ն. Սերեբրակեանի հաշւով 2, տիկին Ծ. Մխիթարեանի հաշւով 1 և 14 հոգի իրենց հաշւով, վճարելով ամսեկան 2 ր. 10 կոպէկ։

Ճաշարանից օգտուողները եղել են հետևեալ դպրոցներում սովորողները՝

1. Ներսիսեան դպրոցից . . .	95 հոգի
2. Յովնանեան »	18 »
3. Գայիանեան » . . .	19 »
4. Քամոյեան » . . .	7 »
5. Վանքի » . . .	2 »
6. Ջգրաշէնի » . . .	4 »
7. Մեղու Ընկ. » . . .	5 »
8. Քաղաքային » . . .	5 »
9. Գիմնազիայի » . . .	3 »
10. Նկարչական » . . .	2 »
11. Երկրաչափական » . . .	1 »
12. Ս. Սարգսի » . . .	15 »
13. Ս. Կարապետի » . . .	5 »
14. Շամքոռեցւոց » . . .	10 »
11. Էջմիածնեցւոց » . . .	10 »
12. Հայուհ. Բարեգ. Ընկ. . . .	10 »
13. «Լոյս» Ընկ. » . . .	15 »
14. Թանգոյեան » . . .	6 »
15. Մանթաշեան Առևտրական . .	4 »
16. Մելիք Բախտամեանի կար ու ձևի	5 »
17. Նորաշէնի » . . .	8 »
18. Մէյդանի Ս. Գէորգի դպրոցից .	5 »
19. Կուկիայի Ս. Աստուածածնի դպր. .	3 »
20. Ն. Աբրահամ. հաշւապ. կուրսերից	1 »
21. Տէր-Ստեփանեանի » » .	1 »
22. Երաժշտական դպրոցից . .	5 »

23. Նիկօլաևսկի քաղ. դպրոցից . .	3 հոգի
24. II. Առևտրական » . . .	1 »
25. Պուշկինեան քաղաք . . .	1 »
25. Պրօֆեսիօնալ » . . .	2 »
26. Հաւլաբարի » . . ,	1 »
27. Պատրաստ. Ներսիսեան դպ. .	2 »
Բոլորը . .	274 հոգի

Այս ժամանակամիջոցում բաժանուած է 67,000 ճաշ, որոնցից որբանոցին 8432, ճաշարանը յաճախող երեխաներին 56,247 և Ընկ. ծառաներին 2241 ճաշ, ընդամենը 67,000 ճաշ։ Իւրաքանչիւր ճաշը նստել է 11, 09 կոպէկ։ Ճաշերը եղել են տաւարի մսով սուպեր՝ գետնախնձորով 24 անգամ, բորշ կաղամբով կամ ճակընդեղով 34 անգամ, սուպ կրուպայով 20 անգամ, սուպ բրնձով 20 անգամ, վերմիշելով 9 անգամ, բլղուրով 15 անգամ, հարիսա 11 անգամ, փլաւ չամիչով և չիրով 38 անգամ, (ուտիսւայ և պասւայ) շիլափլաւ 5 անգամ, ռագու 2 անգամ, տօլմա 2 անգամ սուպ մուկաշարով 3 անգամ. լոբով սպաս և գետնախնձոր ձիթով 35 անգամ, սուպ սիսեռով և չոր լոբով 10 անգամ, ծիրանի սպաս և լոբի 2 անգամ, պասւայ սուպ բրնձով և սունկով 1 անգամ, թանէ սպաս և պանիր 9 անգամ, մածուն շաքարով 8 անգամ, սուպ բանջարեղէնով 10 անգամ, կաթնէ սպաս և պանիր 11 անգամ և տօներին տուած են տօնական ճաշեր—ձուկ, կալբաս, գառան միս, պանիր, ձու, խնձոր։

Ծննդեան տօներին շնորհակալութեամբ ստացւեց Բագւից պ. Թաղիևից զանազան տեսակ ձկներ 10 փութ և 5 գրվ. խաւիար, նաև Սալեանից «Կուր-Արաքս» Ընկերութիւնից 6 փ. 12 գրվ. ձուկն։

Այդ թւականի ընթացքում տրուած են նաև տօնական ճաշեր ի յիշատակ Մ. Խաչատրեանի տիկ. Ն. Կուտոյեանի, մի ամսի հաշւով մի օր ճաշ, որ կամեցել է մնալ անյայտ և Գ. Սունդուկեանի յիշատակին։

1912 թ. ընթացքում ծախսուած է միս 2607,—51*) հաց 1934 ր. 66 կ. *) զանազան մթերքներ 2340 ր. 11 կ.

---

*) 320 ր. 43 կ. վճարուած է 1911 թ. հաշւին

**) 219 ր. 57 կ. » » »

Ծառայողների ռոճիկ 609 ր. 78 կ. վառելիք 193 ր. 98 կ և զանազան ծախքերի 300 ր. 35 կ. ընդամենը 7985 ր. 36 կ.։

Ճաշարանը անցեալ տարիների նման կառավարուել է առանձին մասնաժողով, որ բաղկացած է եղել խորհրդի կողմից—տ. Հ. Առուստամեանից, բժիշկ Բ. Աղասարեանից, Ա. Շահիկեանից և դրսից հրաւիրուած են եղել տ. տ. Շ. Մխիթարեան, Ժ. Զարգարեան, Ե. Ղուլեան, օր. Գ. Ղազարեան, Հ. Մարկոսեան և Ե. Տէր-Գրիգորեան։

Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1912/13 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՒԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Սոյն 1912 թուին խորհուրդը շարունակել է նպաստել դարձեալ նախկին տարիների նման եկեղ. ծխական մի և երկդասեան դըպրոցներին, թէև նա ամեն կերպ աշխատում էր գոնէ 1912/13 ուսումն. տարուանից աւելացնելու մի քանի դպրոցների նպաստը, հնարաւորութիւն տալու նրանց կենտրոնական-շրջանային դառնալու. սակայն զրկուելով մի խոշոր գումար նպաստից՝ Պետերբ. եկ. խորհրդից, նա անկարող եղաւ իրագործելու այդ և մտած յաւելեալ գումարներն, եթէ լինում էր, ծախսւում էր բացուած դպրոցների կարիքների համար։

Խորհուրդս ներկայիս նպաստում է 63 դպրոց., որոնց յատկացրել է 16452 ր. 74 կ., չընայած դրան, ստացուել են դարձեալ բազմաթիւ խնդիրներ, որոնց անհրաժեշտ է նպաստ յաւելացնելը, սակայն ստիպուած է մերժել։ Կամենալով մի քանի փոփոխութիւններ մտցնել նպաստ ստացող դպրոցների մէջ, կրճատելու կամ դադարեցնելու մոքով, որ տնտեսած գումարը կարողանայ յատկացնել մի այլ դպրոցի, երկիցս խորհրդակցութիւն է ունեցել թեմերի՝ Երևանի և Թիֆլիսի տեսուչների հետ, սակայն ինչպէս երևաց նրանց զեկուցումներից, նոյնպէս և խորհրդիս ստացած տեղեկութիւններից, պարզուեց, որ ոչ միայն կրճատելու կամ դադարեցնելու հարց կարելի է դնել այլ, շատերը նրանցից, նոյն իսկ խորհրդիցս ստացած նպաստով հազիւ են կարողանում իրենց գոյութիւնը պահպանել։

Պէտք է նկատած, որ ընդհանրապէս, այս տարի յօգուտ դըպ-

րոցների նոր նուէրներ շատ քիչ են մտել. ուստի և խորհուրդս անկարող է եղել նպաստ ստացող դպրոցների թիւն աւելացնել։

Նոր նպաստներ է նշանակել Մեծ-Քէյթի և Էրդափին գիւղերի դպրոցներին, մեծարգոյ բարերար պ. Տ. Աֆրիկեանի ցուցմունքով և նպաստով։

Պէտք է նկատել, որ պ. Տ. Աֆրիկեանը տարէց-տարի յաջորդաբար աւելացնում է իր նպաստի քանակը և ընդլայնացնում շըրջանն. այս տարի յատկացնելով Էրդափին և Մեծ-Քէյթի գիւղերի դպրոցներին 300-ական րուբլի, իւր տարեկան նպաստի քանակը հասցրել է 5300 ր., որի համար ընդհանուր ժողովը որոշեց առանձին շնորհակալութիւն յայտնել նրա այդ առատաձեռն նուիրատւութեան համար։ Ցանկալի էր, որ պ. Աֆրիկեանի բարի օրինակը արձագանք գտնէր և ուրիշների մէջ և եթէ ոչ այդչափ առատ, գէթ ամեն մէկը մի դպրոցի նպաստ վերցնէր իւր հաշուին, որով մեծ օգնութիւն արած կլինէր մեր գաւառին, որ այնչափ պահանջ ունի գրագիտութեան։

Արժանի է յիշատակութեան և պ. Գ. Տէր-Մարգարեանը, որ իւր առատ նպաստով, տարեկան 1800 ր., պահում է իւր հայրենի Շրվենանց գիւղում մի երկդասեան դպրոց, որ ծառայում է մի ամբողջ շրջանի լուսաւորութեան գործին։ Չըբաւականանալով իր դրամական նպաստով, նա սաներին և այլ բաւականութիւն պատճառելու միտումով և գիւղացւոց մէջ ընթերցանութիւն տարածելու մտքով, ուղարկում է այնտեղ թէ գրքեր և թէ այլ պարագաներ. իսկ նոր տարուայ տօներին, միրգ, տօնածառ և այլն, որով գիւղացիք և աշակերտութիւնը հնարաւորութիւն են ունեցել կազմելու մի փառաւոր և շքեղ հանդէս-երեկոյթ։

Նոյնպիսի եռանդ են ցոյց տալիս իշխ. Ս. Վ. և Բորիս Արղութեան-Երկայնաբազուկները դէպի իրենց հիմնած Սանահնի դպրոցը, որոնց մասամբ օգնում են և միւս Արղութեան-Երկայնաբազուկները, դրանց ջանքերով դպրոցը կանոնաւոր կերպով յառաջադիմում է, ծառայելով ինչպէս Սանահնի, նոյնպէս և շրջանի գիւղերի գրագիտութեան գործին։

Սանահին գիւղում դպրոց բանալով իշխանուհի Սօֆիա Արղութեանը աշխատում էր դպրոցին կից մի այնպիսի արհեստանոց բանալ, որով կարողանային ապահովուել նրանում սովորողները։

Եւ իշխանուհին գտաւ, որ ամենից յարմար է բանալ գորգա-

գործական արհեստանոց, ի նկատի ունենալով այն հանգամանքը՝ որ գիւղացիներից շատերը գիտեն այդ արհեստը, միայն թէ տանում են նահապետական ձեւով. չունեն կատարելագործուած տորքեր, գործում են անճաշակ, գոյնը թափւող թելերով և չեն կարողանում ինչպէս որ գոյների, նոյնպէս և նկարների մէջ որոշ ներդաշնակութիւն պահպանել։

Իշխանուհին այս միտքն յայտնում է նաև իշխան Բօրիս Նիկօլաևիչ Արղութեան Երկայնաբազուկին, որը հաւանում է և կազմակերպման համար միանւագ 300 ր. Նւիրում։

Առանձին աջակցութիւն է ցոյց տալիս նաև Տնայնագործական կոմիտետը յանձին իր նախագահ պ. Փիրալեանի, որը նւիրում է մի տորք և նկարներ ու ներկեր, խոստանալով ապագայում ևս աջակցել։

Արհեստանոցն արդէն բացւած և գործն սկսւած է, 2 գորգ գործել են, երրորդն էլ շուտով կըվերջացնեն, որը մտադրութիւն կայ ուղարկել Պետերբուրգի ցուցահանդէսը։

Այս արհեստանոցը մեծ համակրութիւն գտաւ գիւղացոց կողմից և գպրոցի հոգաբարձութիւնը ի նշան այդ համակրանքի մի սոլ ք նւիրեց արհեստանոցին։

Պատրաստւած գորգերը, պէտք է վաճառւեն, որից գոյացած արդիւնքը, հանած ծախսերը, բաժանւելու են աշխատողների մէջ։

Գործագործութիւնը աւանդելու համար առայժմ դրսից է հրաւիրւած վարպետը, իսկ եկող տարւանից լինելու է տեղացիներից։

Թէև խորհուրդն ինքն շատ լաւ զգում է իր սեփական շրջիկ տեսչի կամ վերահսկիչի կարևորութիւնը որ կարող էր թէ դպրոցների հետ ծանօթանալու և տալ իւր խորհուրդներն ու տեղեկութիւնները և թէ կայցելէ ընկերութեանս ճիւղերին, կըծանօթանար նրանց գործերի հետ և հարկաւ կըտնօրինէր։ Սակայն, չնայած ընկերութեան սուղ միջոցներին, նա աշխատեց լրացնելու այդ բացը, բայց չըյաջողւեց։

Ուստի այս տարի ևս խորհուրդս յակամայից բաւականացել է իւր ճիւղերի վարչութեան հսկողութեամբ, որոնք պէտք է ասած, չեն խնայել ոչ մի ջանք և իրենց կողմից նպաստել են ու տեղեկութիւններ տւել։ Ինչպէս և նախկին տարիները, նպաստներն ուղարկւել են ճիւղերիս վարչութեանց միջոցով. ուսուցիչ-ուսուցչուհիների մեծ մասը ունեն հարկաւոր պատրաստութիւն (ցենզ)

նրանցից մի քանիսը միայն հանգամանքներից ստիպւած բացառութիւն են կազմում, թէև դրանք բոլորն էլ ունեն երկարամեայ փորձառութիւն։

Որովհետև դպրոցներից մեծ մասը գտնւում են այնպիսի վայրերում, ուր չըկայ փոստային հաղորդակցութիւն, այդ պատճառով էլ տեղեկութիւնները ստացւում են անկանոն և անժամանակ։

1912 թ. ընթացքում ընկերութիւնը թէ իր միջոցներից և թէ մի շարք նւիրատուների նւիրած գումարներով նպաստել է հետեւեալ դպրոցներին, այսպէս՝—

Պ. Տիգրան Աֆրիկեանի նւիրաբերած 5300 ր. գումարով

Ալէքսանդրապօլի շրջանի		Նորաշէն գիւղի դպրոցին		300 ր.
»	»	Մեծ Քափանակ	»	200 ր.
»	»	Մեծ Քէյթի	»	300 ր.
Նոր Բայազէտի	»	Փաշաքենդ	»	200 ր.
»	»	Սօլակ	»	200 ր.
»	»	Զիբուխլի	»	400 ր.
»	»	Օրդակլու	»	200 ր.
»	»	Ներքին Ախտա	»	250 ր.
»	»	Դդմաշէն	»	200 ր.
»	»	Ողդամալ	»	350 ր.
»	»	Նորադուզ	»	300 ր.
Վաղարշապատի	»	Կարբի գիւղի դպրոցին		500 ր.
»	»	Բազարճիւղ	»	500 ր.
»	»	Ղարաքիլիսա	»	300 ր.
»	»	Սագլու	»	250 ր.
»	»	Տամըշլու	»	200 ր.
»	»	Հանավանք	»	200 ր.
Ախալքալաքի	»	Սուլդա գիւղի	»	150 ր.
Շարուր-Դարալագեազի շրջանի Էրդափին			»	300 ր.
				5300 ր.

Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդից 1912 թ. ընթացքում ստացւած 2667 ր. գումարով (մինչև 1912 թ. մայիսի 31-ը, իսկ այնուհետև շարունակւել է ընկերութեան միջոցներից)

Արդվինի շրջանի	Տանձոտ գիւղի դպրոցին	150 ր.
Ախալքալաքի »	Գիւմբուրդա »	200 ր.
» »	Մամզարա »	200 ր.
» »	Տիլիֆ »	200 ր.
Ախալցխայի »	Տամալա »	200 ր.
» »	Ծուղրութ »	200 ր.
Ալէքսանդրապոլի շրջանի	Զորլի »	200 ր.
Դուշէթի շրջանի	Դուշէթ քաղաքի »	200 ր.
Կարսի »	Մաւրակ գիւղի »	250 ր.
» »	Փիրուալի »	250 ր.
» »	Բաշ Քեադիկլար »	200 ր.
» »	Զարդանէս գիւղի »	200 ր.
» »	Քիւրակ-Դարա »	200 ր.
Քութայիսի »	Սաչխէր գիւղի »	200 ր.
» »	Ջխար » »	250 ր.
Փոթւայ »	Փոթի քաղաքի »	100 ր.
Օլթւայ »	Օլթի գիւղաքաղ. »	200 ր.
Լոռւայ »	Գիւլագարակ գիւղի դպ.	200 ր.
Երեւանի »	Բաշ » »	200 ր.
Աստրախանի »	Ղարաջալիլ » »	200 ր.
Քարվանսարայի »	Սոփ » »	150 ր.
		4150 ր.

Պ. Գասպար Տէր-Մարգարեանից—1800 ր. Զանգեզուրի գաւառի Շրվէնանց գիւղի դպրոցի համար։

Պ. Յովհաննէս Ալիխանեանից—100 ր. Քարվանսարայի շրջանի Աչաջուր գիւղի դպրոցի համար։

Պ. Միքայէլ Ալիբէկեանից—300 ր. Քախուրելի գիւղի դպրոցի համար։

Յովհաննէս ա. ք. Գալստեանի՝ ընկ. նուիրաբերած Գօրւայ գաւառի Ախալքալաք գիւղի կալուածի տարեկան հասոյթից 600 ր. նըպաստում է Ախալքալաք գիւղի դպրոցին։

Պ. Սամսոն Յարութիւնեանից—250 ր. Ղազախի շրջանի Վերին Աղդան գիւղի դպրոցի համար։

Հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի նուիրած գումարի տոկոսներով՝ 855 ր. նպաստել է՝

Քարվանսարայի շրջանի	Ուզուն Թալա գիւղի դպրոցին	100 ր.
» »	Սև Քարի » »	100 ր.
» »	Թալա » »	100 ր.
» »	Քարվանսարա » »	100 ր.
» »	Գօշավանք » »	200 ր.
» »	Բարանա » »	200 ր.
		800 ր.

Հանգուցեալ Աղէքսանդր Անանեանի նուիրած գումարի տոկոսներով՝ 1334 ր. 75 կ. նպաստել է՝

Ղազախի շրջանի	Թովուզ գիւղի դպրոցին	100 ր.
» »	Ղազախ քաղաքի »	100 ր.
» »	Ղալաչա գիւղի »	100 ր.
» »	Ներքին Կարմիր Աղբիւրի դպ.	200 ր.
» »	Թաթլու գիւղի դպրոցին	200 ր.
Արդահանի »	Արդահան քաղաքի »	100 ր.
Գանձակի »	Կոբինապատ գիւղի »	200 ր.
» »	Ղարաբուլաղ » »	200 ր.
Յարսկիէ Կոլօդցի աւանի	»	100 ր.
		1300 ր.

Հանգուցեալ Եղիա Բուդաղեանի նուիրած գումարի տոկոսներով 505 ր. 40 կ. նպաստել է՝

Թիֆլիսի շրջանի	Մուխրան գիւղի դպրոցին	200 ր.
Ծալկայի »	Դաշ-Բաշ » »	300 ր.
		500 ր.

«Իշխ. Արղութեան-Երկայնաբազուկների» Սանահնի դպրոցին

Իշխանուհի Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկից	590 ր. 74 կ.
Իշխան Բ. Ն. Արղութեան-Երկայնաբազուկից	300 ր. —
Դաւիթ և Նոա Անանեաններից	75 ր. —
Կալուածքի կապալավարձից	87 ր. —
	1052 ր. 74 կ.
Իշխան Բ. Ն. Արղութեան-Երկայնաբազուկից գործագործական արհեստանոցի համար	300 ր. —
	1352 ր. 74 կ.

Բացի վերոյիշեալ յատկացրած նպաստներից Ընկ. ճիւղերն եւ իրենց կողմից յատկացրել են և նպաստել իրենց միջոցներից թէ տեղական և թէ շրջանի դպրոցներին, սրանց աշակերտ աշակերտուհիներին և թէ դպրոցական շինութիւնների համար որոշ գումարներ ընդամէնը 8862 ր. 99 կոպ. Այսպէս Ընկ. Ախալքալակի ճիւղը տուել է տեղական նորակառոյց դպրոցական շէնքի համար—200 ր., ուսումնառուներին նպաստ—88 ր.—50 կ., նոյն դպրոցի գրադարանների գրքերի - 40 ր., շրջանի գիւղերի դպրոցներին կից գրադարաններին լրագրների և պարտքի հատուցման—96 ր.—66 կ., Մոզդոկի ճիւղը՝ գրադարան ընթերցարանին նպաստ—339 ր.—79 կ., տեղական Հ. Եկ. Ծխ. դպրոցին—169 ր.—75 կ., Վլադիկաւկազի ճիւղը նպաստել է տեղական դպ. 350 ր., հանգ. Վեհափառ կաթողիկոս Հայրիկի անուան թոշակաւորներին—50 ր., Հանգուցեալ Արիստակէս արքեպ. Սեդրակեանի անուան թոշակաւորներին 66 ր.—ուսումնավարձ աղքատ աշակերտներին—249 ր. 75 կ. տեղ. դպրոցի աշակերտներին կօշիկ, դասական առարկաների—16 ր. 19 կ. Բաթումի ճիւղը նպաստել է տեղական դպրոցներին և աղքատ աշակերտներին—495 ր. Քարվանսարայի ճիւղը նպաստել է տեղական դպրոցներին—19 ր. 20 կ. փորձնական դասերի ուսուցչ. ժող. 10 ր., Դուշէթի ճիւղը—տեղական դպրոցին—70 ր. չքաւոր աշակերտներին հագուստ և գրքերի—25 ր., Ցարսկիէ Կօլոդցի ճիւղը տեղական դպրոցին 75 ր. գրադարան ընթերցարանին լրագիրների, գրքերի 42 ր. 06 կ. չքաւոր աշակերտներին գրքերի—1 ր. 40 կ. Եկատերինոդարի ճիւղը նպաստել է տեղական եկ. ծխ. դպրոցին—725 ր., համալսարաններում ուսանողներին թոշակադրամով—1433 ր.—35 կ. չքաւոր աշակերտների համար կօշիկների—58 ր. 30 կ. Սուրամի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—64 ր. Սուլդայի ճիւղը դպրոցին կից գրադարան ընթերցարանի գրքերի և լրագիրների համար—52 ր. չքաւոր աշակերտներին հագուստ և թոշակադրամ 6 ր 25 կ. Արդահանի ճիւղը տեղական եկ. ծխ. դպրոցին նպաստ—300 ր., Թելաւի ճիւղը Ս. Գայիանեան և Վարդանեան հայոց ծխ. դպրոցի 5 չքաւոր աշակերտներին թոշակավարձ—60 ր. Իգդիրի ճիւղը նպաստել է չքաւոր աշակերտներին—73 ր. 66 կ. Ղազախի ճիւղը՝ տեղական դպրոցի վրայ ծախսել է—108 ր. 50 կ. դպրոցի համար լրագիրների և գրադարանի համար գրքերի—13 ր. 20 կ. Ղուբայի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—30 ր., չքաւոր աշակերտների թոշակավարձ- 54 ր., Վերին Ագու-

լիսի ճիւղը նպաստել է չքաւոր աշակերտ աշակերտուհիներին հագուստեղէն գնելու համար—33 ր. 18 կ., Ախալցխայի ճիւղը շրջանի գիւղերի դպրոցներին նպաստ—25 ր., ուսումնառուներին—70 ր., Լագոդախի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—100 ր. Ջխարի ճիւղը ծախսել է դպրոցական նոր շինութեան համար—747 ր. 22 կ. դպրոցական տան վարձի—40 ր., չքաւոր աշակերտ աշակերտուհիներին նպաստ—16 ր., Նովորոսսիյսկի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—200 ր., չքաւոր աշակերտներին նպաստ և թոշակադրամ—52 ր. 50 կ., Զաքաթալայի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին 340 ր. 61 կ. Օլթւայ ճիւղը տեղական դպրոցին—60 ր. դպրոցի գրադարանի համար թերթեր—25ր., Շամշադին գիւղի ճիւղը նպաստել է տեղական դպրոցի չքաւոր աշակերտներին—30 ր. Պեատիգորսկի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—225 ր., դպրոցի գրադարանին գրքերի—30 ր. չքաւոր աշակերտներին—75 ր., Շուշւայ ճիւղը նպաստել է «Ագուլեաց» դպրոցին—440 ր., չքաւոր աշակերտներին թոշակադրամով—90 ր., Երևանի ճիւղը նպաստել է տեղական դպրոցներին—150 ր., ուսումնառուներին—300 ր., Նոր-Բայազէտի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին 31 ր. 17 կ., Քութայիսի ճիւղը նպաստել է շրջանի Սաչխեր գիւղի դպրոցին - 95 ր., 83 կ., չքաւոր աշակերտների ուսման վճար հագուստեղէնի 183 ր. 92 կ. Նուխւայ ճիւղը նպաստել է չքաւոր աշակերտներին թոշակադրամով 120 ր.

Ընդամենը Ընկերութիւնը իր ճիւղերով նպաստում է դպրոցներին 25315 ր. 73 կ.

Գրագիտութիւնը գիւղերում տարածելու նպատակաւ և դպրոցների սաներին ընթերցանութեան նիւթ տալու համար, խորհուրդը աշխատել է ամեն մի դպրոցին կից հիմնել գրադարաններ, ուր կարիք է զգացուել ուղարկել է և դեղատներ:

Ի նկատի ունենալով, որ խորհուրդը նպաստ նշանակելիս պայմանաւորում է, չեղած տեղերում, դպրոցական սեփական շէնքեր կառուցելը, այս տարի նոր դպրոցական շէնքեր են շինել և մօտ են վերջանալու Դաշ-Բաշ և Բարանա գիւղերում:

1912 թւին նպաստ ստացող դպրոցների ուսուցիչները ստացել են 250 մինչև 600 ր. ռոճիկ, համարեա բոլորն է պատրաստի բնակարանով, ծառայով և վառելիքով. դպրոցները ունեցել են հետևեալ պատկերն.—

ՑՈՒՑԱԿ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՆՊԱՍՏՈՎ ՊԱՀՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1912/13 ՈՒՍ. ՏԱՐՒԱՑ

Նպաստ ստացող գիւղերի և քաղաքների անունները	Կ. Հ. Բ. Ը. տուած. նպաստի քանակը ռուբ.	Դպրոցական բաժանմունքները	Դասատուների թիւը: Ուսուցիչ	Դասատուների թիւը: Ու-չհի	Սովորողների թիւը: Աշակերտ.	Սովորողների թիւը: Աշակ-տուհի	Գրադարան ունի	Տնօրէնի բնակարան ունի	Գիւղը քանի տուն է	Դպրոցի շէնքը սեփական է, թէ վարձու
I Կենտրոն										
1. Մուխրան	200	I-II-III-IV	—	1	10	17	չունի	չուն.	300	սեփ.
2. Գիւլագարակ (Լօռւայ շրջան)	200	I-II-III	1	1	49	15	„	„	216	վարձ.
II Ախալցխայի ճիւղ										
3. Տամալա	200	I-II-III	—	1	24	16	ունի	—	—	սեփ.
4. Ծուղրութ	200	I-II-III	1	1	20	30	„	—	130	„
III. Ախալքալակի ճիւղ										
5. Գիւմբուրդա	200	I-II-III	1	—	40	4	ունի	—	210	վարձ.
6. Մամզարա	200	I-II-III	1	—	40	4	„	—	95	սեփ.
7. Տիլիֆ	200	I-II-III	1	—	50	2	„	—	100	վարձ.
8. Սուլդա	150	I-II-III	1	1	60	5	„	-	250	„
IV Ալէքսանդրապոլի ճ.										
9. Մեծ-Քափանակ	200	I-II-III-IV	—	1	44	5	—	—	360	„
10. Նորաշէն	300	I-II-III-IV	2	—	51	9	ունի	—	150	սեփ.
11. Զորլի	200	I-II-III-IV	1	—	38	2	—	—	120	„
12. Մեծ-Քէյթի	300	I-II-III	1	—	45	—	—	—	130	չունի
V Արդահանի ճիւղ										
13. Արդահան	100	I-II-III	2	1	65	60	ունի	—	200	վարձ.
VI Արդուինի ճիւղ										
14. Տանձուտ	150	I-II-III	2	—	46	28	„	—	115	սեփ.
VII Գանձակի ճիւղ										
15 Կարինապատ	200	I-II-III	1	1	50	60	„	ունի	-	„
16 Ղարաբուլաղ	200	I-II-III	1	—	33	—	„	„	—	„
VIII Գօրուայ ճիւղ										
17 Ախալքալակ	600	I-II-III.IV	2	1	21	24	—	—	400	„
18. Քախուրբէլի	300	I-II-III	—	1	18	22	չունի	չուն.	180	սեփ.
IX Դուշէթի ճիւղ										
19. Դուշէթ	200	I-II-III	1	1	32	—	—	—	97	—
X Կարսի ճիւղ										
20. Բաշ-Բեադլիկլար	200	I-II-III-IV	2	—	51	9	ունի	չուն.	173	սեփ.
21. Ջարդանէս	200	I-II-III	1	—	22	8	չունի	—	20	„
22. Մաւրակ	250	I-II-III	1	—	60	1	—	—	70	վարձ.
23. Փիրուալի	250	I-II-III-IV	2	—	59	6	ունի	—	150	սեփ.
24. Բուրակ-Դարա	200	I-II-III	1	—	60	4	չունի	—	164	„
XI Աստրախանի շրջան										
25. Ղարաջալիլ	200	I-II-III	2	—	39	15	—	—	120	„
XII Ղազախի ճիւղ										
26. Բարանա	200	I-II	1	-	37	6	—	—	200	
27. Թովուզ	100	I-II-III-IV	2	—	45	7	—	—	250	„
28. Ղազախ	100	I-II	1	—	27	18	ունի	—	150	„
29. Ղալաչա	100	I-II-III	1	—	35	—	չունի	—	180	ձրի
30. Ներքին-Կարմիր Աղբիւր	200	I-II-III	1	—	30	5	—	—	130	„
31. Թաթլու	200	I-II-III	1	—	38	2	ունի	—	160	վարձ.
XIII Նոր-Բայազէտի ճ.										
32. Դդմաշէն	200	I-II-III	1	—	40	—	չունի	ունի	291	վարձ.
33. Նորադուզ	300	I-II-III	2	—	72	11	—	—	516	սեփ.
34. Ներքին Ախտա	250	I-II-III-IV	2	—	85	15	—	—	325	„
35. Ջիբուխլի	400	I-II-III	—	1	47	3	—	ունի	297	վարձ.
36. Ենդամալ	350	I-II-III	1	1	60	11	—	..	369	սեփ.
37. Սօլակ	200	I-II-III-IV	1	—	50	—	—	չուն	206	վարձ.
38. Փաշաքենտ	200	I-II-III	2	—	69	11	—	—	430	սեփ.
39, Օրդակլու	200	I-II-III-IV	—	1	34	3	—	—	251	վարձ.
XIV Վաղարշապ. ճ.										
40. Բազարճիւղ *)	500	I-II-III								
41. Կարբի *)	500	I-II-III								
42. Սագլու *)	250	II-III								
43. Ղարաքիլիսա *)	300	II-III								
44. Տամբչլու *)	200	I-II-III								
45. Հանավանք *)	200	I-II								

*) Այս գիւղերի դպրոցներից տեղեկութիւն չէ ստացուած:

	Կ. Հ. Բ. Ը. տրամադրած նպաստի քանակը (ռուբ.)	Դպրոցների բաժանմունքները	Դասատուների թիւը: Ուսուցիչ	Դասատուների թիւը: Ու-չհի	Սովորողների թիւը: Աշակերտ	Սովորողների թիւը: Աշակ-ուհի	Գրադարան ունի	Տնային դեղարան ունի	Գիւղը քանի տուն է	Դպրոցի շէնքը վարձովի՞, թէ սեփական
XV Ջխարի ձիւղ										
46. Ջխար	250	I-II-III	1	—	20	30	ունի	—	80	սեփ.
XVI Փորում ձիւղ										
47. Փոթի	100	I-II-III	—	2	13	14	„	—	40	„
XVII Ցարսկ. կոլոդց. ձ.										
48. Ցարսկիէ Կոլոդցի . .	100	I-II-III	1	—	10	11	„	—	30	„
XVIII Քարվանսար. ձ.										
49. Աչաջուր	100	I-II-III	1	—	40	8	չունի	—	350	„
50. Ուզունթալա	100	I-II-III	1	—	40	11	—	—	330	վարձ.
51. Սև-Քար	100	I-II-III-IV	1	1	72	28	ունի	—	460	սեփ.
52. Վերին Աղդան . . .	250	I-II-III-IV-V	3	1	80	25	„	ունի	280	„
53. Թալա	100	I-II-III	—	1	24	10	չունի	չուն.	100	վարձ.
54. Սոփ Գիւղ	150	I-II-III	1	—	40	12	ունի	—	140	„
55. Քարվանսարա . . .	100	I-II-III-IV	2	1	112	25	„	—	360	սեփ.
56. Գոշավանք	200	I-II	—	1	27	9	չունի	—	55	„
XIX Քուրայիսի ձիւղ										
57. Սաչխէր	200	I-II	1	—	12	10	ունի	չուն.	65	„
XX Օլթուայ ձիւղ										
58. Օլթի	200	I-II-III	2	1	43	52	—	—	—	
59 Բաշ գիւղ	200	I-II-III	1	—	53	7	ունի	—	—	
XXI Ծալկայի շրջան										
60. Դաշբաշ	300	I-II-III	1	—	25	6	—	—	100	վարձ.
«Գ. Ի. Տէր-Մարգարեանի դպրոց»										
61. Շրվենանց գիւղ . . .	1800	I-II-III-IV	2	1	125	23	ունի	ունի	50	սեփ.
„Իշխ. Արղութեան Երկայնաբազուկների“ դպ.										
62. Սանահին գիւղում . .	1352-74 կ.	I-II-III	—	2	57	20	„	ունի	70	սեփ.
IVXX Շարուր-Դարալագեազի շրջան										
63. Երզափին գիւղ . . .	800	I-II-III-IV	1	—	26	8	չունի	չուն.	86	վարձ.

1912 ԹՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ ՍՏԱՑԵԼ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Ցօգուտ Ընկ. ընդհանուր կարիքների

Տիկին Մարիամ Կուսիկեանից . .	5	—
Միքայէլ Կաֆեանից . . .	5	—
Կարապետ Կարապետեանից . .	5	—
Գրիգոր Ոսկանեանից . . .	20	—
Տիկին Մ արգարիտ Աբեանից . .	50	—
Մկ. Ոսկանեանի միջոցով մի խումբ տիկիններից և պարոններից . .	4	33
Դաւիթ Ալան Իսպրաչեանից . .	25	—
Տիկին Սոֆիա Սունդուկեանից ի յիշատակ հանգուցեալ Գաբրիէլ Սունդուկեանի	100	—
Յովսէփ Տէր-Յովսէփեանից ի յիշատակ իր որդի Գարեգինի . . .	10	—
Մի պարոնից . . .	2	—
Հայրապետ Պօղոսեանից . . .	5	—
Խաչատուր Ղալէչեանից . .	3	—
Եգոր Ջանազովի միջոցով ի յիշատակ հանգուցեալ Պաւել Շաղինովի . .	25	—
«Ընկեր» շաբաթ. միջոցով Ղազախի շրջանի սովեալ գիւղացիների օգտին .	4	90
Աւ. Պօղոսեանի միջոցով, Վարդան Պօղոսեանից	5	—
Նատալիա Խաչատրեանի միջոցով հանգուցեալ Մարիամ Խուդադեանի կտակածը . .	1000	—
Վիսօցկի և Ընկ. ֆիրմայից ի յիշատակ հան. գուցեալ Տ. Սէյլանեանի. .	25	—
Բալլէ և Ընկ. » » » .	10	—
Ի. Լ. Լևինից » » » .	3	50
Մարիամ Փրիդոնեանից » » .	25	—
Տիկ. Վարվ. Օրբելուց . . .	1	—
Թիֆլիսի ժողովարանից . . .	100	—

Ներսէս Աբէլեանից	3	—
Մնացական Խունունցից	10	—
Ինժ. Գարեգին Ալաճեանից	20	—
Քերովբէ Պատկանեանից հանգուցեալ Ռ. Պատկանեանի վաճ. գրքերի արդիւնքը	112	44
	1579	17

Շուշանիկ Բայանդուրեանից 1 արծաթեայ պսակ։

Բ. Օգնուտ ճաշարանի

Օր. Նունէ Սերեբրյակեանից	33	18
Եղբ. Օէյլանեանների գործարանի բանւորներից ի յիշ. իրանց ընկ. Ա. Ռօմանովայի	15	—
Թաղիէվից	33	60
Մի ոմնից	1	—
Եղբ. Յ. և Ս. Բաղդասարեաններից.	50	—
Ստ. Եարղուլեանից ի յիշատակ իր հանգ. ամուսին Հ. Եարղուլեանի.	50	—
Վարվ. Մատինեանից ի յիշատակ հանգուցեալ Գր. Ք. Մատինեանի	15	—
Իվ. Սերգ. Ալիխանեանից.	50	—
Սարգ. Յարութիւնեանից ի յիշատակ իր հանգուցեալ եղբօր	25	—
Օլիա Փխակաձէից	—	65
Մելիք-Կարագեօզեանից ի յիշատակ հանգուցեալ Մուսաբէգ. Մ.-Կարագեօզեանի.	100	—
Գր. Գեր. Կուզանով ֆիրմայից	25	—
Թիֆլիսի Ժողովարանից	900	—
Ս. Բ. և Տ. Մ ից	10	—
Իվան Քամոյեանից ի յիշատ. իր հանգ. ամուս.	150	—
Ստեփան Խաչիկեանից ի յիշատակ հանգ. Մարիամ Խաչիկեանի	10	—
Բժ. Միք. Շահ-Պարոնեանից	5	—
Եղբ. Բօզարջեաններից ի յիշատակ իրենց հանգուցեալ մօր	200	—

Ղևոնդ Յակովբեանից ի յիշատակ հանգուցեալ Յար. Շահբազեանի	5	—
Արամ Շահբազեանից » » »	5	—
Վասիլ Իւզբաշեանից » » »	5	—
Պարոն Թումանեանից	5	—
Միք. Ղազարեանից ի յիշատակ հանգուցեալ Յակ. Յարութիւնեանի	25	—
Եղբ. Կաֆեաններից ի յիշատակ իրանց մօր	25	—
Օր. Աննա և Մանէ Հախվերդեաններից ի յիշատակ հանգուցեալ Յ. Հախվերդեանի.	15	—
Եղբ. Պապայեաններից ի յիշատակ իրանց մօր Օվս. Պապայեանի	25	—
Հայր. Տէր-Պօղոսեանից ի յիշ. Օվս. Պապայեանի	10	—
Տիկին Ան. Յարութիւնեանից ի յիշատակ իր քոյր Մակա Յարութիւնեանի	10	—
Սիր. Շահվերդեանից և Ռ. ու Ա. Խաչատրեաններից ի յիշատակ Մկ. Խաչատրեանի	50	—
Տիկին Մար. Կիւլպէնկեանից	5	—
Հանգ. Աննա Մանթաշեանի թոռներից	50	—
Արշակ Կուտոնից ի յիշատակ իր մօր	100	—
Տիկին Շուշանիկ Մխիթարեանից	4	20
	2022	63

Տիկին Սիլիկեանից 20 հատ ջրի աման։
Հաջի Զէյնալ Աբդին Թաղիէվից 10 փ. ձուկն։
«Կուր-Արաքս» ընկերութիւնից 6 փ. 12 գր. ձուկն։

Գ. Օգնուտ որբանոցի

Տիկ. Եղիս. Յարութիւնեանից ի յիշատակ իր ամուսնու՝ Աս. Յարութիւնեանի	10	—
Հռիփս. Նաջարեանից որբ Էմմայի համար	180	—
Վարդուհի, Գրիգոր բէկ և Արշակ բէգ Մելիք-Կարագեօզեաններից ի յիշ. Մ.-Կարագեօզեանի	25	—
Գր. Գեր. Կուզանով ֆիրմայից	25	—
Աւ. Սարուխանեանից ի յիշ. իր հանգ. ամուսնու	25	—

Տիկին Թումանեանից . . .	5 —
Կարապետ Իլայեանից ի յիշ. իր Յարութիւն որդու	20 —
Տ. տ. Կատարինէ Քեանդարեանից և Եղիս. Իշխանեանից ի յիշ. իրանց հանգուցեալ մօր, յօգուտ երգեցիկ խմբի . .	50 —
Սերաֆիմ Պատկանեանից իր տատի յիշատակին	15 —
	355 ր.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԵՐԸ

Թէ որպիսի գործունէութիւն են ցոյց տուել ընկերութեանս ճիւղերը գաւառներում, առաջ ենք բերում նրանց դրամական և ընդհանուր գործունէութեան հետևեալ պատկերը։

Ախալքալաքի ճիւղի Վարչութիւնը իր անցեալ 1912 թ. գործունէութիւնը գլխաւորապէս կենտրոնացրել է կուլտուրական սկզբունքների վրայ, ի նկատի առնելով այն համատարած մտաւոր ծարաւը որ տիրած է շրջանի հասարակութեան վրայ։ Խաւար մասսային մտաւոր սնունդ մատակարարելու գործը, մի փոքրիկ գաւառական քաղաքում, կարող ուժերի սակաւութեան պատճառով,—անչափ դժւարութիւններ է ստեղծել և պահանջ կապել՝ գործը կանոնաւոր կերպով առաջ տանելու համար։ Վարչութիւնը քաջ ըմբռնելով Ընկերութեան վեհ նպատակը և այն անուրանալի ձգտումը, որ շօշափում է իր ծրագրի մէջ,—իր ուժերը մեծ չափով նւիրել է՝ օգնելու հասարակութեան ոչ միայն նիւթապէս, այլ և բարոյապէս. սերմանել հասարակութեան ազնիւ ձգտումներ և ինքնուրոյն աշխատանքի գաղափարը, որը հնարաւորութիւն կ'ստեղծէ ընկերութեան համար, իր դրամական միջոցները ամբողջ թափով նւիրել կուլտուրական գործերի։ Սակայն, քանի որ դեռ չի վերացել մեր գաւառից խաւարի և տգիտութեան սև քողը և մեր ժողովուրդն դեռ խարխափում է «անբախտութեան» ճիրանների մէջ,—Ընկերութիւնը դեռ պարտք ունի ըր վրայ՝ մասնակի օգնութիւն հասցնել կարևոր պարագաներում, չըկասեցնելու օգնող անհատների ուշադրութիւնը։

4. Աղքատներին և կարօտեալներին	296	63
5. Ուսուցչական ձրի հանրակացարանի ծախք	90	55
6. Կովկ. Հայոց Հրատարակչական Ընկ.	15	00

7. Դիւանական ծախք	18	31		
8. 5% ֆոնդի 1911 և 1912 թ.	78	30		
9. Ծառային վարձատրութիւն	36	30	865	09
10. Ուսուցչական սանատ. ֆոնդին	254	19		
11. » » » միացորդի հետ	567	94	822	13
Մնացորդ առ 1-ն յունւար 1913 թ.			97	34
Ընդամենը			1784	56

1911 թ. ունեցել է մուտք	932	06
Ելք	900	66

Ծանօթ.։—Պեատիգորսկի ճիւղի կանխիկ դրամը յօգուտ Ուսուցչական սանատօրիայի ֆոնդի գումարաւ 822 ր. 13 կ. պահւում է Արքունական խնայողական գրամարկղում № 28466 գրքոյկով։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ—Աբրահամ քահ. Շխինեան. գանձապահ—Գէորգ Դօննիկեան. քարտուղար—Մելիտոս Մարգարեան. անդամներ—Յարութիւն Ադամեան, Գէորգ Սուքիասեան։ Փոխ-անդամներ—Մակար Գուրջեան և Խաչատուր Տէր Յարութիւնեան. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ—Զաքարեա Մելիք-Ամիրզադեան, Նիկողայոս Ռոստովանեան, Յարութիւն Թիթրեան։

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ

Յակովբ Էգիզլեր։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Աբրահամ քահ. Շխինեան	8 Զաքարեա Մելիք-Ամիրզադեան
2 Գէորգ Դօննիկեան	9 Յովսէփ Սվէշնիկեան
3 Մելիտոս Մարգարեան	10 Աղէքսանդր Մելիք-Սարգսեան
4 Գէորգ Սուքիասեան	11 Նիկողայոս Բաբայեան
5 Յարութիւն Ադամեան	12 Սարգիս Թիթրեանց
6 Մակար Գուրջեան	13 Լուսպարոն Շապաւալեան
7 Խաչատուր Տ.-Յարութիւնեան	14 Յարութիւն Թիթրեան

15 Յովակիմ Պապովեան
16 Иванъ Мазарисъ
17 Иванъ Францкевичъ
18 օր. Սարրա Չերնեան
19 Մատթէոս Զարուխչեան
20 Էմաննուէլ Խօջայեանց
21 Թադէոս Պոպովեան
22 Մանուկ Բչախչեան
23 Յակովբ Բելլէշագինեան
24 Կոստանդին Խազիզեան
25 Սիմէօն Շօրշօրեան
26 Սահակ Սահակեան
27 Յարութիւն Պօպովեան
28 բժ. Քերովբէ Դանջումեան
29 բժ. Աղէքսանդր Արուլեան
30 բժ. Միքայէլ Սափարեան
31 Գրիգոր Շիրվանբէկեան
32 Աստուածատուր Դանիէլեան
33 Դաւիթ Յակովբեան
34 Յովակիմ Ամիրեան
35 Սողոմոն Յակովբեան
36 Քրիստափոր Բաշինջաղեան
37 Հայկ Յովակիմեան
38 Հազարապետ Սուլխանեան
39 Սողոմոն Մկրտումեան
40 Յովհաննէս Արուստամեան
41 Յովհաննէս Ալթամանեան
42 Աղաբէկ Կարապետեան
43 Գրիգոր Աւետիսեան
44 տ. Եղիսաբէթ Խազիզեան
45 Մարտիրոս Դուրասանեան
46 Վարդան Սեփերեան
47 Անտօն Թամբեանց
48 բժ. Վահան Արծրունի
49 Մինաս Դուրջեան
50 բժ. Կարապետ Աղաջանեան
51 Խաչատուր Պօպովեան
52 բժ. Ռուբէն Կոստանեան
53 Եղիա Թասալեան
54 Մկրտիչ Սեմերեան
55 Աղէքսանդր Յարութիւնեան
56 Մովսէս Ալթայեան
57 Գէորգ Բայեան
58 Ղուկաս Աւագեան—Զօրայեան
59 Նիկողայոս Ռոստովանեան
60 Գէորգ Խօջայեան
61 Մկրտիչ Խօջայեան
62 Մկրտիչ Եւանգուլեան
63 Մարտիրոս Կոստանդեան
64 Գէորգ Ասլամազեան
65 Սարգիս Կաստանայեան
66 Լեոն Վարազեան
67 Յովակիմ Խազիզեան
68 Սողոմոն Նաւասարդեան

Աղնախի ճիւղ վարչութիւնը տարւայ ընթացքում ունեցել է 11 ժողով, որից 3-ը ընդհանուր և 8-ը վարչական։ Տւել է յօգուտ ճիւղի երկու երեկոյթ։

Մ Ո Ւ Տ Ք

1. Մուտք առ 1 Ն յունւար 1912			286	90
2. Անդամակցական վճարներ «54» հոգուց	162	—		
3. Նւէր Գրիգոր Մելիք-Նուբարեանից	1	—		
4. Երեկոյթներից	180	47		
5. Կար ու ձևի դպրոցից	56	90		
6. Թոշակադրամներից	117	—		
7. Տան քրէհը	17	20	543	57
Ընդամենը			821	47

Ե Լ Ք

1. Նպաստ կար ու ձևի դպրոցին	690	67		
2. Դիւանական ծախս	13	71		
3. 5°/₀ ֆօնդին	30	—	734	38
4. Առ 1-ն յունւար 1913 թւի մնում է առ ձեռն փող			87	09
Ընդամենը			821	47

Դրանից 75 րուբլի 40 կոպէկը գանւում է տեղական պետական գանձարանի խնայողական դրամարկղում № 4464 գրքոյկով, իսկ 11 ր. 69 կոպէկը վարչութեան գանձապահի մօտ ընթացիկ ծախսերի համար։

1911 թ. եղել է մուտք	549	18
Ելք	263	90

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ վարչութեան - Յարութիւն քահ. Տէր Նիկողոսեանց քարտուղար—Յակովբ Սահակեանց. գանձապահ—Աղէքսանդր Աւագեանց. անդամներ—Տ. Նատալիա Ամիրխանեանց, բժիշկ Գէորգ Օհանեանց և Միքայէլ Տէր Ստեփանեանց։ Փոխանդամներ—Քրիստափոր Փարեմուզեանց և Յակովբ Սահակեանց։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ—Քրիստափոր Տէր Աստուածատրեանց և Նիկողայոս Ամիրխանեանց։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Ամիրխանեանց Նիկողայոս
2 Ամիրխանեանց Նատալիա
3 Ամիրխանեանց Եղիսաբէթ
4 Ապոզեանց Մելքոն
5 Արարատեանց Ռուբէն
6 Աւագեանց Աղէքսանդր
7 Բաշինջաղեանց Խաչատուր
8 Գոմելաուրեանց Բագրատ
9 Եղիգարեանց Զաքարեա
10 Ենիկոլոփեանց Վարդան
11 Ելիսբարեանց Աղէքսանդր
12 Զաքարեանց Սիմէօն
13 Խատեանց Արշակ
14 Խէչոյեանց Գասպար
15 Կիկօլեանց Նիկողայոս
16 Հայրապետեանց Նիկողայոս
17 Հասրաթեանց Ստեփաննոս
18 Ղաջարդուզեանց Աղէքսանդր
19 Ղոնեանց Սարգիս
20 Մատինեանց Սարգիս
21 Մարկիեց Սալման
22 Յարութիւնեանց Լեւոն
23 Յարութիւնեանց Նիկողայոս
24 Յակովբեանց Գէորգ
25 Յակովբեանց Արշակ
26 Յովսէփեանց Սարգիս Միքա-յէլեան
27 Յովսէփեանց Նիկողայոս
28 Յովսէփեանց Սարգիս Մկրտու-մեան
29 Շելկովնիկեանց Նունէ
30 Չիդինեանց Աղէքսանդր
31 Պապայեանց Գէորգ
32 Պետրոսեանց Գէորգ
33 Պետրոսեանց Գրիգոր
34 Սաղեանց Արտէմ
35 Սաամեանց Միքայէլ
36 Սահակեանց Յակովբ
37 Սարգսեանց Աննա
38 Սարգսեանց Գուլամբար
39 Սարգսեանց Յովհաննէս
40 Սարգսեանց Գէորգ
41 Սարգսեանց Սարգիս
42 Սլդրեանց Մարտիրոս
43 Սուլխանեանց Աննա
44 Վարդանեանց Գէորգ
45 Տէր Աստուածատրեանց Աստղիկ
46 Տէր Աստուածատրեանց Սրբուհի
47 Տէր Աստուածատրեանց Քրիս-տափոր
48 Տէր Դաւթեանց Մարիամ
49 Տէր Յովհաննիսեանց Գարեգին
50 Տէր Նիկողոսեանց Յարութիւն քահանայ
51 Տէր Ստեփանեանց Միքայէլ
52 Փարեմուզեանց Արշակ
53 Փարեմուզեանց Քրիստափոր
54 Օհանեանց Գէորգ բժիշկ։

Սուրամի շիւղ։ Վարչութիւնը նպաստել է իր միջոցներից տեղական հայոց եկեղ.-ծխական դպրոցին։

ՄՈՒՏՔ

32 անդամից անդամավճար — 64 ր.

ԵԼՔ

Նպաստ դրամով տեղական ծխ. դպրոցին — 64 ր.

1911 թ. մուտք ունեցել է — 80 ր.
Ելք » — 20 ր.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ—Միքայէլ Առիւծեան. գանձապահ—Յովսէփ քահ. Առիւծեան. քարտուղար—Յովհաննէս Դաւթեան. անդամներ—Վասիլ Զարէքեան, Գէորգ Մանուկեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Մելիքսեդէկ Լոտոյեան
2 Արտաշէս Լոտոյեան
3 Արշակ Շուղարեանց
4 Գէորգ Առիւծեան
5 Աբգար Առիւծեան
6 Արգար Լոտոյեան
7 Լեւոն Մամինեան
8 Արտէմ Երեմեան
9 Աբգար Ալլահվերդեան
10 Վասիլ Բէշկենեան
11 Գրիգոր Բուռնուսուզեան
12 Արշակ Առիւծեան
13 Գէորգ Յակոբեան
14 Գէորգ Փասոյեան
15 Սեդրաք Յակոբեան
16 Մկրտիչ Մուշոյեան
17 Մէքա Լոտոյեան
18 Մէքա Մելիքեան
19 Վասիլ Լոտոյեան
20 Ստեփան Յովհաննիսեան
21 Արամ Բէժանեան
22 Յովհաննէս Նազարեան Յակո-բեան
23 Յովհաննէս Գրիգորեան Յա-կոբեան
24 Աստուածատուր Տիժոյեան
25 Աղէքսանդր Փասոյեան
26 Գրիգոր Փասոյեան
27 Սարգիս Գրձելեան

Սուլղայի Ճիւղ։—Ճիւղը բացւել է 1912 թւին։ Վարչութեան գլխաւոր նպատակներից մէկն է եղել տարածել այս խաւար մասսայի մէջ ընթերցանութիւնը և այդ բանում նա յաջողութիւն է ունեցել, նպաստելով տեղի ծխ. դպրոցին 800-ի չափ գրքերով, որոնցից լայն չափով օգտւում է հասարակութիւնը և դպ. աշակերտութիւնը։

Գրադարանից օգտւողների թիւը օրէցօր շարունակում է մեծանալ, այնպէս որ վարչութիւնը որոշել է միւս տարւանից աշխատել ստանալու թոյլտւութիւն և աւելի լայն չափով օգտւելու։

Վարչութիւնը որոշել է 1913 թւին գնել մի սերգատ մեքենայ ժողովրդին ծանօթացնելու համար կաթնատնտեսութեան հետ։

ՄՈՒՏՔ

1. Անդամակցական վճար 20 հոգուց	40	—
2. «Աւետիս»-ից	28	83
3. Թատրոնից	5	14
Ընդամենը	73	97

ԵԼՔ

1. Ճիւղի նորաբաց գրադարան-ընթերց. համար գրքեր	30	—		
2. Գրքեր, կազմի	22	—		
3. Տեղի մի չքաւոր երեխայի հագուստ	2	—		
4. Տեղի ծխ. դպրոցի սովորող մի աշակերտի գրքերի և թոշակ	4	25		
5. Թատրոնի համար մի հաս. վարագոյր	5	—		
6. Դիւանական ծախս	3	50	66	65
7. Մնացորդ առ 1-ն յունւար 1913 թ.			7	22
Ընդամենը			73	97

Բացի վերոյիշեալ դրամական մուտքից վարչութիւնը ստացել է նաև հետևեալ նւէրները

1. Խորհրդից 352 կտոր գիրք 2. Յով. Մալխասեանից 152, 3. Տեղի ուսուցիչ Գ. Քիւրանեանի հաւաքած իրեն ընկերներից 90 կտոր գիրք 4. Աղասի Մալխասեանից 32, 5. Ստեփան Միհրոյեանից 24 6, Զանազան անձնաւորութիւններից 23 կտոր գիրք։ Ընդամենը 671 հայերէն և ռուսերէն գրքեր։

Ստացել է նաև տեղի դպրոցի անունով հետևեալ լրագրները։

1 Տիգրան Աֆրիկեանից մի օրինակ «Հորիզոն»,

2. «Մշակ»-ի խմբագրութիւնից (պ. Մկրտիչ Յովհաննիսեանի հաշւով) մի օրինակ «Մշակ»։

3. «Գիւղատնտես»-ի խմբագրութիւնից մի օրինակ «Գիւղատնտես»։

4. պ. Յով. Մալխասեանից մի օրինակ «Սուրհանդակ» (յետոյ երբ փակւեց Սուրհանդակի խմբագրութիւնից ստացւեց Խաթաբալա)։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ վարչութեան — Գերասիմ Քիւրանեան. քարտուղար — Յովակիմ Զանոյեան. գանձապահ—Խաչատուր Սիւքիասեան. անդամներ—Գէորգ Ֆարմանեան և Յակովբ Մալխասեան. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ. Գրիգոր Մնոյեան, Արիստակէս Տէր Աւետիսեան, Բարդուղիմէոս Յակովբեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Ապաճեան Մինաս
2 Օրիորդ Եղիազարեան Աննա (Երևան)
3 » Թոխեան Վարդանոյշ (Թիֆլիս)
4 տիկին Թումասեան Շողակաթ
5 » Կուճոյեան Անախաս
6 Մալխասեան Յակովբ
7 Մալխասեան Յովհաննէս
8 Մալխասեան Մարկոս
9 Մնոյեան Գրիգոր
10 Յակովբեան Բարդուղիմէոս
11 տիկ. Զանոյեան Փեփրոնէ
12 Զանոյեան Յովակիմ
13 Սիւքիասեան Խաչատուր
14 Վարդապետեան Ղևոնդ քահ. (Գենդուրա)
15 Վարդիկեան Պետրոս
16 Քիւրանեան Գերասիմ
17 Տէր Աւետիսեան Արիստակէս
18 Ֆարմանեան Գէորգ
19 տիկ. Ֆարմանեան Աղաւնի
20 Ֆարմանեան Յովհաննէս

Վերին Ագուլիսի ճիւղ։ 1908 թ. Կ. Հ. Բ. Ընկ.-ին կանոնադրութիւնը վերականգնելով, այդ թւականին է եղել նաև Վերին Ագուլիսում Կ. Հ. Բար. Ընկերութեան ճիւղ բանալու մտքի յղացումը, որը, իբրև հայութեան զգայուն ու բանիմաց վայրերից մէկը, չէր կարող չուրախանալ ու չըյափշտակւել իւր ժամանակի իղձերով ու իսկական յառաջադիմական քայլերով։

Ագուլիսում Կ. Հ. Բար. Ընկերութեան ճիւղ բանալու միտքն առաջին անգամ 1908 թւի սկզբին ծագել է պարոնայք Պետրոս Սարգսեան Պետրոսեանցի և Աւետիս Առաքելեան Ներսէսեանցի մէջ փոխադարձաբար, սակայն նրանց փափագն առ ժամ մնացել է թերի ու անկատար, որովհետև նախ պ. Ներսիսեան և ապա պ. Պետրոսեան անյետաձգելի գործերով զբաղւած շուտով մեկնել են Ագուլիսից, հակառակ իրանց կամքի, հնարաւորութիւն չունենալով իրական հողի վրայ դնելու իրանց փայփայած ջերմ ցանկութիւնը։

Պ. Պետրոսեան, այնուհետև, գործելով իր մօտիկ բարեկամների շրջանում, 9 հոգուց իբրև անդամակցական վճար ժողովում է 45 րուբլի և նոյն 1908 թ. ապրիլի 2-ին մի գրութիւնով յանձնում է Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդին, այն պայմանով, որ՝ երբ մինչև հինգ տարի Ագուլիսում ընկերութեան ճիւղ բացւի, այդ գումարը յանձնւի նորաբաց ճիւղի տեղական վարչութեան, հակառակ դէպքում՝ մնայ յօգուտ կենտրոնական վարչութեան։ Այսքանով և վերջանում են նոր գործի սկզբնաւորութեան առաջին անվստահ քայլերը։

Ստանալով խորհրդի թոյլտւութիւնը ճիւղի կազմակերպութեան և վարչութեան ընտրութեան համար նշանակւում է ընդհանուր ժողով։ Անցնում են տարիներ մինչև 1912 թւի ամառը, երբ նորից միտք է ծագում, հիմնելու ընկ. ճիւղը։ Որոշ պաշտօնական ձևականութիւնները կատարելուց յետոյ օգոստոսի 27-ին գումարւում է Կ. Հ. Բար. Ընկ. Վ.-Ագուլիսի ճիւղի անդրանիկ ընդհանուր ժողովը, համաձայն խորհրդի 27 յուլիսի, 1912 թ. № 971 պաշտօնական առաջադրութեան։

Այս ընդհանուր ժողովում, գաղտնի քւէարկութեամբ, տեղական վարչութեան անդամներ են ընտրւում.—1) Աւետիս Ա. Ներսիսեան, 2) Աղէքսանդր Ա. Տէրեան, 3) բժ. Բենեամին Եսայեան, 4) Մինաս Ն. Մարգարեան և 5) Պօղոս Յ. Ադամիրզեան, փոխանդամներ—1) տիկ. Գայանէ Ս. Քալանթարեան և 2) Գրիգոր Ղ. Ղազարեան։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ են ընտրւում—1) Յակոբ Տէր Յակոբեան, 2) Մինաս Նուսնուսեան և 3) Յովհաննէս Փանեան. անձնափոխանորդներ—Զաքարեա Ներսիսեան և Իւան Արասխանեան։

Իր առաջին հերթական նիստում վարչութիւնը, համաձայն ընկ. կանոնադրութեան § 59-ի, ընտրեց վարչութեան պաշտօնատար անձանց. նախագահ վարչութեան—Աւետիս Ներսիսեանին, փոխ-նախագահ—Աղէքսանդր Տէրեանին, քարտուղար – փոխ-անդամ Գրիգոր Ղազարեանին, ի նկատի ունենալով, որ վարչութեան կազմի մէջ չըկայ ձեռնհաս մէկը, որ կարողանայ փորձառու կերպով և աչալրջութեամբ վարել այդ պաշտօնը։ Գանձապահի պաշտօնն ևս վարչութիւնը բարւօք համարեց միացնել քարտուղարութեան և յանձնել նոյնպէս Գրիգոր Ղազարեանին։

Վարչութեան անդամներ Մինաս Մարգարեանի և Պօղոս Ադամիրզեանի ժամանակաւորապէս Ագուլիսից հեռանալու պատճառով վերջին եռամսեակում նրանց փոխարինեցին փոխ-անդամներ տիկ. Գայիանէ Քալանթարեան և Գրիգոր Ղազարեան։

Հաշւետարւայ ընթացքում վարչութիւնը ունեցել է չորս նիստ, գրեթէ միշտ լրիւ կազմով և երկու ընդհանուր ժողով՝ ընտրելու վարչութեան և հաստատելու 1912 և 1913 թւականների մուտքի և ելքի նախահաշիւները։

Գրադարան-ընթերցարան.—Իւրաքանչիւր ժողովրդի յառաջադիմութեան գործօններից ամենազօրեղն ու ազդուն գիրն ու գրականութիւնն է և ընթերցանութեան ու ինքնազարգացման տարածումը։

Այսպիսի նկատումներով էլ առաջին իսկ նիստից վարչութեան հոգացողութեան ու փայփայանքի գլխաւոր առարկան եղել է տեղումը գրադարան-ընթերցարան բանալու հաստատուն մտադրութիւնը, որպիսի միտքը, կարելի է ասել, ճիւղի բացման կամ սկզբնաւորութեան գաղափարի հետ անբաժան է եղել ու զուգաւորւած։ Գրադարան-ընթերցարան ունենալու կարիքը մեզ մօտ միշտ էլ հրամայական է եղել, աղաղակող ու միանգամայն անյետաձգելի մի անհրաժեշտութիւն։

Վարչական խորհրդի նոյեմբերի 7-ի նիստում այդ հարցը լուծւեց նրանով, որ վարչութեան նախագահ Աւետիս Ներսիսեան յանձնառու եղաւ ստանձնել պատասխանատու գրադարանապետի

պարտաւորութիւնը և անմիջապէս, նոյն հոկտ. 8-ին, վարչութիւնը խնդրագրով դիմեց Երևանի պ. Նահանգապետին—ձեռք բերելու պատշաճաւոր թոյլտուութիւնը։

Միաժամանակ բացւելիք գրադարան-ընթերցարանի համար սահմանեց վճարի հետևեալ կարգը։—Ճիւղի անդամների համար վճարը կլինի՝ տարեկան մէկ րուբլի, կամ ամսական տասը կոպէկ, ոչ-անդամների համար՝ տարեկան երկու րուբլի, կամ ամսական քսան կոպէկ. իսկ մուտքի վճար բոլոր յաճախողների համար անխտիր մէկական կոպէկ, իւրաքանչիւր անգամ։

Դեկտեմբերի 20-ին վարչութիւնը ստացաւ իր խնդրի գոհացուցիչ լուծումը։ Երևանի պ. Նահանգապետը 2 դեկտ. 1912 թ., №10977 վկայականով թոյլատրում է բանալ գրադարան-ընթերցարան։

Դեկտեմբերի 23-ից վարչութիւնը շտապեց գործի դիմել և նոյն օրն և եթ 1913 թւի համար—յունւարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մի մի օրինակ բաժանորդագրւել ստորև գրւած հայերէն և ռուսերէն պարբերական հրատարակութիւնների, իրանց բոլոր յաւելւածներով։

1. Արարատ	9. Հասկեր
2. Մշակ	10. Ազգագրական հանդէս
3. Հորիզոն	11. Кавказъ
4. Տարազ	12. Русское Слово
5. Աղբիւր	13. Искры
6. Խաթաբալա	14. Баку
7. Գիւղատնտես	15. Нива
8. Նոր-Առողջապահիկ	16. Вѣстникъ знанiя.

Ընթերցարանը բացւելու է 1913 թւի յունւարի 10-ից, իսկ գրադարանը՝ վարչութիւնը յոյս ունի բանալ գարնանից, երբ մինչև այդ պատրաստ կլինեն և վարձւելիք բնակարանը և բոլոր անհրաժեշտ յարմարութիւններն ու մատեանները։

Ճիւղի միջոցները։—Անվիճելի է այն հանգամանքը, որ իւրաքանչիւր հիմնարկութեան գործունէութիւնը բարեկարգ վիճակի մէջ դնելու և նրան օգտակար դարձնելու համար կարևոր է ձեռքի տակ ունենալ նաև մեծ գումար։ Նիւթական այդպիսի բարւօք վիճակի հասնելն ամենից աւելի զգալի է ու պահանջ յատկապէս նորաբաց հիմնարկութիւնների համար, որոնց գործն ու գործունէութիւնը հազիւ կարելի է համեմատել լեզւի կապանքներից նոր արձակւած

մանկան թօթովանքին։ Նոյն վիճակումն է և ճիւղը։ Նրա քառամսեայ գոյութիւնը հազիւ բաւական էր միայն նոր գործի հիմք դընելուն. իսկ նրա զարգացումն ու յառաջադիմութիւնը պէտք է սպասել ապագայից։ Սակայն և այնպէս նորակազմ ճիւղն իւր գործունէութեան առաջին իսկ օրերից հետաքրքրւել է աւելի գործով ու բարոյական շահով, քան լոկ ձևականութեամբ։ Այսպէս։—

Ուշադրաւ է յիշատակել այն հանգամանքը, որ զգալով, թէ առանց հզօր նիւթականի ապարդիւն կանցնեն վարչութեան ջանքերը, ճիւղի անդրանիկ ընդհանուր ժողովը որոշեց՝ խորհրդին ուղարկւելիք 5%-ից զատ ճիւղի կարիքների համար էլ պահել տարեկան եկամուտի 10% ը իբրև մնայուն փոնդ, որից 5%-ն անձեռնմխելի, իսկ 5%-ն էլ իբրև պահեստի գումար, որպէսզի հնարաւոր դառնայ ճիւղի գործունէութիւնն ապագային դնել աւելի ամուր ու հաստատուն հիմքերի վրայ։ Այս որոշումն իրագործելու է նաև առաջիկայ տարիներում։

Չբաւականանալով այսքանով՝ վարչութիւնը մի շարք ընդարձակ գրութիւններով դիմել է նաև կենտրոնական վայրերում գտնւող հեռաւոր ագուլեցիներին ու գողթնեցիներին, յիշեցրել նրանց դէպի իրանց ծննդավայրն ու հայրենիքն զգալիք կապն ու պարտաւորութիւնները և կոչ արել օժանդակել՝ թէ նոր անդամներ գտնելով և թէ պարբերական կամ միանւագ նւէրներ հանգանակելով իրանց ծանօթների շրջանում.

Այդպիսի գրութիւններ ուղարկւած են՝ Մոսկւա, Բագու, Թիֆլիս, Ասխաբադ, Կոկանդ և Պարսկաստան՝ Սաբզւար ու Թեհրան։ Եւ պէտք է սրտի ուրախութեամբ յիշատակել, որ մի քանի վայրերից արդէն—ինչպէս Մոսկւայից, Բագւից ու Թիֆլիսից վարչութեան կոչն ստացել է իր յուսատու ու ոգևորիչ արձագանքները, խոստումներ, որոնք իրագործւելով ապագային մեծ վարկ ու եռանդ կարող են ներշնչել ճիւղին։

Մինչ այդ բոլորի իրագործումը, վարչութիւնը տեղումը արդէն ստացել է 38 րուբլի զանազան նւէրներ, տարբեր անձերից և այս աղբիւրն ևս առաջիկայում չի վրիպելու վարչութեան ուշադրութիւնից։

Բացի այդ՝ վարչութիւնը ունեցել է նաև մի այլ, իւր տեսակում եզակի մուտք։ Խորհրդից ստացւած է 1908 թ.ին, ապրիլի 2-ին պ. Պետրոս Պետրոսեանցի ժամանակաւորապէս ու պայմա-

նով յանձնած, 9 հոգուց իբրև անդամակցական վճար գանձուած 45 րուբլին, որ կարելի է համարել հիմնադրութեան գումար, կամ եկամուտի կորիզ՝ ճիւղի համար։

Աւելացնելով այս բոլորի վրայ և այն 70 հոգուց ստացուած տարեկան անդամակցական վճարները—համաձայն ընկ. կանոնադրութեան § 19-ի՝ աւանների և գիւղերի համար՝ 2-ական րուբլով—140 րուբլի, կըլլանայ հաշւետու տարւոյս եկամուտն—ընդամենը 223 րուբլի։

Իսկ եկամուտի այլ կարևոր աղբիւրների, ինչպէս ներկայացումներ, դրօսանք և այլն, որոնք նոյնպէս իրանց հերթին կընպաստեն շատացնելու ճիւղի եկամուտն ու միջոցները, վարչութիւնը դրանց կըդիմէ առաջիկայ 1913 թւից։

Բաշխուած նպաստներ։—Հաշւետուութեան քառամեակում վարչութիւնը չի վարանել իւր սուղ միջոցներով ընդառաջ գնալու նաև ընկերութեան նպատակներին, դիմելով զուտ բարեգործական գործունէութեան։

Դպրոցի մանկավարժական և հոգաբարձական խառն խորհրդի ընտրութեամբ վարչութիւնը 10 հոգու մատակարարել է աշակերտական զգեստներ։

Դեկտեմբերի վերջին 20 ր. նպաստ է յանձնուած տեղի աղքատախնամ հոգաբարձութեան, որպէսզի այդ աւելացնելով նոյն հոգաբարձութեան տրամադրութեան տակ դրուած գումարի տոկոսների վրայ՝ ծննդեան տօներին միասին մասնատրւի չքաւորներին՝ հոգաբարձութեան բարեհայեցողութեամբ ընտրուած ու որոշուած կարօտեալներին, ում որքան կարելի է։

Վարչութիւնը այս տարի դիւանական կարիքների ու անհրաժեշտութիւնների վրայ բաւական ծախս է արել—16 րուբլի 45 կոպէկ։ Այդ գումարով ձեռք են բերուած ճիւղի համար անհրաժեշտ կնիք, դրոշմ (շտեմպել), մուտից ու ելից ժապաւինեալ մատեան և այլ հարկաւոր մատեաններ։

Խօսելով վարչութեան գործունէութեան մասին, չի կարելի ուշադրութեան չառնել և նրա ունեցած մասնակցութիւնը հայ տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեայ համազգային մեծ յոբելեաններին։ Այս առիթով՝ հոկտեմբերի 7-ին գումարուած ժողովի որոշումները վարչութիւնը հետևեալ ձևով է իրագործել և իրագործելու է։

1. Հոկտեմբերի 13-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, վարչութիւնն ամբողջ կազմով ներկայ է գտնուել ս. պատարագի արարողութեան և հոգեհանգստեան կարգին, որ նուիրուած էր տառերի գիւտի և տպագրութեան անմահ վաստակաւորների յիշատակին։

2։ Դպրոցի ընտրուած «յոբելյանական սաներ».ին, որոնք չքաւոր, սակայն ընդունակ ու յառաջադէմ աշակերտներից են լինելու,—վարչութիւնը մատակարարելու է աշակերտական զգեստ, դպրոցական պիտոյքներ և այլն,—թէ կարիք կունենան այդ սաները։

3. Բացուելիք գրադարան-ընթերցարանը ի յաւերժացումն համազգային մեծ յոբելեանների—քանի որ այդ յոբելեանական տարումն է բացուելու—կը կոչւի «Սահակ-Մեսրոպեան», կանխաւ վարչութեան և գրադարան ընթերցարանի համար ընտրուելիք յատուկ մասնաժողովի հետ համաձայնութեան գալով։

ՄՈՒՏՔ

1. Անդամակցական վճար 70 հոգուց			140	—
2. Նուէրներ պ. պ. Աւետիս Ներսիսեանից	25	—		
բ. պ. Աւետիս Սարգսեանից	10	—		
գ. օր. Կատարինէ Մանդինեանից	3	—	38	—
3. Պետ. Պետրոսեանցի հաւաքած գումարը խորհրդից			45	—
Ընդամենը			223	—

ԵԼՔ

1. Չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին տրուած է զգեստ և ոտնաման	33	18
2. Աղքատներին տրուած	20	—
3. 10⁰/₀-ը պահուած է ճիւղի միայուն ֆոնդի համար	17	—
4. 5⁰/₀ ֆոնդի համար, կենտրոնական խոհրդին	8	50
5. Դիւանական ծախսեր —		

ա. Մուից-ելից ժապաւինեալ մատեան, կնիք և դրոշմ	4	65				
բ. Արձանագրութեանց և պատճէնների մատեաններ	4	10				
գ. Գրադ.-ընթ. խնդրի համար դրոշմանիշ	2	50				
դ. Նամակադրոշմ, թուղթ, և այլն	5	20	16	45	92	13
Մնացորդ առ 1-ն յունուար 1913					127	87
Ընդամենը					223	—

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Աբեան Սարգիս
2 » Մուշեղ.
3 Աթաբէկեան Գար. բժ.
4 Աղամիրզեան Պօղոս
5 Ասլանեան Ալեքսան
6 » Վաղարշակ
7 † Արասխանեան Աւետիք,
8 » Իվան
9 օր. Աւետիսեան Արաքսիա
10 տիկ. Բաղդեան Գայիանէ,
11 » Հմայեակ
12 » Տելեմաք
13 » Յուսիկ
14 տիկ Բարխուդարեան Մարթա
15 Բէգլարեան Մկրտիչ
16 Գէորգեան Վահան բժ.
17 տ. » Կատարինէ
18 » Յարութիւն
19 տ. » Նունէ
20 » Հայկ
21 Դուրգարեան Արշակ
22 Եսայեան Բենիամին բժ.
23 տ. Լեկրեան Անիկօ
24 » Աւետիս
25 տ. Խանդուլեան Անոյշ
26 Խանդուլեան Թովմաս
27 տ. Խօջամիրեան Գենոֆէ
28 Կզարթմեան Վարդան
29 Հախնազարեան Սարգիս
30 » Թէոդորոս
31 տ. » Նազելի
32 » Ստեփան
33 » Յովհաննէս
34 Ղազարեան Գրիգոր
35 Ղարիբջանեան Աւետիս
36 Մարգարեան Մինաս
37 » Յովհաննէս
38 տիկ. Մելիք Մարութեան Հայկանդուխտ
39. Մելիք-Մարութեան Գարեգին

40 Մելիք-Մարութեան Գարեգին
41 օր. » » Արծուիկ
42 » » Գրիգոր
43 տ. Յակոբեան Հայկանդուխտ
44 տ. » Մանուշակ
45 Յովհաննիսեան Յովհան.
46 տ. Ներսիսեան Արփենիկ
47 » Աւետիս
48 » Յովհաննէս
49 օր. » Ոսկի
50 » Զաքարիա,
51 տ. » Անուշկա
52 Նունուսեան Մինաս
53 Նալբանդեան Աւետիս
54 տ. Շիրազեան Շուշանիկ
55 տ. Պետրոսեան Եղիսաբէթ
56 Պետրոսեան Պետրոս
57 Սարգսեան Աւետիս
58 Սաֆրազեան Համազասպ
59 Վաչեան Յովհաննէս
60 տ. Տէրեան Կատարինէ
61 Տէրեան Աղեքսանդր
62 Տէր Զաքարեան Յով.
63 տ. Տէր Յակոբեան Մարիամ
64 » Յակոբ
65 օր. Տէր Յովակիմեան Շուշանիկ
66 Տէր Յովհաննիսեան Աւետիս բժ.
67 Փանեան Յովհաննէս
68 » Ալեքսան
69 տիկ. Քալանթարեան Գայիանէ
70 » Յարութիւն

Ճիւղը փակելով իւր հաշիւներն, ներկայացրել է վերաստուգիչ յանձնաժողովին ի քննութիւն, որը ծանօթանալով հաշիւների հետ կազմել է հետևեալը, որ բերում ենք համառօտակի. արձանագրութիւն 29 յունուարի 1913 թ. Վ.-Ագուլիս։ «Մենք, վերաստուգիչ յանձնաժողովի անդամներս, այսօր, ժամի 10-ին, դպրոցական գրասենեակում ժողով գումարելով, քննութեան ենթարկեցինք Կովկասի Հ. Բար. ընկերութեան Վերին-Ագուլիսի ճիւղի 1912 թուի դրամական հաշիւները։ Ճիւղի վարչութիւնը ժողովիս քննութեանը և ստուգութեանը ներկայացրել էր հետևեալ մատեաններն ու ցուցակները.—

1. Մուից և ելից ժապաւինեալ մատեանը,

2. անդամակցական վճարների անդորրագրների կտրօնատետրերը (№№ 1—70).

3. Նուէրների անդորրագրերի մատեանը և

4. Հագուստով նպաստ ստացող աշակերտ-աշակերտուհիների ցուցակը։

Մանրազննին քննութեան ենթարկելով վարչութեան ներկայացրած մատեաններն ու ցուցակները, յանձնաժողովս սրբազան պարտականութիւն է համարում անել հետևեալ դիտողութիւնները, որոնք չափազանց կարևոր են գործի կանոնաւորութեան, Վերին Ագուլիսի ճիւղի յարատևութեան տեսակէտից։—

1. Անդամակցական վճարների կտրոնատետրերի մէջ (շատերում ամիս-ամսաթիւը չէ նշանակւած) ստացւած գումարներն արձանագրւած են անկանոն կերպով, այն է՝ ստացման ժամանակը և տրւած անդորրագրերի №№-ը շատ դէպքերում չեն համապատասխանում իրար. օր. № 8 անդորրագիրը տրւած է նոյեմբերի 1-ին, № 26 ը սեպտ. 6-ին, №№ 56,57,58-ը—սեպտ. 3-ին և այլն։

Թէև վարչութիւնն այդ առթիւ ներկայացրել է այդ գրաւոր և որոշ չափով հիմնաւոր պատճառաբանութիւնը, բայց կարծում ենք, որ անկանոնութիւնը ամէն դէպքում էլ խոտելի է։

2. Նւիրատուների մատեանում 1912 թւի հաշիւը ամենևին չէ փակւած. 1913 թւին ստացած նւէրները իրենց անդորրագրերի №№-ով անմիջապէս յաջորդւում են 1912 թւի №№-ին (1912 թւի № 3 անդորրագրից յետոյ անմիջապէս գալիս է 1913 թւի № 4 անդորրագիրը։

3. Եղած ծախքերը չունեն համապատասխան արդարացուցիչ փաստաթղթեր. 95 ր. 13 կոպ. ելքից միմիայն աշակերտ աշակերտուհիների հագուստների համար եղած 33 ր. 18 կոպ. ծախքը ունի իր արդարացուցիչ դօկումենտները։ Թէև յանձնաժողովս մազաչափ անգամ չի կասկածում եղած ծախքերի վերաբերմամբ, բայց և այնպէս—կրկին նոյն օրինաւորութեան և գործի յաջողութեան տեսակէտից—անհրաժեշտ է գտնում, որ բոլոր ծախսերն էլ ունենան արդարացուցիչ դօկումենտներ և հարկաւոր դէպքում անպայման դրոշմով (герб. марка),

4. Որովհետև յանձնաժողովս իր ձեռքի տակ չունէր Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութեան ժողովների արձանագրութիւնների մատեանը, ուստի և անկարելի եղաւ տեղեկանալ, թէ առհասա-

րակ ինչ ձևով են կատարւել եղած ծախքերը։ Սակայն և այնպէս մի բան պարզ է, որ ծախքերի արման եղանակը եղել է ոչ այնպէս, ինչպէս պահանջում է գործի բարգաւաճումը։ Յանձնաժողովս անհրաժեշտ է գտնում ծախքեր անելու հետևեալ ձևը.—ծախքերի քանակը որոշում է վարչութեան ժողովը, որի համեմատ նախագահը գրում է օրդեր և ըստ այնմ գանձապահն էլ անում է հարկաւոր ծախքը։

Այս ամենից յետոյ Յանձնաժողովս պարտականութիւն է զգում իր անկեղծ շնորհակալութիւնները յայտնելու Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութեան ամբողջ կազմին, մասնաւորապէս նրա նախագահ պ. Աւետիս Ներսիսեանին այն եռանդուն գործունէութեան համար, որ նրանք ցոյց են տւել իրենց կարճ ժամանակեայ պաշտօնավարութեան ընթացքում։ Այդ նւիրւած գործունէութեան արդիւնքն է այն փաստը, որ Ագուլիսի նման մի սակաւամարդ գիւղում ճիւղն ունեցել է 70 անդամ, այն ինչ մեր գաւառական քաղաքներից շատերը հազիւ դրա կէսն ունեն։

Յանձնաժողովս յոյս է տածում, որ Կ. Հ. Բ. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղի վարչութիւնն ու նրա պարոն նախագահը ապագայում ևս կըգործեն նոյն եռանդով ու ոգևորութեամբ»։

Վարչութիւնը լսելով սոյն արձանագրութիւնը, տւել է հետևեալ բացատրութիւնը։

Յայտնի է, անշուշտ, որ իւրաքանչիւր նոր գործ իւր սկզնաւորութեան առաջին՝ մանկական քայլերում ունենում է սայթաքումներ, անհարթութիւններ ու կանոնաւորութեան սահմաններից դուրս կատարւած շեղումներ, որոնք, սակայն, բնական է, որ չը պիտի դառնան գործունէութեան սիստեմ։

1. Անդամակցական վճարների անդորրագրերի արմատների մէջ ամիս-ամսաթւերի և համարների ժամանակագրական ու թւական ու կարգի պահպանւած չլինելը, ինչպէս վարչութեան իւր առ յանձնաժողովն ուղղած գրութեան մէջ ևս յայտնել էր կանխաւ, հետևանք է այն դժւարին կացութեան, որի մէջ յանկարծակի ընկել էր վարչութիւնը, հէնց գործի սկզբում, սեպտեմբերի առաջին օրերում, նկատելով, որ ճիւղի անդամագրւել ցանկացողներից շատերը, առանց վարչութեան գիտութեան, ուղևորւում էին տե-

դէպը և վարչութիւնը հնար չէր ունենում գանձելու նրանց անդամակցական վճարները, ուստի և վարչութիւնն ստիպւեցաւ մէկ անգամից պատրաստելու բոլոր անդամագրւել ցանկացողների անդորրագրերն և նրանցից, որից ստանում էր անդամակցական վճարը, նրան և անմիջապէս տալիս էր իր անդորրագիրը, դրամի ընդունւած օրւայ ամսաթւով: Այս մասին կարելի է և այլ արդարացուցիչ հանգամանքներ թւել այստեղ, սակայն վարչութիւնը աւելորդ է գտնում:

2. Նւիրատւութիւնների մատեանում 1912 թւի հաշիւը առանձնայատուկ ձևով չի փակւած այն պատճառով, որ առաջւայ առանց նկատառումների անդորրագրերը համարադրւած էին մինչև № 6 և վարչութիւնը չէր ցանկանում որևէ քերծումով, կամ այլ նկատելի ձևով տարակուսելի դարձնել դրանց զօրութիւնը, մանաւանդ որ ստորև գրւած տարեթւերն ու ամսաթւերը ոչ մի կասկած չեն կարող յարուցանել, թէ առաջին երեք անդորրագրերը վերաբերում են 1912 թւին, իսկ №№ 4 և 5 անդորրագրերով ստացւած նւէրները սոյն այս 1913 թւինն են:

3. Վարչութիւնը բնաւ հակառակ չէ, որ առ հասարակ բոլոր ծախսերն էլ ունենան իրենց արդարացուցիչ փաստաթղթերը և հարկաւոր դէպքերում էլ անպայման դրոշմանիշով (герб. марки): Այս ձևի հաշւապահութիւնը խստապահութեամբ կըգործադրւի առաջիկայում:

4. Եթէ Յանձնաժողովն իւր զբաղումների համար անհրաժեշտ էր գտել ձեռքի տակ ունենալ նաև վարչութեան ժողովների արձանագրութեանց մատեանը, յանձնաժողովի համար ոչ մի դժւարութիւն չկար անմիջապէս պահանջելու և այդ մատեանը վարչութիւնից, որ իսկոյն կըյանձնւէր յանձնաժողովին, ինչպէս առանց պահանջելու յանձնւած էին միւս կարևոր մատեանները:

Գալով ծախքեր անելու եղանակին՝ վարչութիւնը ևս համաձայն է առաջիկայում կիրառութեան մէջ մտցնել օրդերը, այսինքն՝ ծախսերի քանակը համաձայն նախահաշւի կորոշէ վարչական խորհուրդը, դրա համեմատ նախագահը կըգրէ օրդերը և գանձապահն էլ ըստ այնմ կանէ հարկաւոր ծախսը:

Վերջացնելով իր բացատրութիւնները վարչութիւնն էլ իր հերթին պարտք է զգում շնորհակալութիւն յայտնելու արգոյ վերստուգիչ յանձնաժողովին նրա կրած նեղութիւնների ու աշխատանքի համար, խոստովանելով, որ այդպիսի ուշադիր ու բարեխիղճ գործակցութեամբ միայն կարող է վարչութիւնը իւր եռանդն ու ջանքերն ուղղել դէպի Կ. Հ. Բար. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղի յարատևութիւնն ու բարգաւաճումը:

Վլադիկավկազի ճիւղ: Վարչութիւնը նպաստել է տեղական հայոց դպրոցին, չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին թոշակադրամով, ունի զամբիւղագործական արհեստանոց,

Մ Ո Ւ Տ Ք

1. Մնացորդ առ 1-ն յունւար 1912 թ.					482	88
2. Անդամավճարներ 1911	10	—				
1912	545	—	555	—		
3. Տուփերից			191	03		
4. Զբօսանքից			616	93		
5. Աւետիսից և Նւիրաբերութիւն.			395	13		
5. Հանգ. Ղ. Հախնազարեանի տանից			737	71		
6. Պսակներից			23	50	2519	30
Ընդամենը					3002	18

Բացի մնացորդ առ 1-ն յուն. 1913 թ. ճիւղի սեփականութ. են՝

1. Երեք հատ 4% րենտա իր տոկոսներով	317	62
2. Հանգ. Ն. Ս. Եարալեանի ժառանգների ստորագր.	500	—
3. Անձեռնմխելի գումար Մատթէոս Փիլոյեան տոկոս.	663	41
4. » » Պետրոս Պապունեանի	300	—
5. Մի մուրհակ	120	—
Ընդամենը	1901	03

Ե Լ Ք

1. Աղքատներին ամսավճարներ	602	—
2. Միանւագ չքաւորներին	120	—

3. Զամբիւղագործարանի պահպանութեանը			370	—		
4. Նպաստ հայոց դպրոցին			350	—		
5 Վեհափառ Հայրիկի անուան թոշակաւոր.			50	—		
6. Հանգ. Արիստակէս արքեպ. Սեդրակեանի անուան թոշակ			66	—		
7. Ուսումնավարձ աղքատ աշակերտներին			249	75		
8. Կօշիկ, դասական առարկաներ			16	19		
9. Ռոճիկ քարտուղարին			60	—		
10. Դիւանական ծախս			21	32		
11. 5⁰/₀ ֆօնդի համար 1909 թ. հաշ.	125	70				
» » » 1910 թ. »	132	80				
» » » 1911 թ. »	33	15				
» « » 1912 թ. »	108	35	400	—		
12. Մանր ծախք			9	94	2315	20
Մնացորդ առ 1-ն յունու. 1913 թ.					686	98
Ընդամենը					3002	18

1911 թ. ունեցել է մուտք 2497 75
ելք 2406 74

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ—Սարգիս Իւզբաշեան. գանձապահ—Յարութիւն Գէորգեան. քարտուղար—Կոստանդին Մարտիրոսեանց. անդամներ—տիկին Եղիսաբէթ Կարախանեան, Լեւոն Ղուկասեան և Սարգիս Սախեան. փոխ-անդամներ—Կոնստանդին Մարտիրոսեան, տիկին Սոֆիա Սիմոնեան և Արսէն Դէյկարխանեան. վերստուգիչ մասնաժողովի անդամներ Հայկ Ղազազեան, Դաւիթ Նոնեան և Զաքարիա Աւագեան։

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Գանջումեան Իսահակ, Գանջումեան Րոզալիա, Օհանեան Կարապետ, Օհանեան Յովհաննէս, Պապունեան Պետրոս։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Աբազեան Եգոր
2 Աբուլեան Գէորգ
3 Աբուլեան Իսահակ
4 Ադամեան Յովսէփ
5 Աթանասեան Մարտիրոս
6 Ալոջեան Գրիգոր
7 Ալտուղեան Մկրտիչ (Ալեպց.)
8 Աղաջանեան Կարապետ

9 Անանեան Գերասիմ
10 Ասկարեան Կարապետ
11 Արտեմեան Միքայէլ
12 Աւանեսեան Ալէքսանդր
13 Աւագեան Զաքարիա
14 Աւագեան Մարիամ
15 Աւշարեան Ովսաննա
16 Ափեան Տիգրան
17 Բաբայեան Ներսէս
18 Բարձիմեան Սպիրիդոն
19 Բայեանդուրեան Գրիգոր
20 Բունիաթեան Հայկ
21 Բունիաթեան Ռուբէն
22 Գասպարեան Յակոբ (Նալչիկ)
23 Գէորգեան Յարութիւն
24 Գէորգեան Մկրտիչ (Բեսլան)
25 Գուրջեան Համբարձում
26 Գուրջեան Արշակ
27 Իւզբաշեան Ալէքսանդր
28 Իւզբաշեան Սարգիս
29 Իւզբաշեան Րոզալիա
30 Դանիէլ Նադեժդա
31 Դէյկարխանեան Արսէն
31 Դէյկարխանեան Մարիամ
33 Եարալեան Կոնստանդին
34 Զալեան Եղբայրք
35 Զալինեան Բարսեղ
36 Թաթուզեան Յովհաննէս
37 Թաթուզեան Շողակաթ
38 Թաթուլեան Յովսէփ
39 Թէմուրազեան Թոմաս
40 Լիսիցեան Գերասիմ
41 Խաչատրեան Գէորգ (Բեսլան)
42 Խաչատրեան Համբարձում
43 Խումարեան Յակոբ
44 Կանայեան Հայկ
45 Կապլանեան Գայիանէ
46 Կարախանեան Եղիսաբէթ
47 Կարապետեան Սմբատ
48 Կիրակոսեան Յարութիւն
49 Կիրակոսեան Մարիամ
50 Կիրակոսեան Մկրտիչ
51 Կիրակոսեան Սոֆիա
52 Կիրակոսեան Սարգիս
53 Կիրակոսեան Յովսէփ
54 Կիրակոսեան Բողդան
55 Կիրակոսեան Յակոբ
56 Կիրակոսեան Համբարձում
57 Կոժեմեակեան Սարգիս
58 Կոջոյեան Հայկ
59 Ղազազեան Մանուկ Ա.
60 Ղազազեան Մանուկ Մ.
61 Ղազազեան Միհրան
62 Ղազազեան Հայկ
63 Ղազարեան Աննա
64 Ղազարեան Սարգիս
65 Ղարիբեան Խաչատուր (Նազրան)
66 Ղասումեան Կատարինէ
67 Ղասումեան Նոյ
68 Ղուկասեան Լեւոն
69 Մամուլեան Եղիսաբէթ
70 Մամուլեան Սիմէոն
71 Մարտիրոսեան Կոնստանդին
72 Մելիքեան Բարսեղ
73 Միսանեան Հայկ (Ալեպց.)
74 Մուրադեան Ղազարոս
75 Մուրադեան Սիմէոն
76 Յովսէփեան Ադամ
77 Յովսէփեան Բագրատ
78 Յովսէփեան Գէորգ
79 Յովսէփեան Օլգա

80 Յովակիմեան Գէորգ
81 Նոնեան Դաւիթ
82 Շահգելդեան Եփրեմ
83 Չմշկեան Գարեգին
84 Պապունեան Սարգիս
85 Պոպովեան Գերասիմ
86 Սախեան Սարգիս
87 Սաղոյեան Արտաշէս (Նալչիկ)
88 Սառիկեան Յակովբ քահանայ
89 Սերեբրակեան Նիկողայոս
90 Սերեբրակեան Ստեփան
91 Սիդամոնեան Պետրոս
92 Սիմոնեան Գրիգոր
93 Սիմոնեան Սոփիա
94 Սիմոնեան Վարդան
95 Վախտանգեան Բագրատ
96 Վերմիշեան Նիկողայոս
97 Տէր Աբրահամեան Քալինկա
98 Տէր Մինասեան Կատարինէ (Նալչիկ)
99 Տէր Մինասեան Սպիրիդոն (Նալչիկ)
100 Տէր Յովհաննիսեան Գէորգ
101 Տէր Յովհաննիսեան Եղիսաբէթ
102 Տէր Յովհաննիսեան Ներսէս
103 Տէրտէրեան Յովհաննէս
104 Տէրտէրեան Սոփիա
105 Տօնականեան Յարութիւն (Նալչիկ)
106 Ցիմբոլեան Տիգրան
107 Փանոսեան Պօղոս
108 Փարսադանեան Եգոր
109 Փարսադանեան Կարապետ
110 Փիլոյեան Գաստոն
111 Քիստեան Մկրտիչ (Պոլիս.)

Քարվանսարայի ճիւղ։ Վարչութիւնը, որի սրտին շատ մօտ է եղել գրադարան-ընթերցարանի միջոցով ընթերցանութիւնը լայն կերպով տարածելու ժողովրդի ամեն խաւերում, տարւայ մէջ կազմակերպել է քանիցս ժողովներ թէ ժողովրդից և թէ՝ գիւղումս ծառայող պաշտօնական անձերից, որոնցից կազմել է մասնաժողովներ, որոնք և հոգացել են կանոնաւորելու այդ գործը, որով այս տարի ընթերցողների մեծ թիւ էր գրաւել գրադարան-ընթերցարանը, ուր գրքերի թիւը հասել է մօտ 2200-ի. կարդացողները եղել են 752 հոգի, կարդացել է 939 գիրք։ Գրադարան-ընթերցարանն ստանում էր «Баку», «Телеграфъ»*), «Մշակ», «Հորիզոն», «Խաթաբալա», «Սուրհանդակ», «Հովիտ» **), «Արարատ», «Նոր դպրոց», «Մամուլ»։

*) Երկուսն էլ նուիրել է պ. Գրիգոր Խալաթեանը, ի յիշատակ իւր մօր։
**) Նուիրել է տ. Նատալիա Զաղէթեանը, ի յիշատակ իւր հօր։

Այս տարի գրքերի կիսից աւելին կազմւել է։

Վարչութիւնը ջանք չէ խնայել իւր շրջանի դպրոցների կանոնաւոր յառաջադիմութեան համար։ Այս տարի հիմք է դրւել Գօշավանքի դպրոցի շինութիւնը, որը մօտ է աւարտման։

Բաժանել է խորհրդից ստացած շրջանի 8 դպրոցներին նըպաստ։

Վարչութիւնը պահել է ռրդեգիրներ 2-ը Թալա և 4-ը Քարվանսարայի դպրոցներում։

Որբերին-աղքատներին բաժանել է տօներին և այլ հանգամանքներում այս առթիւ ձեռք բերւած նւէրները, կազմւած է մասնաժողով, յատուկ ներկայացումների գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու իւր ձեռնարկած և պատրաստ բեմի վրայ։

Ունեցել է 17 վարչական և 2 ընդհանուր ժողով։

Մ Ո Ւ Տ Ք

1. Անդամավճար 40 հոգուց	80	—		
2. Նւէրներ	104	61	184	61
Ընդամենը			184	61

Ե Լ Ք

1. Նպաստ դպրոցների	19	20		
2. Գրքերի կազմելուն	25	—		
3. Դիւանական	14	25		
4. Փորձն. դասեր. ուսուցչ. ժող.	10	—		
5. Տառապեալներին	51	—		
6. Շինութեան՝ ժողով. տան	47	86	167	31
Մնացորդ առ 1-ն յունւ. 1913 թ.			17	30
Ընդամենը			184	61

1911 թ. ունեցել է մուտք 1080 94
Ելք 1354 64

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Զ Մ Ը

Նախագահ—Մեսրոպ ք. Էգիլեան. փոխ-նախագահ—Մ. Զաքարբեան. քարտուղար—Հայկ Պապեան. գանձապահ—Արտէմ Իսխա-

նեանց. անդամներ—Մ. Զաքարեան և Արփիար Թումանեան. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ—Արշակ Մամեան, Գաբրիէլ Մարկոսեան և Անդրէաս Պալեան։

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Սամսոն Յարութիւնեան, 2. Արշակ Մամեան, 3. † Վաղինակ Սիմէօնեան, 4. տ. Մար. Ստ. Յարութիւնեան, 5. † Վասիլ Մ. Յարութիւնեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Օր. Ահարոնեան Աննա
2. Ամիրջանեան Տիգրան
3. † Ասիլբէգեան Հայկ
4. Աղասարեան Մկրտիչ
5. Գուլլակեան Վանօ
6. Զախարեան Միքայէլ
7. Էգիլեան Մ. քահանայ
8. Էգիլեան Տիգրան
9. Թադէոսեան Տիգրան
10. Թումանեան Արփիար
11. Թումանեան Բագրատ
12. Թումանեան Գարեգին
13. Իսխանեան Արտէմ
14. Խալաթեան Գերասիմ
15. Խալաթեան Գրիգոր
16. Խալաթեան տ. Կատարինէ
17. Խէմչեան Արտաշէս
18. Куль Іосифъ
19. Ղազումեան Արշակ
20. Ղազումեան Բաղալ
21. Ղազումեան տ. Սալոմէ
22. Մանուկեան տ. Աննա
23. Մանուչարեան Գրիգոր
24. Մարկոսեան Գաբրիէլ
25. Մելիք Մնացականեան օր. Սաթենիկ
26. † Մուրադեան Եփրեմ բէգ
27. Յովակիմեան Գէորգ
28. Յովակիմեան տ. Թալիկօ
29. Յովակիմեան տ. Սիրանոյշ
30. Յովակիմեան Նիկողայոս
31. Ներսիսեան Արշակ
32. Պալեան Անդրէաս
33. Պալեան Հայկ
34. Սիմէօնեան Արամ
35. Սիմէօնեան Արտաշէս
36. Սիմէօնեան Գրիգոր
37. Սիմէօնեան Ռուբէն
38. Віячеславъ Василіевъ
39. Վանեսեան Ալէքսան
40. Տէր Յարութիւնեան Սահակ

Քութայիսի ճիւղ։ Վարչութիւնը նպաստել է շրջանի Սաչխէրի դպրոցին, տեղական դպրոցի չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին թօշակադրամով և հագուստեղէնով։

ՄՈՒՏՔ

1. Մնացորդ առ 1-ն յունուար 1912 թ.	50	73		
Ապառիկներից	5	10	55	83
2. 28 անդամավճար (մէկից 2 ր.)	137	—		
3. Նուէրներ	238	85		
4. Խորհրդից նպաստ Սաչխէրի դպրոցին	95	83	472	68
Ընդամենը			528	51

ԵԼՔ

1. Գրադարան	18	50		
2. Դիւանական	21	24		
3. Չքաւորներին նպաստ և ճանապ.	56	09		
4. Սաչխէրի դպրոցին	95	83		
5. Ծառայի	19	—		
6. Չքաւոր աշակերտներին ուսման վճար	45	—		
7. Չքաւոր աշակերտների հագուստ և ոտնամ.	138	92		
8. Զանազան ծախսեր	1	45	396	03
Մնացորդ առ 1-ն Յունուար 1913 թ.			132	48
Ընդամենը			528	51

1911 թւին ունեցել է մուտք 106 50
» » ելք 61 50

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ—Արշակ Երւանդեան. փոխ. նախագահ—տիկ. Եղիսաբէթ Ստեփանեան. գանձապահ-քարտուղար—Հայրապետ Հայրապետեան. անդամներ—Աբգար Մամաջանեան, Յակոբ Աւսարգսեան. փոխանդամներ—Յովհաննէս Մնացականեան, Գրիգոր Սամուէլեան.

Վերաստուգիչ յանձնաժողով—Յովհաննէս Կուզանեան, Միքայէլ Մեսրոբեան, Ստեփան Մղեբրեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Ալխազեան Եագոր
2 Այվազեան Գրիգոր
3 Աշչեան Կոստանդին
4 Աշչեան Պօղոս
5 Աւսարգսեան Յակոբ
6 Ամիրաղեան Յովհաննէս
7 Գւելեսեանի Յովհաննէս
8 Գրիգորեան Վահագն
9 Կուզանեան Յովհաննէս
10 Հայրապետեան Հայրապետ
11 Երւանդեան Արշակ
12 Ղուրուլեան Միքայէլ
13 Ղարայեան Աբգար
14 Մեսրոբեան Միքայէլ
15 Մամաջանեան Գրիգոր
16 Մամաջանեան Աբգար
17 Միրխանեան Սողոմոն
18 Մղեբրեան Ստեփան
19 Թադէոսեան Արշակ
20 Նազարեան Սարգիս
21 Մնացականեան Յովհաննէս
22 Ռաֆայէլեան Պետրոս
23 Ստեփանեան Եղիսաբէթ
24 Ստեփանեան Լեոն
25 Սամուէլեան Գրիգոր
26 Տէրտէրեան Յովհաննէս
27 Տէր Գրիգորեան Վասիլ
28 Փոլադեան Սպիրիդոն

Ցարսկիէ Կօլօդցի ճիւղ։ Վարչութիւնը իր միջոցներից նպաստել է՝ տեղական դպրոցին, գրադարանի համար գրքերի և լրագրների և չքաւոր աշակերտուհիներին։

ՄՈՒՏՔ

Մնացորդ առ 1-ն յունուարի 1912 թ.			2	12
1. Անդամավճարներից (15 անդամ)	75	—		
2. Նուէր	2	—		
3. Հին լրագրների վաճառումից	1	80		
4. Ներկայացումից և երեկոյթից	28	13	106	93
Ընդամենը			109	05

ԵԼՔ

1. Ուսումնարանին	75	—		
2. Գրադարան-ընթերցարանին լրագրների	27	20		
3. Պահարան գրադարանի համար	12	—		
4. Գրքեր չքաւոր աշակերտուհուն	1	40		
5. Գրքեր գրադարանի համար	2	86		
6. Մանր ծախսեր	5	95	124	41
Ընդամենը			124	41

Առ 1-ն յունուար 1913 թ. պարտք ունի 15 ռ. 36 կ., բացի խորհրդին ուղարկուելիք 5% ֆոնդի գումարը 5 ռ. 35 կ։

1911 թ. ունեցել է մուտք 141 90
Ելք 141 90

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ—Ստեփան Ամեան, քարտուղար—Յակոբ քահանայ Գրիգորեան, գանձապահ—Լեոն Ամեան, անդամներ—Աբգար Լիանոզեան և Խաչատուր Բարսամեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Արտէմ Օթարեան
2 Ստեփան Ամեան
3 Լեոն Ամեան
4 Յակոբ քահանայ Գրիգորեան
5 Ալէքսան Մկրտումեան
6 Խաչատուր Բարսամեան
7 Նիկողայոս Խաչումեան
8 Գէորգ Համբարձումեան
9 Ալէքսանդր Խաչումեան
10 Վարդան Թանդիլեան
11 Օհանջան Օհանջանեան
12 Աբգար Լիանոզեան
13 Յովսէփ Լիանոզեան
14 Նիկողայոս Եարեան
15 Ռէվազ Քոչարեանց

Օլթիայ ճիւղ։ Վարչութիւնը օգնում է ս. Գէորգեան հայ. ծխ. ուսումնարանին թէ փողով և թէ գրադարանի համար թերթեր բերել տալով։

ՄՈՒՏՔ

1. Անդամակցական վճար	90	—
2. Նուէրներ Պիղատոս Նալբանդեանից	15	—

3. Երեկոյթ, ցերեկոյթ և ներկայացումներից	55	—	160	—
Ընդամենը			160	—

Ե Լ Ք

1. Ս Գէորգեան հայ, ծխակ. ուսումնարանին միանուագ տրուել է	60	—		
2. Նոյն ուսումնարանի գրադարանի համար՝ թերթերի	25	—		
3. Ընդհանուր դիւանական ծախք եղել է	12	—		
4. Տառապեալներին	63	—	160	—
Ընդամենը			160	—

1911 Թ. ունեցել է մուտք 180 —
Ելք. 180 —

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Զ Մ Ը

Նախագահ—Տէր Վարդան Սարաֆեան. քարտուղար—Արտաշէս Բաստրմաճեան. գանձապահ—Պլղատոն Նալբանդեան. անդամներ—Արշակ Քիւրքչեան, Յակովբ Տէր. Յովսէփեան. փոխ. անդամներ—Յարութիւն Աղաբաբեան, Միքայէլ Մարուքեան. վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ—Ստեփան Տէր Մարգարեան, Մանուէլ Եղօյեան, Համբարձում Քիւրքչեան։

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

1 Աղաբաբեան Մանուկ
2 Աղաբաբեան Յարութիւն
3 Աղաբաբեան Յակովբ
4 Գիւրջեան Սարգիս
5 Դանիէլեան Յովհաննէս
6 Եղօեան Մանուէլ
7 Եղօեան Նաթան
8 Եազգիւլեան Դաւիթ
9 Եազգիւլեան Համբարձում
10 Թագափչեան Սիմէօն
11 Կիւրեղեան Յակովբ
12 Ղազարեան Պետրոս
13 Մարուքեան Միքայէլ
14 Նալբանդեան Պլղատոն
15 Պապօեան Արիստակէս
16 Բոյաճեան Պետրոս
17 Վարդան քահ. Սարաֆեան
18 Սուլթանեան Արտաշէս
19 Տէր Յովսէփեան Յակովբ
20 Տէր Յովսէփեան Բագրատ
21 Տէր Մարգարեան Ստեփան
22 Բաստրմաճեան Արտաշէս
23 Քիւրքչեան Տրդատ
24 Քիւրքչեան Համբարձում
25 Քիւրքչեան Մկրտիչ
26 Քիւրքչեան Արշակ
27 Գանձանակեան Մկրտիչ
28 Պետրոսեան Եղիսէ
29 Փաշինեան Կարապետ
30 Աբրահամեան Սարգիս

Օնիի ճիւղը կազմակերպուել է 1912 Թ. յունիսի 24-ին, իսկ գործունէութիւնը սկսել է նոյն Թւի, նոյն ամսի 24-ից։

Ճիւղի գործունէութիւնը լինելու է գլխաւորապէս օգնելու նոր բացուող հայոց եկեղեցական դպրոցին։

Այս տարի մտադրութիւն ունի բանալու հայոց եկեղեցական դպրանոց, որին օգնելու համար ճիւղը նպատ է նշանակել 100 ր. Եթէ դպրոցը չբացուեց նոյն նպաստը տալու է պատգայ շինուելիք եկեղեցուն. ճիւղի ունեցած կանխիկ դրամը գանձապահի անունով պահւում է տեղի մանր վարկի ընկերութեան գանձարանում։

Մ Ո Ւ Տ Ք

1. Անդամակցական վճար 45 հոգուց	90	—		
2. Նուէրներից	5	50		
3. Գանձանակներից	6	—	101	50
Ընդամենը			101	50

Ե Լ Ք

1. Ճանապարհածախս	3	—		
2. Կով. Հ. Բ. Ըն. խորհրդին կնիքի, մատեանի համար	4	65		
3. Դիւանական և մանր ծախսեր	3	29	10	94
4. Մնացորդ առ 1-ն յունուար 1913 Թ.			90	56
Ընդամենը			101	50

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Զ Մ Ը

Նախագահ—Միքայէլ Բերուչեան. քարտուղար—Աբգար քահանայ Բերուչեան. անդամներ—Յովհաննէս Եարալեան, Սիմէօն Դուշոյեան. փոխ. անդամ—Ղևոնդ Բերուչեան. վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ—Դաւիթ Անտ. Բերուչեան, Դաւիթ Ստեփ. Բերուչեան, Գաբրիէլ Բերուչեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Աբգար քահ. Բերուչեան	26 Նիկողայոս Յարութիւնեան (Թելաւեցի)
2 Սիմէօն Դուշոյեան	27 Յովհաննէս Գէօրգ Բերուչեան
3 Մելքո Բերուչեան	28 Դաւիթ Ստեփ. Բերուչեան
4 Յովհաննէս Եարալեան	29 Մելիքսեդիկ Ջափարիձէ
5 Ստեփան Ալիբէկեան	30 Դարչօ Բերուչեան
6 Միքայէլ Եարալեան	31 Վասիլ Բերուչեան
7 Աբրահամ Ալիբէգեան	32 Թադէոս Բէրուչեան
8 Հեղինէ Բերուչեան	33 Կարքօ Բերուչեան
9 Աղէքսանդր Բերուչեան	34 Սարգիս Բերուչեան
10 Արշակ Բերուչեան	35 Իրակլի Ջափարիձէ
11 Յակոբ բերուչեան	36 Խամփեր Կաճկաճեան (Լեչխումցի).
12 Զուրաբ Բերուչեան	37 Նիկողայոս Բերուչեանց
13 Բիւրօ Բերուչեան	38 Գաբրիէլ Խօջայեան (Քութայիսեցի)
14 Կէկէլ Բերուչեան	39 Եագօր Բերուչեան
15 Գրիգոր Բերուչեան	40 Ենովք Ջանոյեան
16 Յակոբ Սիմ. Ալիբէգեան	41 Աղէքսանդր Ալիբէկեան
17 Միքայէլ Բերուչեան	42 Յովհաննէս Յակովբեանց
18 Ներսէս բերուչեան	43 Դաւիթ Օղաբաշեանց (Ալէքսանդրապօլցի
19 Գարեգին Բերուչեան	44 Վասիլ Մերուրնութեան (ցխինվալեցի)
20 Յովսէփ Բէրուչեան	45 Գաբրիէլ Բերուչեան
21 Ռոստոմ Բերուչեան	
22 Կոստանդին Բերուչեան	
23 Դաւիթ Անտ. Բերուչեան	
24 Նիկողայոս Եարալեան	
25 Բատոնկա Եարալեան	

Գանձակի ճիւղ։ Վարչութիւնը նպաստել է աշակերտներին, չքաւորներին և կար ու ձևի դպրոցին։

Մ Ո Ի Տ Ք

1. Մնացորդ առ 1-ն յունուար 1912 թ.			9	—
2. 16 անդամներից	80	—		

3. Գանձակի փոխադարձ վարկի ընկերութիւնից	50	—		
4. Նուէրներ	19	70	149	70
Ընդամենը			158	70

Ե Լ Ք

1. Աղքատներին	31	—
2. Ուսումնարաններին	102	—
3. Կար ու ձևի դպրոցին	6	—
4. Դիւանական	1	34
5. 5% ֆօնդի համար	8	—
6. Գրադարանին	10	36
Ընդամենը	158	70

1911 թւին եղել է մուտք 277 ր. 55 կ.
Ելք 268 ր. 52 կ.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ վարչութեան—Յովսէփ Մելիք Բէկլարեան. անդամներ—Նիկողայոս Ղլէչեան, Աղաջան Տէր Սահակեան. տ. Եղիսաբէթ Նաբաթեան և Աննա Մելիք Բէկլարեան (քարտուղար և գանձապահ)։

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. տ. Եղիսաբէթ Բալուղեան 2. Պօղոս Տէր Ներսիսեան

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Տէր Գարեգին քահ. Թումանեան	9 Իվան Իսահակեան
2 Տէր Մկրտիչ քահ. Տէր Յովսէփեան	10 † տ. Թագուհի Իսահակեան
3 Նիկողայոս Ղլեչեան	11 տ. Աննա Բալուղեան
4 Տ. Եկատերինէ Նանասեան	12 Համբարձում Իսահակեան
5 Մովսէս Եպիսկոպոսեան	13 Գանձ. առաջ. փոխանորդ Լևոն Վարդապետ
6 † Աղաջան Տէր Սահակեան	14 Սիմօն Մալիան
7 Յովսէփ Մելիք Բէգլարեան	15 տ. Շախխանում Մալիան
8 տ. Աննա Մելիք Բէգլարեան	16 տ. Եղիսաբէթ Նաբաթեան

Արդիւնքի մէջ. Վարչութիւնը նպաստել է տեղական դպրոցնե-րի աշակերտ-աշակերտուհիներին թոշակադրամով։

Մ Ո Ւ Տ Ք

1. Մնացորդ առ 1-ն յունուար 1912 թուի			49 18
2. 16 անդամավճարներից		48 —	
3. Գանձանակադրամ		6 13	
4. Արդիւնք գրքերի վաճառումից		2 70	
5. Ժետոնների վաճառումից		4 —	60 83
Ընդամենը			110 01

Ե Լ Ք

1. Չքաւոր աշակերտների թոշակադրամ.			
ա. Ծխական դպրոցի	25 00		
բ. Քաղաքային »	7 00	32 —	
2. Նպաստ չքաւոր ընտանիքներին		4 14	
3. Դիւանական ծախսեր		2 50	
4. 5% ֆօնդին		3 —	41 64
Մնացորդ առ 1-ն յունուար 1913 թ.			68 37
Ընդամենը			110 01

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ – Պօղոս Մարգարեան. գանձապահ—Մելքոն Կասաբեան. քարտուղար—Մկրտիչ Փաղարեան. Անդամներ—Կարապետ Տէր Բաղդասարեան, Տիգրան Գորգինեան. փոխ-անդամներ—Յակովբ Միասարեան և Յակովբ Ազնաուրեան. վերստուգիչ յանձնաժողովի անդամներ—Գրիգոր քահանայ Եսայեան, Ստեփան Ազնաուրեան և Պետրոս Տէր Բաղդասարեան։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Ազնաուրեան Յակովբ
2 Ազնաուրեան Ստեփան
3 Գորգինեան Տիգրան
4 Եսայեան Գրիգոր քահանայ
5 Զուրաբեան Յակովբ
6 Կասաբեան Դաւիթ
7 Կասաբեան Մելքոն
8 Մարգարեան Պօղոս
9 Մահտեսեան Պետրոս
10 Միասարեան Յակովբ
11 Պիլիլեան եղբարք Մկրտչեան
12 Վաթուլեան Յակովբ
13 Վաթուլեան Ղազար
14 Տէր Բաղդասարեան Կարապետ
15 Տէր Բաղդասարեան Պետրոս
16 Փաղարեան Մկրտիչ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ԿՏԱԿՆԵՐԻՑ

1. Գաբրիէլ Նիկիտիչ Սոնդուկեանի 1910 թ. նոյեմբերի 16-ին արուած կտակից.

«...Ինչ վերաբերում է իմ գրական երկասիրութիւններին, նրանցից «Պէպօ» կատակերգութիւնը իմ մահից յետոյ թողնում եմ իբրև լիակատար սեփականութիւն Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան...

«... Որովհետև 1910 թ. նոյեմբերի 16 ին. արուած կտակիս համաձայն «Պէպօ» կատակերգութիւնը իմ մահից յետոյ թողնում եմ իբրև լիակատար սեփականութիւն Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան, ուստի որևէ թիւրիմացութեանց տեղիք չտալու համար, սրանով յայտարարում եմ, որ վերոյիշեալ կարգադրութիւնս թողնելով իր ոյժի մէջ, «Պէպօ» կատագերգութեանս տպագրութիւնը լիակատար ժողովածուի մէջ և նոյն լիակատար ժողովածուի վաճառելու իրաւունքը վերապահում եմ իմ ժառանգներիս, որոնց մասին յիշել եմ միևնոյն կտակիս մէջ...»։

2. Այրի Եկատերինա Միխայլովնա Նաղիևանի կտակից, կազմուած 1907 թ. փետրուարի 15-ին։ Կտակակատարներ՝ բժիշկ Բագրատ Աբրահամովիչ Նաւասարդեան, Իվան Նիկիտիչ Եղիազարեան, Արտաշէս Արտեմովիչ Շիխեանց։

«.. Եօթերորդ. Թիֆլիսի սահմանայծից այն կողմը գտնւող ինձ պատկանող հողից երկու դեսեատին նւիրում եմ իբրև լիակատար սեփականութիւն Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան...»

3. Վլադիկավկազի բնակչուհի այրի Եկատերինա Արկադեվնա Սոմխիևի կտակից, հաստատուած 19-ին ապրիլի 1904 թւին։ Կտակակատարներ՝ Նիկօլայ Գրիկուրով, Գրիգոր քահանայ Շախնազարով և Դաւիթ Սարաջև։

«... ա. Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը նւիրում եմ չորս հարիւր ռուբլի...»

4. Այրի Կատարինէ Տէր Մովսիսեանի կտակը.—Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Սաթունեանը նոյեմբերի 11-ին 1910 թ. № 1852 գրութեամբ յայտնում է հետևեալը,

Կ. Հ. Բար. ընկերութեան։ Ի տէր հանգուցեալ Կատարինէ Տէր

18	Իգդիրի »	513 87	595 59	— —	— —	— —	30 92
19	Լագոդաղի »	165 25	200 —	— —	— —	— —	
20	Կաղզւանի »	107 36	61 33	336 81	— —	— —	
21	Հաղբութի »	316 20	206 53	109 67	— —	— —	
22	Ղազախի »	170 20	170 20	— —	— —	— —	
23	Ղափանի »	572 38	582 98	19 60	— —	— —	
24	Ղուբայի »	179 80	175 35	137 05	— —	— —	
25	Մօզդօկի »	715 77	854 65	861 89	— —	— —	
26	Նոր-Բայազէտի »	130 17	42 99	87 61	— —	— —	
27	Նուխւայ »	482 76	325 65	647 62	— —	— —	
28	Նօվօրօսսիյսկի »	130 50	397 02	4 38	— —	— —	
29	Շուշւայ »	2108 57	2376 33	55 58	— —	4300 —	
30	Շամշադինի-Բերդի »	120 —	74 —	46 —	— —	— —	
31	Ջխարի »	825 74	832 87	— —	— —	— —	
32	Պեատիգօրսկի »	1068 20	1687 22	97 34	— —	567 94	
33	Սղնախի »	543 57	734 38	87 09	— —	— —	
34	Սուրամի »	64 —	64 —	— —	— —	— —	
35	Սուխումի »	73 97	66 65	7 22	— —	— —	
36	Վերին-Ագուլիսի »	223 —	92 13	127 87	— —	— —	
37	Վլադիկաւկազի »	2519 30	2315 20	686 98	— —	1901 03	
38	Քարվանսարայի »	184 61	167 31	17 30	1725 23	— —	
39	Քութայիսի »	472 68	396 03	132 48	— —	— —	
40	Ցարսկ. Կոլօդցիի »	106 93	124 41	— —	— —	— —	15 36
41	Օլթւայ »	160 —	160 —	— —	— —	— —	— —
42	Օնիի »	101 50	10 94	90 56	— —	— —	— —
	Ընդամենը	209856 34	213150 09	17061 44	169408 90	324158 34	14896 08

Ընդ. զուտ կարողութիւնը (510628 ր. 68 կ. — 14896 ր. 08 կ.)=495732 ր. 60 կ.

Ծանօթ. [1]) Այս ցուցակի մէջ չեն մտնում այն ճիւղերի կարողութիւնները, որոնց մասին ընկերութեան խորհուրդը տեղեկութիւն չի ստացել:

[2]) Կենտրոնի արժէթղթերը հաշւած են անւանական արժէքով:

5% ներքին փոխառ. 1906 թ. արժէթուղթ

Աբովեան Նազարեան ֆոնդ 6562 ր. 50 կ.

7 *թերթ* 937,5 *րուբլանոց*

Сер. 242 №№ 04151—04165, 04796—04800, Сер. 264 №№ 05576—05590.

5% ներքին փոխառութեան 1908 թուի արժէթուղթ

Աբովեան Նազարեան ֆոնդ 100 ր. —

1 *հատ* 100 *րուբլանոց* № 056377.

5% խաղարկութեան տոմսակներ

Դպր.-ուսուցչ. ֆոնդի 3 հատ I, II *և* III *կարգի տոմսեր*		300 ր.—
Խուդադեան գումարի 6 *հատ* I *և* II *կարգի տոմսեր*		600 ր. —
Անձեռնմխելի » 6 » I *և* II » »		600 ր. —

8 հատ I *կարգի տոմսակներ*

№№ 05703/31, 04478/49, 10591/22, 19578/37, 10994/14, 01414/35, 09236/35, 05249/44.

6 հատ II *կարգի տոմսակներ*

№№ 12377/49, 00912/20, 05331/31, 17102/37, 14235/20 14473/47.

1 հատ III *կարգի տոմսակ* № 14937/4

Թիֆլիսի Առևտրական բանկի ակցիաներ

Խուդադեան գումար 28000 ր. —

80 ակցիա №№ 36, 37, 41, 488, 2076—2080, 4901—4931, 9559--9598.

Թիֆլ. Ազնուականների բանկի 5% արժէթղթեր

Դպրոցական ֆոնդ **10000** ր. —

Ուսուցչական ֆոնդ **10000** ր. —

20 հատ 100 րուբլանոց №№ 39 / 58858, 58859, 58882—58884, 58796

40 / 59226, 59327, 59328, 59334—59338, 59179—59182, 59175, 59176

Վերոյիշեալ 287662 *ր.* 50 *կ. անուանական արժէքով տոկոսաբեր թղթերից* 195262 *ր.* 50 *կոպէկի մի մասը տրուած է Թիֆլիսի Պետական բանկին ի պահեստ* №№ 44047, 44048, 45481, 41751, 41752 *և* 41754 *ընկալագրերով, միւս մասը գտնւում է նոյն բանկում* № 263 *յատուկ ընթացիկ հաշւի ապահովութեան համար։ Իսկ դպրոցական-ուսուցչական ֆոնդի* 92400 *ր. Թիֆլ. քաղ. վարկի ընկ. և Ազնուականների բանկի* 5 *տոկոս արժէթղթերը գտնւում են Առևտրական բանկի* № 363 *արկղում, որի* 3 *հատ բանալիները խորհրդի* 3 *անդամի ստորագրութեամբ և* № 3711 *ընկալագրով պահ է տրուած Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեանը։*

ՑՈՒՑԱԿ

***1912** թուի ընթացքում ճիւղերից ստացած անձեռնմխելի եւ պահեստի գումարների*

Նօվօրօսսիյսկի ճիւղից		28 ր. 43 կ.
Ղազախի	»	19 ր. 90 կ.
Ախալքալակի	»	30 ր. 50 կ.
Սուխումի	»	6 ր. 84 կ.
Լագոդաղի	»	8 ր. 54 կ.
Պետրովսկի	»	78 ր. 30 կ.
Ախալցխայի	»	58 ր. 20 կ.
Կարսի	»	51 ր. 17 կ.
Թելաւի	»	9 ր. 05 կ.
Գօրւայ	»	5 ր. —
Ղափանի	»	14 ր. 60 կ.
	Ընդամենը	310 ր. 53 կ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՍՏԱՑՈՒԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԺՈՂՈՎՆԵՐԻՑ ՀԱՇԻՒՆԵՐԸ

Արմաւիրի ճիւղ։ Վարչութեան ուշադրութիւնը ապագայի նկատմամբ կենտրոնացած է հետեւեալ խնդիրների վրայ. Ա.) միջնորդել Արմաւիրի գիւղական հասարակութեան առաջ, որ հող յատկացնէ ընկերութեան սեփական շէնք կառուցանելու համար, որի ծախքերը պիտի հոգացուեն կենտրոնական խորհուրդին 1896 թուից պահ տուած գումարով։ Բ.) Ձեռագործի դպրոցը կազմակերպելուց յետոյ, նրան կից բանալ նաեւ «մանկական պարտէզ» ժամանակի պահանջի համեմատ յարմարութիւններով։ Եթէ այս վերջին ձեռնարկութիւնը չյաջողուի ինչ-ինչ պատճառներով, Արմաւիրի Հայոց եկեղեցական-ծխական օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան հետ համաձայնութիւն կնքելուց յետոյ, աւելացնել օրիորդաց դպրոցի դասարանների թիւը ընկերութեան ծախքով, ընկերութեանս վերապահելով նաեւ որոշ իրաւունքներ։ Գ.) բանալ ժողովրդական գրադարան-ընթերցարան։

ՄՈՒՏՔ

1 Մնացորդ առ 1-ն յունվար 1912		1040 ր. 94 կ.
2 47 հոգուց անդամավճարներ	141 ր. —	
3 Երեկոյթից	647 — 45	
4 Նուէրներից	25	813 45
Ընդամենը		1854 39

ԵԼՔ

1 Նպաստ տեղական ծխական դպրոցին	500 ր. —
2 Տառապեալներին	81 — 70
3 Ձեռագործի դպ. համար նախապատր. ծախք	14 — —
Ընդամենը	595 — 70 —

Առ 1-ն յունվար 1913 թ. ճիւղի ընկ. դրամարկղում մնում է առ ձեռն գումար 1258 ր. 69 կ.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Նախագահ Վարչութեան՝ Տէր-Գաբրիէլ քահանայ Թուէլեան, քարտուղար՝ Գեանջեցեան Լեւոն, գանձապահ՝ Յովհաննիսեան Յա-

կովբ.։ Անդամներ՝ Տէր Գէորգ քահանայ Սէֆերեան, Այվազեան Համբարձում։ Փոխանդամներ՝ Թոփչեան Սարգիս և Ալլահվերդեան Անդրէաս։

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1 Դանեան Աղէքսանդր
2 Դարչինեան Աստուածատուր
3 Դարչինեան Սարգիս
4 Նահապետեանց Վաղարշակ
5 Սեֆերեանց Տէր Գէորգ քահ.
6 Առաքելեանց Առաքել
7 Յովհաննիսեանց Բաղդասար
8 Պետրոսեանց Յարութիւն
9 Պետրոսեան Նիկողայոս
10 Յակովբեանց Վարդան
11 Աւագեանց Շուշան
12 Բարոնեանց Գէորգ
13 Սէֆերեան Սէրովբէ
14 Սէֆերեանց Իսահակ
15 Սէֆերեանց Աբրահամ.
16 Գասպարեան Պետրոս
17 Գասպարեան Աննա,
18 Շահնազարեան Սիմէօն
19 Շահնազարեան Յուլիանէ
20 Տէր-Սարգսեան Աբրահամ
21 Պողովեան Յարութիւն
22 Պողովեան Մարիամ
23 Սէֆերեան Պօղոս
24 Աւագեան Լեւոն
25 Սէֆերեանց Աղէքսանդր
26 Սէֆերեանց Թագուհի
27 Սէֆերեան Եղիսաբէթ
28 Սէֆերեանց Հեղինէ
29 Սէֆերեանց Վարվառէ
30 Սէֆերեան Գէորգ
31 Սէֆերեան Կոստանդին
32 Սէֆերեան Գէորգ
33 Սէֆերեան Վարվառէ
34 Հալաճեան Յովակիմ
35 Խալաթեանց Մկրտիչ
36 Գրիգորեանց Ակսէնտիոս
37 Պետրոսեան Յարութիւն
38 Գալոյեան Աղէքսանդր
39 Թոփչեան Սարգիս
40 Գեանջեցեան Լեւոն
41 Թուէլեանց Տէր-Գաբրիէլ քահ.
42 Յովհաննիսեանց Յակովբ
43 Եգորեան Ստեփան
44 Բախչիեան Մկրտիչ
45 Խասապէտեան Սոֆիա
46 Գասպարեան Մարիամ
47 Սիմէօնեան Աղէքսանդր

Թոլթիայ ճիւղ։ Վարչութիւնը իր միջոցներից նպաստել է տեղական ծխական դպրոցին։

М Ո Ւ Տ Ք

1 Մնացորդ առ 1-ն յունւար 1912	30	ր.
2 Նուէր մի բարեգործից	500	ր.
Ընդամենը	530	ր.

Ե Լ Ք

1 Նպաստ տեղական հայոց ծխական դպրոցին	500	—
Մնացորդ առ 1-ն յունւար 1913 թ.	30	—
Ընդամենը	530	ր.

Նախագահ վարչութեան՝ Ասլրէլեան Անդրէաս, Քարտուղար՝ Ղազարոս Քագարեան։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱ-ՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Վերաստուգիչ յանձնաժողովս սոյն տարուայ ապրիլ 4 ից մին-չև 19ը իւր ունեցած մի շարք նիստերում քննելով ընկերութեան 1912 թուի հաշիւները գտաւ հետևեալը՝

1) Թիֆլիսի պետական բանկի ճիւղը յատուկ ընթացիկ հաշ-ւով առ 31 դեկտեմբեր 1912 թւ. ցոյց է տալիս ընկերութեան պարտքը 9648 ր. 77 կոպէկ, իսկ ընկերութեան մատեաններով ցոյց է տրուած 10648 ր. 77 կոպէկ, տարբերութիւն 1000 րուբլի։

2) 1912 թուին խորհուրդը բաց է թողել 45 հատ անդամակցա-կան գրքոյկներ՝ 1—451 համար անդորրագրերով, որոնցից 363 ը յանձնուած են, 31ը գրուած են, բայց չեն յանձնուած։ Բացի այս, 1911 թուի № 26 անդամակցական գրքոյկը գործածութեան մէջ է եղել նաև 1912 թուի ընթացքում, որից բաց է թողնու-ած 3 անդորրագիր. այսպիսով 1912 թուին ընկերութեան անդամ-դամների թիւը եղել է 366. մինչդեռ ընկերութեան հաշւով անդամ-ների թիւը ցոյց է տրուած 363։

1911 թուի վերոյիշեալ № 26 անդամակցական գրքոյկը գոր-ծածութեան մէջ լինելով 1912 թուին, առաջ է բերել միևնոյն հա-մարով անդորրագրերի, այն է՝ №№ 255 ի 256 ի և 257 ի կրկնու-թիւն, որից կարող է առաջ գալ թիւրիմացութիւն. ուստի կարևոր

է, որ նախորդ տարուայ անդամակցական գրքոյկները չգործադրուեն հետևեալ տարում։

1911 թուի ապառիկ մնացած 11 անդամավճարներից 5-ը գանձուել են 1912 թուին, իսկ մնացած 6 ը գանձուած չէ։ 1911 թուի՝ № 27 անդամակցական գրքոյկը, որը 1911 թուի ստուգութեան ժամանակ յանձնաժողովի առաջ չկար, ներկայացուած է 1912 թ. և № 260 անդորրագրով, նրա մէջ յիշուած անդամավճարը գան-ձուել է 1912 թուին։

Այսպիսով 1912 թուին ստացուելու էին 1912 թուի անդամա-վճարներ 366 հոգուց 1830 ր., 1911 թուինը 6 հոգուց՝ 30 ր. ըն-դամենը 1860 րուբլի. մինչդեռ ընկերութեան հաշւով ցոյց է տըր-ուած 1840 րուբլի, տարբերութիւն 20 րուբլիով պակաս։

3) Ընկերութեան միքանի ճիւղեր ուղարկած չլինելով տարեկան հաշիւները, ոչ միայն 1912 թուի, այլ և նախորդ տարիների, Յանձ-նաժողովս հնարաւորութիւն չունեցաւ ստուգել, նախ՝ անձեռնմխելի և պահեստի դրամագլուխներին յատկացուելիք 5°/$_0$ գումարների քա-նակը, և երկրորդ՝ թէ որքան են պարտք մնում ճիւղերը այդ հաշ-ւին առ 1-ն Յունվար 1913 թ. (կանոնադրութիւն յօդուած 6-դ. և 65-դ.)։

Այսպէս օրինակ հաշիւներ չեն ուղարկել հետևեալ ճիւղերը,

1) Արմաւիրի ճիւղը, 2) Գորիսինը 3) Բորժոմինը, 4) Փոթիինը
5) Սուխումինը և 6) Պետրովսկինը, սկսած 1910 թուից.
7) Քութայիսինը և 8) Կաղզւանինը 1910 թուինը միայն.
9) Ղարսինը, 10) Թէմիրխան-Շուրայինը 11) Ջալալօղլունը չեն ուղարկել սկսած 1911 թուից.
12) Դուշէթինը և 13) Արդուինինը 1911 թուինը միայն։
14) Բաթումինը և 15) Սղնախինը 1909 և 1910 թուերինը
16) Նոր-Բայազեդը չէ ուղարկել 1908, 1909, 1910 և 1911 թ.
17) Դէրբէնդի ճիւղը սկսած 1908 թուից։

4) Եղբայրք Անանեանների՝ յօգուտ Դպրոցական-Ուսուցչական ֆոնդի խոստացած 10000 րուբլին դեռևս գանձուած չէ, չնա-յելով որ 1912 թուի վերջը ժողովարարութիւնը փակուած է։

5) Կան ծախքեր, որոնք կատարուել են նախահաշւից դուրս. ինչպէս օրինակ Հաւլաբարի ձրի ճաշարանին 100 ր. Լազարեան ճեմարանին ի յիշատակ հանգուցեալ Գրիգոր Խալաթեանի 50 րուբլի, Կողէն գիւղի սովեալներին 155 րուբլի։ Բացի այս, կան կատարուած ծախ-

քեր, որոնք աւելի են, քան նախահաշւով որոշուած գումարները. ինչպէս օրինակ՝ Ճաշարանի վերայ 1388 րուբլի 18 կոպէկով աւելի է ծախսուած, Դպրոցների վերայ 1221 ր. 16 կոպէկով, Որբանոցի վերայ 249 րուբլի 51 կոպէկով։

Նախահաշւով նախատեսնուած մուտքի գումարները պակաս են ստացուած հետևեալներից։ Անդամավճարներից 560 րուբլիով, Ճաշարանից 526 ր. ընդհանուր նուէրներից 426 րուբլիով, երեկոյթներից 439 ր. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդից 1333 րուբլիով. քարվանսարայից 1261 ր. իսկ բոլորովին չեն ստացուել հետևեալներից՝ Ախալքալակի գիւղի կալուածներից 650 րուբլի և պ. Միքայէլ Ալիբէկեանից 300 րուբլի։

Այսպիսով շեղուելով նախահաշւից, առաջ է եկել ընդհանուր հաշիւների մէջ 5348 րուբլու դէֆիցիտը, որը և ծածկուել է նախորդ տարուայ ծախուց գումարից։

6) Առաջարկութիւն. Ընկերութեան պատկանեալ տոկոսաբեր թղթերի մի մասը գտնւում է առևտրական բանկի արկղում, որի համար բանկը պատասխանատու չէ. իսկ մի մասը—տրուած է ի պահեստ պետական բանկը, որի համար և Ընկերութիւնը վճարում է բանկին որոշ գումար. Յանձնաժողովս ապահով և շահաւէտ է համարում Քաղաքային Վարկի Ընկերութեան 139900 րուբլու օբլիգացիաները դնել ի պահեստ Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան մէջ, որը ընդունում է ձրի և պատասխանատու է Ընկերութեան առաջ, իսկ մնացած տոկոսաբեր թղթերը թողնել Պետական բանկը։

Վերջացնելով հաշիւների քննութիւնը Յանձնաժողովս պարտք է համարում յայտնել, որ Ընկերութեան հաշուապահական մասը տարուած է կանոնաւոր, գործողութիւնները համապատասխան փաստաթղթերի։

Թիֆլիս, 19 ապրիլի 1913 թ.

Նախագահ Յանձնաժողովի՝ Ս. Խարազեան

Անդամներ
Ա. Աւագեանց
Զ. Արայեանց
Մ. Մաղաքեանց

ԽՈՐՀՐԴԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընկերութեան վերստուգիչ Յանձնաժողովի արած նկատողութեանց առթիւ։

1) Խորհուրդը ի դիմաց իւր վճարումների, դեկտեմբերի 31 ին տուել է իւր պարտապաններին փոխանակ դրամի, պետական բանկի № 966388 չէկը մի հազար րուբլի արժողութեան, որպիսի գումարը այդ օրուայ թւով գրուած է մուտք ընկերութեան դրամարկղի մատեանում։ Ակներև է այդ չէքը պարտապանները ներկայացրել են պետական բանկին, ոչ թէ այդ օրը, այլ հետևեալ օրերին. որից և առաջացել է մի հազար րուբլու տարբերութիւնը։

2) Ի նկատի ունենալով, որ շատերն ինքնաբերաբար դժուարութեամբ են անդամ գրւում, ուստի խորհուրդը, նրանց, որոնք որոշ ժամանակ չեն վերանորոգում անդամակցական վճարներն, ուղարկում է պատրաստի անդորրագիր, յուսալով որ կվճարեն, սակայն լինում են այնպիսիներն, որոնք վերադարձնում են, չկամենալով անդամագրուել, ահա այդ վերադարձուածներն են, որ յանձնաժողովը նկատում է, թէ չի յանձուած։ Լինում են և այնպիսիներն, որոնք զլանում են նոյն իսկ անդորրագրերը վերադարձնել. այդպիսիների համար, խորհուրդը ստուգելուց յետոյ, կազմում է արձանագրութիւն, ոչնչացած համարելով անդորրագրերը և անդամների ու ծառայողների միջոցաւ հետևում է, որ այդպիսիները չօգտուեն ընկերութեան անդամների իրաւունքով։

1911 թւի №№ 355, 256 և 257 անդորրագրերը շրջանառութեան մէջ են եղել յակամայից, որովհետև մի քանի անդամներ ցանկացել են իրանց անդամակցական վճարներն ի հաշիւ 1912 թւի վճարել 1911 թւին, չունենալով պատրաստ 1912 թւի անդորրագրեր, յակամայից տրուել են 1911 թւի անդորրագրեր, որ պէտք է ասած եզակի դէպքն է։

Զորս անդամի տարբերութիւնը կայանում է հետևեալում.

ա) № 378 անդորրագրով անդամակցական վճարն ստացուել է 1913 թուին։

բ) №№ 302, 320 անդորրագրերը չեն վերադարձուած և վճարն չի ստացուած, իսկ № 281 սխալմամբ երկու անգամ գրըուած լինելով (միւսը № 80), երկրորդ անգամը չի ստացուել և անդորրագիրն էլ կորցրած լինելով, չի վերադրձուել։ Վերջին երկու դէպքի համար կազմուած է պաշտօնական արձանագրութիւն (տես խորհ. արձան. մարտի 16 ից)։

3) Խորհուրդն ինքը զգում է, որ մի քանի ճիւղեր շեղւում են իրենց ընթացքից, ցանկալի արդիւնք չեն ցոյց տալիս և ժամանակին հաշիւներ չեն ներկայացնում։ Նա ամեն կերպ, որքան հնարաւոր է և միջոցները ներում են, աշխատել է դրանց առաջն առնելու, իր մի շարք գրած շրջաբերականներով, գրութիւններով, յատուկ ներկայացուցիչների միջոցով և այլն։ Նա շատ լաւ գիտէ, որ նման ճիւղերին կարելի է առաջարկել փակել, բայց 'ի նկատի առնելով, որ դրանցից շատերը կարող են որոշ ակտիւ գործունէութիւն ցոյց տալ, եթէ մի քանի պայմաններ փոխուեն և որ դրանցից ամեն մէկը ունի իւր կատարելիք դերը, յապաղեցնում է փակման խնդրի յարուցանելն, յուսալով, տալ նրան, որոշ ժամանակից յետոյ ցանկալի ընթացք։ Ճիւղերից շատերը, որոնք անցեալներում թոյլ գործունէութիւն են ունեցել, այժմս, շնորհիւ վարչութեան կազմի փոփոխման, ցոյց են տալիս յաջող գործունէութիւն։ Խորհուրդս յուսով է, որ յիշեալ ճիւղերն էլ որոշ ժամանակից յետոյ, կարող կլինեն իրենց վրայ դրուած յոյսերն արդարացնել։

Մանաւանդ, երբ կենդրոնը, նախորդ տարիների նման, կունենայ իւր յատուկ շրջիկ լիազօրըն, որը իւր պարբերական այցելութիւններով կենդանութիւն կներշնչէ նրանց և որոշ կարգ ու կանոն կհաստատի։ Խորհուրդս վաղուց է, որ որոշումն է կայացրել հրաւիրել մի շրջիկ լիազօր (տես արձ. խորհ 17-ն նոյեմբերի)—սակայն համապատասխան անձնաւորութիւն չգտնելով, որոշումը մնում է անկատար։

4) Եղբայրք Անանեաններին մի քանի անգամ դիմումներ եղել են, խօստանում են մօտ ապագայում մուծել գումարը։

5) Հալաբարի ձրի ճաշարանին տրուած է 100 ր. Նպաստ այն պատճառով, որ շատ փոքրահասակ աշակերտ-աշակերտուհիներ դժուարանալով հալաբարից գալու ընկ. ճաշարանն և կրկին վերադառնալ, խորհուրդն որոշեց այդպիսիներին ճաշ տալ Հալաբարի

մանկական ձրի ճաշարանում, որին տուեց իբր վճար 100 ր.։ Կըրգենցիներին օգնեց կարիքից ստիպուած, մինչև նրանք կարողացան օգնութիւն ստանալ Նպաստամատոյց յանձնաժողովից. այդ պահանջում էր ընկերութեանս թէ կոչումն և թէ կանոնադրութիւնը։

Հանգուցեալ պրոֆեսոր Գրիգոր Խալաթեանի յիշատակին տըրուած 50 ր. եղել է ի հետևումն Լազարեան ճեմարանի վարչութեան դիմումի, որոնք որոշել են հաւաքած գումարի տոկոսով պահել ի յիշատակ հանգուցեալի թոշակաւոր նրա անուամբ։ Տալով 50 ր. խորհուրդս կատարել է ընկերութեան բարոյական պարտքը դէպի հանգուցեալի ցոյց տուած գործերն։ Այդ գումարն այնքան չնչին էր, որ դրա համար ընդհանուր ժողով գումարելն խորհուրդս գտաւ աւելորդ։

Ճաշարանի վրայ եղած աւելորդ ծախքը եղել է ստիպճանաբար շնորհիւ կենսական մթերքների թանկութեան, կարիքից ստիպուած, ճաշողների քանակի շատութեան պատճառաւ. բացի այդ, 540 ր. վճարուած է՛ի հաշիւ 1911 թւի։ Պետերբուրգի եկեղեցական խորհրդից պակաս ստանալն, արդէն խորհուրդս առիթ է ունեցել յայտնելու ընդհանուր ժողովին, այդ մասին կայ յիշատակութիւն և սոյն տարւայ տեղեկագրում։

Մուտքի պակասորդը բացատրւում է նրանով, որ խորհուրդը, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, փակելով իւր հաշիւներն դեկտեմբերի 31-ին, շատ ստանալիքներ —ինչպէս են ճաշավարձեր մօտ 300 ր., քարվանսարայի խանութպաններից մօտ 600 ր. և այլն —մտել են ընկերութեանս դրամարկղը 1913-թուին. ուստի և կանխիկ ստացուած գումարներն քիչ են ցոյց տուած։ Գալով Ախալքալաքի կալուածքին, դրա վճարի խոշոր մասը ստացուած է 1911 թուին. իսկ միւս ամիսներինը՝ 1913 թ. նոր պայմանի ուշանալու պատճառաւ։

Պ. Ալիբէգեանի խոստացած 300 ր. գումարն ցարդ չի ստացուած, որովհետև խորհուրդս բանակցութեան մէջ է պ. Ալիբէկեանի հետ, շատացնելու դպրոցին տրուելիք նպաստի քանակը, հնարաւորութիւն տալով դպրոցը երկդասեանի վերածելու։ Պէտք է ասած պարոնը արդէն համաձայնութիւն տուել է և շուտով կստացուի թէ յիշեալ գումարն և թէ նրա դրական պատասխանը։

6) Վերատուգիչ յանձնաժողովի առաջարկութիւնից տոկոսա-

բեր Թղթերի առթիւ, խորհուրդս կաշխատի օգտուել հնարաւորութեան սահմանում։

Խորհուրդս պարտք է համարում յայտնելու, որ վերստուգիչ յանձնաժողովի նկատած կէտերին, հաշիւների քննութեան ժամանակ իսկ, տուել է իւր բացատրութիւնը, հանդերձ հարկաւոր փաստաթղթերով։

Նախագահ Խորհրդի՝
Սամսոն Ցարութիւնեան

Փոխ Նախագահներ Խորհրդի՝
Իշխանուհի Մարիամ Թումանեան
Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան

Խորհրդի Անդամներ՝
Առստամեան տիկին Հեղինէ
Արէլեան Ներսէս
Աղասարեան Բողդան
Լիսիցեան Սահակ
Մելքումեան Սարգիս
Մխիթարեան Արամ
Տէրեան Կարապետ

Գանձապահ-անդամ Խորհրդի՝
Աւետիս Փօղոսեան

Քարտուղար-անդամ Խորհրդի՝
Ցակովբ Շահնազարեան

Գործավար՝
Կար. Կարապետեան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովների 1912 թ.

I

Յունվարի 8-ին ներկայութեամբ 46 անդամի կայացաւ ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր նախագահ ընտրուեց բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանը. քարտուղար՝ Յովհաննէս Մալխասեանը։ Ժողովի ընթացքում եւս եկան 5—6 անդամ։ Ժողովի հարցերն էին. —

1. Քննութիւն և հաստատումն կենդրոնի և ճիւղերի 1912 թ. նախահաշիւների։

2. Թիֆլիզի Հայոց Դրամատիկական Ընկերութեան և Թիֆլիսի քաղաք. վարչութեան առաջարկութիւնները հանգուցեալ Պետ. Ադամեանի իրերը նրանց յանձնելու։

3. Հանգ. Աւետիս Վարդապետեանի կտակած գումարի գործադրութիւնը։

4. Խորհրդի առաջարկութիւնը Ա. Փօղոսեանի նուիրած գրքերի մասին։

Նախկին ժողովի արձանագրութիւնը կարդացուելուց և հաստատուելուց յետոյ ընկերութեան խորհրդի նախագահը յայտնեց, որ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն առաջարկում է ընկերութեանս իրեն յանձնելու հանգուցեալ Պետրոս Ադամեանի այն իրերը, որ 1894 թ. պ. Աղեքսանդր Ստեփանեանը մի գրութեամբ նուիրել է ընկերութեան. կարդացւում է այդ գրութիւնը, դրա հետ և խորհրդի եզրակացութիւնը, որ 1907 թ. Հ. Դրամատիկ. ընկերութիւնն եւս խնդրել է իրեն յանձնելու, սակայն ընդհանուր ժողովը մերժել է այն պատճառաբանութեամբ, որ Հ. Դրամատիկ. Ընկերութիւնը իրեն համար հաստատուն շէնք չունի. երբ ունենայ, այն ժամանակ կարելի կը լինի յանձնել նրան։

Աղ. Ստեփանեան.—Այդ իրերից պակաս են, այժմ այնքան չկան,

ինչքան եղել են. լաւ կը լինի յանձել քաղաքին, այնտեղ կը մնան անվտանգ։

Փիլ. Վարդազարեան.—Ցայտնում է, որ Աղ.Ստեփանեանի ասածը պէտք է ճշտել, իրմէ է, որ իրերից կորսուել են։

Ս. Ցարութիւնեան. — Առաջարկում է հարցը սկզբունքով որոշել. յանձնել քաղաք. վարչութեան, թէ՞ պահել։ Սկզբունքն այն է որ Պ. Ադամեանը լինելով հայ բեմի դերասան, պէտք է որ նրա իրերը պահպանուեն հայկական հիմնարկութիւններում. իսկ գալով կորսուածներին՝ պէտք է ստուգել, եթէ իրերից կորսուել են ընկերութեան ներկայ կազմի ժամանակ, կը հետևենք պատճառներն իմանալու, իսկ եթէ կորսուել են անորոշ ժամանակներում, այսինքն այն ժամանակ, երբ հայ ժողովրդի դրութիւնը խառն էր՝ դրան չենք կարող հետևել. և երբ խորհուրդը ճշտէ՝ իր զեկուցումը կըտայ ընդհանուր ժողովին. հրաւիրում է Աղ. Ստեփանեանին ևս ներկայ լինել իրերի ստուգման ժամանակ։

Ժողովը որոշում է մերժել քաղաքային վարչութեան առաջարկը և յանձնարարում է ընկերութեան խորհրդին ճշտել կորած իրերի մասին և զեկուցանել այդ մասին ընդհանուր ժողովին։

Ընկ. խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեանը զեկուցանում է, որ հանգուցեալ Աւետիս Վարդապետեանի կտակն եղել է մի այնպիսի ժամանակ, երբ դժուար է եղել որոշակի իմանալ կտակի միտքը. հանգուցեալը կտակել է ընկերութեան իր կարողութեան $^1/_3$ մասը, այդպիսի առաձգական կտակը հաստատուել է 1911 թ. նահանգական վարչութեան կողմից. հանգուցեալի կարողութեան ցանկը կազմել է նրա եղբայրը, այնպէս որ այդ կարողութեան $^1/_3$ մասը դուրս է եկել 1114 ր. 82 կ. բացի այդ կայ պարտամուրհակներ, որոնց $^1/_3$ մասը կը լինի մօտ 400 րուբլի, որով ընդամէնը կը դառնայ 1500 ր.։

Խորհուրդը որոշեց այդ 1500 ր. գումարով գնել հայագիտական գրքեր և բաց անել գրադարանում մի բաժանմունք յատկապէս հանգուցեալ Վարդապետեանի անունով, ապա աւելացրեց, որ կայ այդ կտակի առթիւ տուած մի յայտարարութիւն խորհրդի անդամներ. պ.պ. Շիրինեանի, Ս. Մելքումեանի և Զ. Մամուլեանի կողմից, որով առաջարկում են այդ գումարը յատկացնել գաւառներում դըպրոցներին կից գրադարաններ բաց անելու համար. ինքը Ս. Յարութիւնեանը այդպիսի մի առաջարկ գտնում է անյարմար. դրա փոխարէն առաջարկում է Թիֆլիսի գրադարանից աւելորդ գրքերն ուղարկել

գաւառները. աւելացնում է, որ 1500 ր. դժուար է գաւառներում նկատելի բան անել, իսկ այստեղ, իբրև լաւ օրինակ, խրախուսիչ կը լինի շատերի համար։

Ցով. Մալխասեան.—Ասում է, որ գաւառները խաւարի մէջ են, այդտեղ է հարկաւոր գրքերի տարածումը, լաւ է այդ գումարով գիւղերում գրադարաններ հիմնել։

Նար. Շիրինեան.—Հաստատելով Ցով. Մալխասեանի ասածը, աւելացնում է որ մենք կարիք չունենք Վարդապետեանի անուան այստեղ գրադարան հիմնել. այլ հանգուցեալի անունով, գաւառներում, շատ տեղերում մենք հիմնենք գրադարաններ։ Այնուհետև նկարագրում է գաւառների աղաղակող կարիքը, գտնում է որ ինչպէս մենք դպրոցական գործում աշխատում ենք գաւառների օգտին, նոյն կերպ պիտի աշխատենք գրադարանների վերաբերսամբ։

Նր. Ղալայեան.—Եթէ բացել ենք մենք միմիայն դպրոցներ, չենք ծառայած լինի գործին բեղմնաւոր կերպով, եթէ չը տանք մանուկներին կարդալու գրքեր. երբ գրքեր չկան՝ դպրոցը վերջացնող մանուկները մոռանում են իրենց սովորածը. գրադարան բաց անելու ու պահպանելու ձեր՝ ժողովրդի նուէրներն են իրեն ծխականութեան ժամանակ, որ կարելի է միշտ օգտուել. մենք չը պէտք է մտածենք թէ գրադարանի անունը ի՞նչ կը լինի, այլ պէտք է մըտածենք նրա օգտի մասին. հանգուցեալ Վարդապետեանի անունը գիւղում թէ քաղաքում՝ այդ միևնոյն է. անհրաժեշտ է առաւելութիւնը տալ գիւղերին։

Բագ. Միրիմանեան.—Խնդրում է կարդալ հանգուցեալ Վարդապետեանի կտակը, ուզում է իմանալ, թէ ո՞վ է բաց արել կտակը. տուած բացատրութիւնից երևում է, որ կտակակատարն եղել է նրա եղբայր՝ պ. Առաքել Վարդապետեանը։

Աբր. Քահ. Ղազազեան.—Գտնում է, որ հին գրքեր գիւղերի գրադարաններին ուղարկելը քիչ է, ըստ որում այդպիսի գրքերն իրենց ժամանակն արդէն անց են կացրել, լաւ է հանգ. Վարդապետեանի գումարը պահել և նրա % ով ամեն տարի նոր գրքեր առնել, ուղարկել և այդպիսով հիմնել գաւառներում գրադարաններ, որով թէ վարդապետեանի անունը կը մնայ և թէ գրադարաններ կը հիմնուեն։

Ցով. Տէր—Միրաքեան.—Ցայտնում է իր ստացած տեղեկութիւնները գաւառից. այդ բերած տեղեկութիւնները պարզ ցոյց են

տալիս, որ գիւղերում գրքեր չը կան. գրքեր չը լինելու պատճառով մանուկները մոռանում են իրենց սովորածը, դրա համար յարմար է համարում գիւղերում բանալ գրադարաններ։ «Ես որպէս թեմական տեսուչ, որքան կարեւորութիւն եմ տալիս դպրոցին, նոյնքան էլ գրադարանին, լաւ է յատկացնել գիւղին, քան կենտրոնին, և գիւղը թողնել առանց ոչնչի. իմ կարծիքով Նուբարաշէնի անունը աւելի կանմահանայ նրա անունով գիւղերում գրադարաններ բաց անելով»։

Մկրտիչ Մաղաքեան.—Միանում է խորհրդի 3 անդամի առաջարկութեանը և առաջարկում է այսօր և եթ բաժանել 3 մասի և 50 գրադարան միանւագ բանալ։

Առաք. Աւագեան.—Գիւղի պահանջն այնքան շատ է, որ 6 տարի սրանից առաջ դիմեցին մեզ, գրքեր խնդրեցին, այդ նպատակով 400—500 ր. հաւաքուեց և գրքեր առնուեց ուղարկուեց. (թէև այդ գրքերը. չը վերադարձուեցին) առաջարկում է գիւղերում գրադարաններ բանալ։

Փիլ. Վարդազարեան Միանում է խորհրդի երեք անդամի առաջարկին, այն է գիւղերում բանալ գրադարաններ։

Նալբանդեան.—Տեղտում է՝ որն է լաւ. գրադարան հանգ. Վարդապետեանի անուան քաղաքում պահել, թէ գիւղին օգնել. գտնում է, որ լաւ է ունենալ Թիֆլիսում, հայոց մտաւոր կենտրոնում մի գիտական գրադարան, որտեղից մեր գրագէտները, և ուսումնականները պէտք եղած ժամանակ կարողանան օգտուել։

Ցակ. Շահնազարեան.—Ասում է. խորհրդի համար նորութիւն չէ, որ գաւառները գրքերի կարիք ունին. խորհուրդը առանց այդ էլ գրքեր ուղարկում է, բացի այդ ուղարկում է և ֆոնդի հրատարակած գրքերից. և առաջարկում է, որ այդտեղ գրադարան բանալու գործը թող հոգան ուսուցիչները. դէմ է հանգ. Վարդապետեանի գումարով գաւառներում գրադարաններ բանալուն։

Ս. Ցարութիւնեան—Գտնում է, որ ճառախօսները սխալւում են իրենց առաջարկութեան մէջ, նրանք այնքան մօտ չեն գործին. եթէ անուրի այնպէս, ինչպէս առաջարկում են գաւառում գրադարան բաց անելու կողմնակիցները՝ դա կը նմանուի այն շինութեան, որ մէկը շինում, կիսատ է թողնում, միւսը գալիս շարունակում է, բայց էլի չի վերջացնում, և այդպիսով չի շինուի. մինչդեռ խորհրդի առաջարկը այն է, որ հիմնուի մի մեծ, կանոնաւոր, հարուստ գրադարան, իբրև աղբիւր ծառայէ մեր բանասէրներին և գրականագէտ-

ներին. աւելացնում է, որ այդպիսի մի բացուելիք գրադարանը միմիայն Թիֆլիսի համար չէ, այլ և գաւառների համար, դա մի ազգային հարստութիւն կլինի. գալով գաւառի պահանջին՝ համարեա ամեն տարի լրացւում է, ուղարկելով այնտեղ 6000—7000 օրինակ զանազան գրքեր. ապա աւելացնում է նախ այդ եղածն ուղարկենք, ապա թէ գրադարան հիմնենք, իսկ 75 րուբլով, այն է 1500 ր. $^0/_0$-ով չի կարելի ոչ մի օգտաւէտ գրադարան հիմնել, ճւր մնաց մի քանիսը։ Ճառախօսը շարունակում է, որ կան գիւղերում գրքեր, բայց գաւառներում չեն օգտւում, մինչդեռ դուք էլի ուզում էք գրադարաններ ունենալ. իզուր էք կարծում թէ գիւղում ընթերցանութիւն կայ, այդ սխալ է, գիւղում չեն կարդում, դրան ապացոյց այն, որ Պօղոսեանի հրատարակած գրքերը մնացել են այստեղ դիզուած։ Առաջարկում է հանգ. Վարդապետեանի գումարով գրքեր գնել Թիֆլիսի կենտրոնական գրադարանի համար. իսկ գալով գաւառի գրադարաններին՝ եթէ ժողովը կամենում է, թող առանձին ֆոնդ յատկացնի ընկերութեան միւս եկամուտներից։

Նր. Ղալայեան.—Նախագահի դիտողութիւնները ճիշտ են, եթէ Բարեգործական Ընկերութիւնը կամենում է ժողովրդական գործին ծառայել՝ ուրեմն պէտք է օգնել և գրադարանով. ընկերութեան նպատակը գիտական գրքեր հրատարակելը չէ, այլ ժողովրդական գործ, ասել է, եթէ ժողովրդական գրադարանների համար ֆոնդում յատկացրած 2552 ր. գումարով գործադրուի, ամեն տեղ այդ գրադարանները տարածուին, թէ մեծերի և թէ փոքրերի համար յարմար գրքերով՝ այդպիսով աւելի մեծ գործ կանէ Բարեգործական Ընկերութիւնը, քան գիտական գրադարանի օգտին վերոյիշեալ գումարը յատկացնելով. աւելացնում է, որ կենտրոնի գրադարանն ունի ճիւղեր, բայց այդ բոլոր ճիւղերն էլ աղքատ են։

Կար. Շիրինեան. Գտնում է, որ 2552 ր. թողնելով Թիֆլիսին՝ անարդարութիւն կլինի. բացի այդ 75 րուբլին (1500 ր. $^0/_0$) ևս խլել Թիֆլիսին տալ. իսկ դրա փոխարէն ասել է թէ՝ գրքեր ենք ուղարկում գաւառները՝ այդպիսի ուղարկուած գրքերն անպէտք են, այդ գրքերը թափթփուկ են և դէն գցելու. մենք եթէ առաջարկում ենք գրադարաններ՝ առաջարկում ենք սիստեմի վերածած, այն է պէտքական ժամանակակից, ոչ թէ պատահական. աւելացնում է—ճիշտ է տունը շինում ենք, բայց կտուրը չենք ծածկում. իրաւ է դպրոցներ ունենք, բայց առանց գրքերի։

Ս. Յարութիւնեան.—Գտնում է, որ ճիշտ է իր ասածը, որ հաստատում են Եր. Ղալայեանը ու Կարապետ Տիրլինեանը, որ մեր Թիֆլիսի գրադարանը թերի է, ուրեմն մեր գրքերը պէտք է լրացնենք. յատկացրած ֆոնդի ցուցակից երևում է այն թիւը, որ 650 ր. է գրքերի համար, ոչ 2552 ր. ինչպէս պնդում են. գտնում է, որ Թիֆլսում եղած գրադարանն հարկաւոր է ուժեղացնել. յայտնի է, որ գրադարանը բաժանուած է 2 մասի, հիմնական և շարժական, այն է գիտական և ընթերցանութեան,

Նախագահ.—Ամփոփելով ճառախօսների ասածները յայտնում է որ հանգուցեալ Վարդապետեանը կտակել է մօտ 1500 ր. խորհրդին առաջարկում է այդ գումարով առանձին պահարան ունենալ Թիֆլիսում. իսկ միւս մասը՝ այն է, խորհրդի 3 անդամը և ճառախօսների մի մասը ասում են՝ ամէն տարի 75 ր. $^0/_0$ ով բանալ գիւղերում գրադարաններ. ոմանք էլ առաջարկում են այդ 1500 ր. գումարը միանուագ բաժանել գիւղերի գրադարաններին, այն է բանալ 50 գրադարան:

Գար. Կաֆեան.—Առաջարկում է, որ թէ այստեղ հիմնուի և թէ խորհուրդը իր միջոցներից 57 ր. յատկացնէ գաւառներում գրադարաններ բանալու: Նախագահը քուէարկում է հարցը և 26 ձայնով որոշւում է յօգուտ Թիֆլիսում առանձին պահարան բանալու՝ գիտական գրքերի. իսկ գիւղական գրադարանների օգտին ձայն են տալիս 13 հոգի:

Քուէարկում է 2-րդ հարցը, այն է 1500 րուբլիով միանուագ բանալ գրադարաններ. հարցը չի անցնում 21 ձայնով ընդդէմ 26 ի:

Բժ. Աղասարեան.—Առաջարկում է, թէ ինչ տեսակ գրադարան է լինելու հանգ. Վարդապետեանի կտակած գումարով, պարզւում է, որ լինելու են զուտ հայերէն հայագիտական գրքեր և դրա համար պէտք է հրաւիրել մասնաժողով:

Յով. Սպենդիարեան.—Առաջարկում է ամէն տարի 100-ական րուբլի յատկացնել գաւառական գրադարանների օգտին: Այդ հարցը դրւում է քուէարկութեան և անցնում է միաձայն:

Յակ. Շահնազարեան.—կարդում է Աւ. Պօղոսեանի գրքերի մասին Խորհրդի արած առաջարկը, որից երևում է, որ խորհուրդն ունի տպած 7474 օր. զանազան գրքեր 3307 ր. 45 կոպ. արժողութեամբ. այդ գրքերը տարածելու համար ընկերութիւնը ձեռնահաս մարդկանց դիմելով արել է զիջում 25—50$^0/_0$, սակայն 2

տարւայ մէջ այդ գրքերից հազիւ ծախուել է 288 օր. 98 ր. 45 կոպ. արժողութեամբ. այդպիսի դանդաղ տարածումը աչքի առաջ ունենալով խորհուրդը իր մի յատուկ նիստում որոշել է զեղջ անել 70—80$^0/_0$ և ուղարկել ընկերութեան ճիւղերին:

Ս. Յարութիւնեան.—յայտնում է, որ պ. Աւ. Պօղոսեանը դէմ չէ եղել եղած գրքերը ծախելու 70—80 տոկոս զեղջով, բայց մնացած գումարի համար նւիրատուն փոխել է իր պայմանը, այն է, որ բացի զեղջ եղած $^0/_0$-ից խորհուրդը կարող է մայր գումարից ծախսել հրատարակութիւնների համար՝ իսկ եղած (մնացած) գրքերը մինչև անգամ ձրի տալ:

Աւ. Պօղոսեան.—Առ այդ յայտնում է, որ եթէ հայ ժողովուրդը չէ առնում հրատարակուելիք գրքերը, այն է չվաճառուի ու նորից հրատարակէն գրքեր մնացած գումարով, որ նորից կարող է չծախուել՝ այն ժամանակ միտք չունի մայր գումարից ծախսել, եթէ հրատարակածները ծախուեն՝ խոստանում է այն ժամանակ թոյլ տալ ծախսելու մայր գումարից:

Գ. Կաֆեան.—Եթէ Աւ. Պօղոսեանի գրքերը չեն ծախւում, կամ դժւար են ծախւում, լաւ չէ՞ր լինի այդ գրքերը ձրի ուղարկել գիւղերը:

Յով. Տէր-Միրաքեան.—Առաջարկում է եղած հրատարակած գրքերից 1—1 օրինակ գիւղերն ու քաղաքները ուղարկել:

Ս. Յարութիւնեան.—Բացատրում է, որ չտարածւողը միայն հին գրքերն են, իսկ նորերը տարածւում են, ինչպէս օր. Յակ. Աղաբաբի և հանգ. Աղայեանի գրքերը:

Բժ. Զարզարեան.—Առաջարկում է, քանի որ յիշուած գրքերը դժուարութեամբ են տարածւում, մի մասը տան Կ. Հ. Հրատարակչական ընկերութեան, որ նա բաժանէ իր անդամներին:

Մ. Զմշկեան.—Գրքերի չտարածուելու պատճառը գտնում է գրքերի բովանդակութեան մէջ, ուրեմն, ասում է, պէտք է աշխատել գրքերի բովանդակութիւնը անել ժողովրդին պիտանի:

Եր. Ղալայեան.—Առաջարկում է որոշել, թէ որքան տոկոս այդ գրքերից յատկացնել գիւղական գրադարաններին, բացի այդ առաջարկում է պատրաստի գրքերի մի մասը ձրի ուղարկել գիւղերը:

Նախագահ.—Ամփոփում է ճառախօսների ասածները և դնում է քուէարկութեան հետևեալը.—քանի՞ $^0/_0$ զիջել Աւ. Պօղոսեանի

գրքերից, մի մասը ձրի ուղարկել գիւղերին։ Սակայն հարցերը նախ քան քուէարկելը—Թողնում է պ. Պօղոսեանի հայեցողութեան. նա պատասխանում է, որ եթէ բոլոր գրքերը վաճառուեն 70—80 $^0/_0$ զիջումով, էլ ուրեմն ինչպէս պահել հիմնական ֆոնդը, քանի որ ծախսուելիքները չեն արդարացնելու իրանց ծախքը. բայց և այնպէս նա թոյլ է տալիս 70—80 $^0/_0$ զիջում անելու. իսկ գալով ձրի ուղարկելու գիւղերին և որքան $^0/_0$ այդ թողնում է իրեն խորհրդի որոշման։ Այդպէս էլ ընդունում է ընդհանուր ժողովը և անցնում է IV հարցին։

Քննութեան է առնում 1912 թ. նախահաշիւը։

Նր. Ղալայեան.—Առաջարկում է 500 ր. միանուագ յատկացնել գրադարանների օգտին։

Ս. Յարութիւնեան.—Ցանկալի է համարում 500 ր. յատկացնելը, միայն ո՞ր աղբիւրից. ուստի առաջարկում է պ. Յովհ. Սպենդիարեանի առաջարկածը և ընդունած 100 րուբլով բաւականանալ, միայն այն պայմանով, որ յաջորդ տարին այդ նպատակի համար միջոց գտնուի։ Իսկ այդ 100 ր. հանել նշանակուած պատահական 524 ր. 18 կ. գումարից։

Ս. Խարազեան.—Գտնում է I. որ 3800 ր. ելքի մէջ մտցնելը սխալ է, եթէ այդ գումարը պիտի մնայ անձեռնմխելի (ոչ ծախք) ուրեմն այդ 3800 ր. այստեղ (§ ԺԴ) չպիտի լինէր, իսկ եթէ գրուել է՝ պիտի յիշուէր, որ այդ գումարը պիտի աւելանայ ուսուցչական դպրոցական ֆոնդի վրայ։ II. Ընկերութիւնը Թիֆլիսի քաղաքի վարչութեանը պարտք ունի 5000 ր. որի $^0/_0$ իր պարտքի մի մասի հետ տարեկան հանգցնում է 383 ր. լաւ էր, որ այդ պարտքից ազատուէր ընկերութիւնը, մանաւանդ, որ շատ յաջող պայմաններ կան առնել օբլիգացիաներ, վճարել, որ 800 ր. պակաս կըլինի 500 րուբլուց, ապա պետական ռենտաներ առնել, գրաւ դնել պետական բանկը, որտեղից կըստացուեն 5 $^0/_0$, որից այսպիսով կօգտուի ընկերութիւնը և աւելի քիչ կըվճարէ. III. հարց է տալիս Զոհրաբեանի յիշատակին 250 ր. նշանակուած գումարի մասին։

Ս. Յարութիւնեան.—Բացատրում է, որ հանգուցեալ Ե. Գ. Զոհրաբեանից ստացած 5000 ր. վաղուց է ծախսուել, բայց նրա յիշատակը պահելու համար այդքան գումարի 5 $^0/_0$ յատկացւում է նրա անուան։

Ս. Խարազեան.—Յայտնում է, որ Ե. Գ. Զոհրաբեանը այդ

տեսակ առաջարկ չէ ունեցել, որ իր նուիրած գումարի $^0/_0$ միշտ յիշուի։

Այս մասին, որոշուեց տեսնել նախկին արձանագրութիւնը, թէ ինչպէս է որոշուած՝ միշտ յատկացնե՞լ նրա անուան 250 $^0/_0$ը թէ ոչ։

Փ. Վարդազարեան.—Առաջարկում է գրադարանների համար առաջարկած 500 ր. գումարը ձեռք բերել երեկոյթներ կազմելով, նուիրաբերելով։

Գ. Նաֆեան. Եթէ 500 ր. շատ է գտնում ժողովը, 100 ր. էլ քիչ է թող այն ժամանակ որոշէ 300 ր. և յատկացնէ 6 գրադարանի ամէն մէկին տալով 50—ական րուբլի—իսկ այդ 300 ր.՝ վերցնել 200 ր. անակնկալ ծախքերից.—100 ր. էլ գրքերի կազմերի գումարից։

Նր. Ղալայեան.—գրքերի ցուցակի տպագրութեան համար յատկացրած է նախահաշւում 400 ր. դա շատ է. կարիք չկայ այդքան մեծ գումար յատկացնելու, դպրոցական գրադարանի կարիքը աւելի մեծ է. այդ գումարից նա առաջարկում է յատկացնել գրադարանների օգտին։

Ս. Յարութիւնեան.—Յայտնում է, որ պատահական ծախքերից հանել չի լինի, որովհետև անակընկալ ծախքեր շատ կան, ինչպէս դըպրոցների վերանորոգութիւնը. առաջարկում է այս տարի բաւականանալ 200 ր. գրադարաններ բաց անել ծախքի ընդհանուր գումարներից հանելով. իսկ յաջորդ տարին աւելացնել առանձին յօդուածով այդ նպատակի համար. և եթէ այս տարի պատահական եկամուտներից սպասածից աւելի մուտք լինի, այդ աւելին նա յատկացնել գրադարանների օգտին։

Նախագահ.—Բժշկապետ Նաւասարդեանը հարցը դնում է քուէարկութեան և որոշում է պատահական ծախքերից 200 ր. յատկացնել գիւղական գրադարաններին։

Այնուհետև կարդացւում է 20 ճիւղերից եկած նախահաշիւները որոնք են՝

	Մուտք	Ելք
1. Վլադիկաւկազի ճիւղ .	2200 ր. —	2150 ր. —
2. Ղազախի »	170 ր. —	170 ր. —
3. Իգդիրի » . .	494 ր. 75 կ.	494 ր. 75 կ.
4. Երևանի » . .	5060 ր. —	5060 ր. —
5. Նովօրոսսիսկի » . .	390 ր. —	390 ր. —

		Մուտք	Ելք
6.	Վաղարշապատի ճիւղ . .	557 ր. 35 կ.	557 ր. 35 կ.
7.	Նուխուայ » . .	828 ր. —	828 ր. —
8.	Պետիգորսկի » . .	712 ր. —	712 ր. —
9.	Օլթւայ » . .	180 ր. —	180 ր. —
10.	Ղափանի » . .	710 ր. 20 կ.	710 ր. 20 կ.
11.	Թելաւի » . .	562 ր. 80 կ.	562 ր. 80 կ.
12.	Եկատերինօդարի » . .	2900 ր. —	2900 ր. —
13.	Ախալցխայի » . .	2650 ր. —	2650 ր. —
14.	Քարվանսարայի » . .	160 ր. —	160 ր. —
15.	Ախալքալաքի » . .	1000 ր. —	1000 ր. —
16.	Սուրամի » . .	160 ր. —	160 ր. —
17.	Ցարսկիէ Կոլօդցի . .	120 ր. —	120 ր. —
18.	Ջալալ-Օղլու » . .	122 ր. —	122 ր. —
19.	Փոթւայ » . .	255 ր. —	255 ր. —
20.	Բաթումի » . .	1485 ր. 23 կ.	1485 ր. 23 կ.
		20727 ր. 33 կ.	20727 ր. 33 կ.

Որպիսիները միաձայն հաստատւում են և թոյլատրւում ի գործադրութիւն։

Յովհ. Սպենդիարեան.—Առաջարկում է՝ ինչպէս կենտրոնի, այնպէս էլ ճիւղերի նախահաշիւները տալ տպագրութեան համառօտ։ Ընդունւում է այդ առաջարկը։

Նախագահ ժողովը փակում է գիշերուայ 11 և կէսին։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

Քարտուղար՝
ՅՈՎՀ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

II

Ապրիլի 21-ին, երեկոյեան 8 ժամին կայացաւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը եօթանասուն և վեց անդամի ներկայութեամբ։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց բժշկապետ պ. Բագարատ Նաւասարդեանը, իսկ քարտուղար Սահակ քահանայ Սահակեանցը։

Նախագահի առաջարկութեամբ ժողովականները յոտնկայս յարգեցին Ընկերութեան պատուաւոր անդամ հանգուցեալ դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանցի և մանկավարժ Ղազարոս Աղայեանի յիշատակը։

Կարդացուեց տարոյս Յունուարի 8-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և վաւերացուեց։

Ժողովի զբաղման նիւթերն էին. 1) Ընկերութեան կենտրոնի և ճիւղերի 1911 թ. հաշիւների և գործունէութեան քննութիւնը վերստուգիչ յանձնաժ. զեկուցման հետ և այդ հաշիւների հաստատութիւնը։ 2) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը. 3) Ընկերութեան հերթով հեռացող խորհրդի անդամներ բժ. Բ. Աղասարեանի, Ս. Մելքումեանի, Աղ. Շահիկեանի և ինքնակամ հրաժարուած Յովհ. Սպենդիարեանի փոխարէն անդամների ընտրութիւն, ինչպէս և խորհրդի 4 փոխանդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւնը և 4) Դպրոցական—ուսուցչական ֆոնդի կանխիկ գումարները տոկոսաբեր թղթերի վերածելու խնդիրը։

Խորհրդի նախագահ Սամսոն Յարութիւնեանը ժողովին ծանօթացրեց ընկերութեան խորհրդի և ճիւղերի գործունէութեան հետ. հաշուետւութիւնից երևաց, որ խորհուրդը 1911 թ. մուտք ունեցել է 85,988 ր. 28 կ., իսկ ծախք 85,306 ր. 10 կ.։

Ապա կարդացուեց վերստուգիչ յանձնաժողովի արձանագրութիւնը և խորհրդի բացատրութիւնը՝ յանձնաժողովի կողմից 1911 թ. հաշիւների վերաբերեալ նկատողութիւնների առթիւ։

Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեանը յայտնեց, որ անդամավճարի պակասեցնելուց յետոյ ընկերութեան ճիւղերի թիւն աւելացել է։ Խորհրդի նպատակն է, որ Ընկերութիւնը կուլտուրական դեր կատարի և ձեռք մեկնի ժողովրդի անհրաժեշտ կարիքներին. յայտնեց, որ խորհուրդը մտածում է հիմնել զուտ գիւղա-

կան թատրոններ, վարձել շրջիկ դերասաններ և դասախօսներ, որ շրջեն գիւղերը, կազմակերպեն ներկայացումներ, դասախօսութիւններ՝ խաւարում խարխափող և լոյսի կարօտ ժողովրդին բարձրացնելու, նրան մտաւոր սնունդ տալու և առհասարակ մտածում է, որ Բարեգործական Ընկերութեան գործունէութիւնը կենտրոնական և ժողովրդի համար սիրելի դարձնի։

Տիգ. Յովհաննիսեան. Թատրոններ պահելը և դասախօսութիւններ կազմակերպելը Բարեգործական Ընկերութեան գործունէութեան շրջանակից դուրս պէտք է համարել, քանի որ այդ նպատակների իրագործման համար կան այլ ընկերութիւններ. առանց այն էլ Բ. Ը. Ընկերութեան գործունէութեան շրջանակը մեծ է։

Յովհ. Սպենդիարեանը յայտնեց, որ խորհուրդը որոշել էր կազմել ցուցակ, թէ ինչ իրեր են պակասում հանգուցեալ Ադամեանի ժառանգութիւն թողած իրերից։ Տեղեկագրից երևում է, որ խորհուրդը դեռ չի կազմել այդ ցուցակը, այն ինչ որոշուած է եղել ստուգել իրերը, ազատել անխնամ վիճակից ու փոշուց, կարգի բերել, դասաւորել պահարանում և առհասարակ խնամքով պահպանել Ադամեանի թանկագին ժառանգութիւնը։

Յակ. Շահնազարեանցը յայտնեց, որ ինքը ստուգել է և ոչ մի իր կորած չէ։ Առ այդ յայտնում են, որ ստուգութիւնը պիտի կատարուէր պ. Ստեփանեանցի հետ. վերջինս յայտնեց, որ իրեն ոչինչ չի յայտնուել։ Առաջարկուեց գնել երրորդ պահարան, ստուգել իրերը և զեկուցումն ներկայացնել հետևեալ ժողովին։

Վիճաբանութեան առիթ եղաւ դրամական հաշիւների փակման ժամանակի խնդիրը։ Որոշուեց դրամական հաշիւները, ինչպէս ընդունուած է բոլոր հաստատութիւններում, փակել առ 1-ն յունուարի հետևեալ տարուայ։

Սամ. Յարութիւնեանցը յայտնեց, որ տեղեկագրում մոռացուած է Ախալցխայի ճիւղի պահած գրադարան ընթերցարանը. Ախալցխայի ճիւղը ոչ միայն պահում է գրադարան ընթերցարան, այլ ունի կոփածոյ քարից գրադարան-ընթերցարանի սեփական շէնք

Տիգ. Յովհաննիսեանն առաջարկում է տեղեկագրում տպել ընկերութեան հաստատուած կտակները։

Յով. Սպենդիարեանը հարցնում է թէ ինչ դրութեան մէջ է իւր առաջարկը Աղքատախնամ մանկաժողովների կազմակերպութեան մասին։

Սամ. Յարութիւնեան. Խորհուրդը մշակեց գործունէութեան ծրագիր, բայց ժողովին հրաւիրուած հոգևոր և աշխարհական անձինք այնքան քիչ եռանդ ու հետաքրքրութիւն ցոյց տուին և ներկայ եղան այդ առթիւ հրաւիրուած ժողովներին, որ հնար չեղաւ գործին ընթացք տալ։

Ստ. Լիսիցեան. Աղքատներին ու որբերին խնամելը պիտի լինի եկեղեցու սրբազոյն նպատակներից մինը. ուստի առաջարկում է Աղքատախնամ Ընկերութեան գործը յանձնել հոգևոր իշխանութեան։

Բագ. Նաւասարդեան. Քանի որ մինչև այսօր եկեղեցին չի կարողացել լայն չափով կատարել այդ գործը, թող այդ նուիրական գործի նախաձեռնողը դառնայ Բարեգործական Ընկերութիւնը և պիտի խնդրել հոգևոր իշխանութեանը, որ աջակցէ ընկերութեան այդ նպատակը իրագործելու։

Գաւառի ներկայացուցիչ բժ. Բաղդասարեան.—աղքատի արցունքը սրբել, նրա երեխաներին կրթութիւն տալ, տնանկին կարեկցել, թշուառին ձեռք մեկնել, այս պիտի լինի Բարեգործական Ընկերութեան հիմնական նպատակը։ Թատրոններով ու դասախօսութիւններով արցունք չի սրբուիլ, կարիքներ չեն լրացուիլ. թող կենտրոն առատ ձեռքով օգնութեան հասնի քաղցածներին ու արտասուողներին, որպէս զի գաւառական ճիւղերն էլ ոգևորուեն ու գործեն։

Բագ. Նաւասարդեան.—Արտասուք շատ ենք տեսել, իսկ կեղծ արտասուք՝ ևս աւելի. մենք ժողովրդին ուսում, լոյս պիտի տանք, որով սրբած կլինենք նրա արտասուքը։

Գանձակի ճիւղի նախագահ պ. Մելիք-Բէգլարեան տխուր գոյներով նկարագրում է Գանձակի ճիւղի վիճակը. մինչ ճիւղի բացման տարին Գանձակը ունեցել է 70—80 անդամ, այժմ անդամների թիւը անհամեմատ պակասել է և առաջարկում է փակել այդ ճիւղը, որը գոյութեան ոչ մի ոյժ չունի։

Ընդհանուր ժողովը հաստատեց խորհրդի ներկայացրած հաշիւները և միքանի ճիւղերի՝ այն է Դուշէթի, Արդահանի, Մոզդոկի, Ջխարի, Նոր-Բայազէդի, Գանձակի, Աբաստումանի, Հաղբութի, Սուխումի, Քութայիսի, Լագոդախի, Կաղզուանի, Գորու, Զաքաթալայի, Դիլիջանի, Գորիսի, Ալէքսանդրապօլի, Ղուբայի, Սղգնախի. Շուշու և Ախալքալաքի ուղարկած 1912 թուականի նախահաշիւները. Ժողովը շնորհակալութիւն յայտնեց վերստու-

գիչ յանձնաժողովին նրա կատարած բարեխիղճ և ծանր աշխատանքի համար։

Երկար վիճաբանութիւնների և թերուդէմ կարծիքների նիւթ դարձաւ դպրոցական-ուսուցչական ֆոնդի գումարի շահեցողութեան խնդիրը։

Անդամներից ոմանք առաջարկում էին այդ գումարով կալուած գնել, ոմանք նպատակայարմար էին համարում ֆինանսիստներից մի մասնաժողով ընտրել և յանձնել նրա խորհրդածութեան, ոմանք, էլ առաջարկում էին այդ գումարով տոկոսաբեր թղթեր գնել։ Զայների առաւելութեամբ վճռուեց գնել տփղիսի քաղաքային բանկի տոկոսաբեր թղթեր և լիազօրութիւն տրուեց խորհրդին եղած գումարը այժմեանից այդ միջոցով շահեցնել։

Ապա կայացաւ ընկերութեան հերթով հեռացող խորհրդի անդամների և վերաստուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնը։ Ժողովը միաձայն խնդրեց վերաստուգիչ յանձնաժողովի անդամներին, որ շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը այս տարի ևս։ Յանձնաժողովի անդամ պ. Ս. Խարազեանը առաջարկեց ընտրութիւնը կատարել գաղտնի քուէարկութեամբ. սակայն ընդհ. ժողովը միաձայն և բաց քուէարկութեամբ վերընտրեց յանձնաժողովի նախկին կազմը, այսինքն պ. պ. Սարգիս Խարազեանին, Սիմէօն Շահվերդեանին և Առաքել Աւագեանցին։

Ընդհանուր ժողովը խնդրեց խորհրդի անդամ պ. Յովհաննէս Սալենդիարեանցին, որ յետ վերցնի իր հրաժարականը, նրա ներկայութիւնը խորհրդի կազմում օգտաւէտ համարելով, սակայն նա բացէ ի բաց մերժեց։

Ժողովը շնորհակալութիւն յայտնեց հերթով դուրս եկող խորհրդի անդամներին, ինչպէս և ինքնակամ հրաժարուող պ. Յով. Սալենդիարեանցին։

Ապա առաջարկուեցան թեկնածուներ խորհրդի անդամների։ Գաղտնի քուէրկութեամբ խորհրդի անդամներ վերընտրուեցան պ. պ. բժշկ. Բ. Աղասարեան և Սարգիս Մելքումեան։ իսկ նոր անդամներ՝ պ. պ. Աւետիս Պօղոսեան և Ներսէս Աբէլեան։ Քուէարկութեան մասնակցում էին 58 անդամ։

Վերաստուգիչ յանձնաժողովի փոխանդամներ վերընտրուեցան

պ. պ. Զ. Աթայեան և Մկրտիչ Մաղաքեան։

Նախագահ ընդհ. ժողովի՝
Բժշկ. Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Քարտուղար՝
ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

Ընդհ. Ժ. վճռեց աւելացնել սորան և ժողովում արուած վճիռը, որ հետևեալն է՝ տեղեկագրում պէտք է տպել ընկերութեան հաստատուած կտակները։

III

Նոյեմբերի 4-ին առաւօտեան ժամը 12 ին կայացաւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը ներկայութեամբ ընկերութեան եօթանասուն և եօթ անդամի։

Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց պ. բժշկապետ Բ. Նաւասարդեան, քարտուղար Ս. Աբովեան։

Ժողովի զբաղմունքի առարկաներն էին՝

1. Դպրոցական-Ուսուցչական ֆոնդի բաժանումն և Ուսուցչական ֆոնդի հրահանգի հաստատումն։

2. Խորհրդակցութիւն Յ. Խուդաղեանի անուան որբանոցի վերակազման մասին։

3. Առաջարկութիւն խորհրդի՝ դատ սկսել Սարիբէկ Շահազիզի դէմ (հանգուցեալ բանաստեղծ Սմբատ Շահազիզի եղբայրը)։

4. Զեկուցումն Պետրոս Ադամեանի իրերի մասին։

5. Խորհրդի առաջարկութիւնը՝ վճարել օբլիգացիաներով Թիֆլիզի Քաղաքային Վարկային ընկերութեանը հասանելիք ընկերութեանս տան 4619 ր. 97 կ. գումարի պարտքը։

6. Մի քանի ճիւղերից ստացուած նախահաշիւների քննութիւնը և հաստատումը։

7. Ընտրութիւն Աբովեան-Նազարեան ֆոնդի մասնաժողովի անդամների։

8. Ընտրութիւն Խորհրդի 2 փոխ-անդամի։

9. Ընթացիկ հարցեր։

Նախքան օրակարգի մէջ նշանակուած խնդիրների քննութեանը անցնելը կարդացուեց 1912 թ. ապրիլի 21-ի տարեկան ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը հաստատուեց սոյն միակ նկատո-

ղութեամբ, որ թէև բերուած է պ. Տ. Յովհաննիսեանի առաջարկը — «տեղեկագրում տպել ընկերութեան հաստատուած կտակները», սակայն բացակայում է այդ առթիւ ժողովի որոշումը։ Որոշւեց անցեալ արձանագրութեան մէջ մտցնել, որ ժողովը ընդունեց պ. Յովհաննիսեանի առաջարկը»։

Խորհրդի անդամ-քարտուղար պ. Ց. Շահնազարեանը կարդաց մի զեկուցում հանգուցեալ տաղանդաւոր արտիստ Պետրոս Ադամեանի իրերի մասին, որից պարզւեց, թէ խորհուրդը ընկերութեան շէնութեան մէջ յատկացրած է մի առանձին սենեակ Ադամեանի անւան, ուր տեղաւորւած են նրա բոլոր իրերը։ Եթէ չհաշւել քանի մի ոչ թանգարժէք իրեր, որ չեն գտնւած, անկորուստ են մնացած այն բոլոր իրերը, որ ժառանգած է Բարեգործական Ընկերութիւնը։

Ժողովը անցաւ «ԽՈՒԴԱԴԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ» վերակազման խնդրի քննութեան։ Խորհրդի նախագահ պ. Սամսոն Յարութիւնեան ժողովին համառօտակի ծանօթացրեց, որ որբանոցի խնդիրը շատ անգամ է խորհրդի լուրջ քննադատութեան ենթարկւել։ Խորհուրդը խոր զգալով որբանոցի վերակազման կարևորութիւնը, նոյն իսկ մասնաւոր ժողովի նիւթ են այդ դարձրել և այնտեղ էլ դրսից հրաւիրւած անձնաւորութիւնները խորհրդի անդամների հետ միասին նոյն եզրակացութեանն են եկած, թէ՝ աչքի առաջ ունենալով մի կողմից հայ ժողովրդի ազգային կուլտուրական պահանջները և միւս կողմից Կովկասի Հայոց Բարեգործան Ընկերութեան դերը այդ ասպարիզում, նպատակայարմար պէտք է համարել Խուդադեան որբանոցը այնպիսի վերակազման վերափոխման ենթարկել, որպէսզի միևնոյն ծախսերի սահմանում աւելի մեծ կուլտուրական գործ կատարւի։ Խորհուրդը այս ուղղութեամբ պատրաստել է որոշ զեկուցում, որ կըկարդայ պ. բժ. Աղասարեանը։ Միաժամանակ նոյն խնդրի վերաբերմամբ բարի է եղել զեկուցումն պատրաստել իշխ. Ս.Վ Երկայնաբազուկ Արղութեան։

Նախ քան ըստ էութեան խնդրի քննութեանն անցնելը Խորհրդի նախագահը առաջարկում է ամենից առաջ որոշել, թէ արդեօք ժողովը կարևոր և անհրաժեշտ է համարում որբանոցի վերակազմումն և երբ այս կորոշւի դրականապէս, այն ժամանակ ժողովը կանցնի այն հարցին, թէ ինչպէս, ինչ սահմաններում կատարել վերակազմումը։

Ա. Եզեկեան առաջարկում է նախ քան այս և նման ծանրակշիռ խնդիրների քննադատութեանն անցնելը վերջացնել օրակարգի համեմատաբար պարզ և թեթև խնդիրները։ Ժողովականներն աննպատակայարմար են համարում այս առաջարկը, առաջարկելով, որ ծանրակշիռ խնդիրների քննադատութիւնը, ընդհակառակը, պէտք է կատարել ժողովի սկզբում, երբ թէ ժողովն է բազմամարդ և թէ՝ աւելի թարմ են ժողովականները։

Բժ. Աղասարեան կարդում է խորհրդի կողմից առաջարկւած զեկուցումը, որով պարզւում է խորհրդի տեսակէտը որբանոցի վերակազման խնդրում. «Կովկասեան Հայոց Բարեգ. Ընկերութիւնը, պահելով մեծածախս որբանոց և ցանկանալով, որ նա աւելի մեծ արդիւնք տայ հայ հասարակութեան, առաջարկում է փոխարկել նրան «Խուդադեան որբանոց-հանրակացարանի» ուր հայ ազգաբնակութեան անհրաժեշտ կարիքներին բաւարարութիւն տալու համար երեք տիպի գործիչներ պէտք է պատրաստւեն. ա. մանկաբարձուհիներ, բ. վարժուհիներ և գ. դաստիարակչուհիներ—բոնաներ, որոնք միանգամայն նիւթականապէս ապահով կլինեն իրանց ընտրած ասպարէզներում։ Եթէ ընկերութիւնը ղեկավարւի վերոյիշեալ ուղղութեամբ, ընդունելով վերակազմւած հիմնարկութիւնը որբ և աղքատ աղջիկներին հայութեան ամեն խաւերից նաև գաւառների հայութեան շրջաններից, որոնք աւարտած լինեն յաջողութեամբ տեղական հայ դպրոցները, նա շատ արդիւնաւէտ գործունէութիւն ցոյց կտայ՝ բարեգործութեան հետ կապելով մի շատ կարևոր կուլտուրական և հասարակօգուտ սկզբունք՝ այն է տարածել թէ լուսաւորութիւն, թէ առողջապահութիւն, թէ մանկաբարձական և թէ նախնական բժշկական օգնութիւն մեր խաւար և տգէտ գաւառի հայ ազգաբնակութեան մէջ... «Որբանոց հանրակացարանում, ուր սանուհիներին կտրւի ամեն տեսակի խնամք Կ. Հ. Բ. Ընկերութեան կողմից, մի ընկերութեան, որ ծառայում է ազգի բարգաւաճման և լուսաւորութեան վեհ գաղափարին, ակամայ կծագի նրանց մէջ՝ թէ երախտագիտական և թէ ժողովրդասիրական գաղափարական զգացմունք»...

Նախագծւած նպատակին հասնելու համար Կ. Հ. Բար. Ընկերութեան Խորհուրդը առաջարկում է որբանոցը վերակազմել հետևեալ ձևով.

1. Այժմեան որբանոցը փոխարկել «Խուդադեան որբանոց-հանրակացարանի»։

2. Նպատակն է պատրաստել հայ հասարակութեան համար վարժուհիներ, դաստիարակչուհիներ (բոննաներ) և մանկաբարձուհիներ։

3. Որբանոց-հանրակացարանը ընդունում են հայ դպրոցների աղքատ և որբ աշակերտուհիներ՝ թէ ընթացաւարտներ և թէ ուսում շարունակողներ հայութեան ամեն վայրերից, թէ մեր երկրի և թէ նրանից դուրս։

4. Վարժուհիների և դաստիարակչուհիների պատրաստութեան համար ընկերութիւնը բացում է առանձին լրացուցիչ դասընթաց սահմանուած ծրագրով և ղեկավարութեամբ խորհրդի հետ երկու գիտակ մանկավարժների։

5. Սանուհիները ստանում են իրանց ուսումը հայոց դպրոցներում, իսկ մանկաբարձուհիները՝ Օլգինեան մանկաբարձական դպրոցում, յետ աւարտման իրանց ուսումը հայ դպրոցներում։

6. Սանուհիների թիւը՝ նայած միջոցներին, պիտի հասնի 100-ի, որոնց յայտնի մասը ընկերութեան հաշւով, միւս մասը իրանց չափաւոր վճարով, կամ զանազան բարերարների, որոնք կարող են ունենալ թոշակաւորներ։

7. Կ. Հ. Բ. Ընկերութիւնը պիտի նախօրօք որոշէ երեք տիպի համար պատրաստուող գործիչներ, ամեն մէկ մասնագիտութեան, թէ որքան տեղ է սահմանում։

8. Սանուհիները աւարտելով իրանց մասնագիտական ուսումը, պիտի գնան այնտեղ, ուր կբացւի նրանց գործունէութեան համար համապատասխան ասպարէզ։

9. Բոլոր սանուհիները ստանում են բնակարան, լոյս, սնունդ և այլն։

Իշխանուհի Ս. Վ. Արղութեանը կարդում է իր կազմած զեկուցումը, որ սակաւ գծերով հետևեալ կէտերն էր շօշափում։

Բարեգործական Ընկերութեան Խուդադեան որբանոցի գոյութեան գրեթէ ամբողջ շրջանում միշտ էլ զգացուած է, որ այդ հիմնարկութիւնը, որպէս որբանոց՝ շատերին բաւականութիւն չի տալիս և միաժամանակ շատերի համար պարզ չէ Բարեգործական Ընկերութեան այս հիմնարկութեան նպատակը։ Ընկերութեան անդամներից շատերը, որոնք հետաքրքրւել են այս հիմնարկութեան վիճակով, ջերմ ցանկութիւն են ունեցել վերակազմել այս հիմնարկու-

թիւնը, բայց թէ ինչպէս, այս միշտ էլ մնացած է հարցականի տակ։

Ներկայումս երբ զգացւում է խիստ կարիք տարրական դըպրոցների, մանկապարտէզների, մատաղ սերնդի դաստիարակութեան գործը ժամանակակից հասարակութեան գործունէութեան գլխաւոր խնդիրներից մէկն է դարձել։ Բարեգործական Ընկերութեան խնամատարութեան տակ գտնւող սանուհիների կրթութեան նպատակն էլ ինքնըստինքեան պարզ պէտք է լինի. Նրանք պէտք է լինեն առաջնորդող հայ մատաղ սերնդի և օղակից այն մայրերին, որոնք որոշ չափով հարկադրւած են թերանալ իրանց սուրբ գործում։ Հետևապէս Բարեգ. Ընկ. նպատակն է լինելու հայ հասարակութեան տալ պատրաստուած ժողովրդական ուսուցչուհիներ և դաստիարակչուհի-բոննաներ։

Մանկավարժօրէն պատրաստուած դաստիարակ-ուսուցչուհիները միաժամանակ կբարձրացնեն հայ դպրոցների գիտական-դաստիարակչական մակարդակը։

Այս վեհ նպատակին հասնելու համար իշխանուհին առաջարկում է բանալ մանկավարժական դասընթացներ և մանկական պարտէզ. Մանկավարժական դասընթացները պէտք է ընդունեն ոչ միայն Թիֆլիսի, այլ և ամբողջ Կովկասի, հարկ եղած դէպքում նաև Տաճկաստանից և Պարսկաստանից եկող օրիորդները։—Դասընթացները յաջողութեամբ աւարտողներից դուրս կըգան հայ ժողովրդական դպրոցների համար ուսուցչուհիներ, իսկ համեմատաբար աւելի թոյլերից՝ դաստիարակչուհի-բոննաներ։

Մանկավարժական դասընթացները մտնողները պէտք է լինեն աւարտած հայկական միջնակարգ դպրոցները։ Ծխական երկդասեան և քաղաքային դպրոցները աւարտածները կընդունեն որպէս ազատ ունկնդիր, ստանալով իրաւունք մասնակցելու մանկական պարտէզի գործնական պարապմունքներին։ Սրանք քննութիւն չեն տալիս, այլ միմիայն համաձայն փորձնական դասերի և ռէֆէրատների ըստանում են «պատրաստուած բոննաների» կոչում։

Մանկավարժական դասընթացները աւարտողներից ցանկացողները կարող են մտնել Թիֆլիսի մանկաբարձական կուրսերը, ուր ընդունւում են 18-ից ոչ պակաս հասակ ունեցողները։

Բարեգործական Ընկերութիւնը չպէտք է պահէ գիշերօթիկներ, այլ սրա խնամատարութեան տակ գտնւող օրիորդները գիշերում

են Թիֆլիզի ընտիր ընտանիքներում, որոնց հետ պայմանաւորւում է Բարեգ, Ընկերութիւնը։

Իշխանուհին այնուամենայնիւ չէ բացառում հանրակացարանի միտքը, Բարեգ. Ընկ. ունենալու է և հանրակացարան, ուր կընդունուեն գաւառացիները. այսպիսով հնարաւորութիւն և դիւրութիւն կըտրւի գաւառից եկողներին համեմատաբար աւելի աժան բնակարան և սնունդ ստանալու։ Այսպէս ուրեմն ունևորները վճարելու են որոշ վարձ պանսիօնին։

Իշխանուհին իր զեկուցման կցել էր նաև ծրագիր մանկավարժական դասընթացների և մօտաւոր նախահաշիւ հանրակացարանի։

Կարդացած զեկուցումները քննադատութեան ենթարկելուց առաջ խորհրդի նախագահը կարդում է Խուդադեանի կտակը, որից պարզւում է հետևեալը՝ Խուդադեանից կտակւած կալւածների հասոյթով Հովկ. Բար. Ընկերութեան թոյլ է տրւում բանալ դանազան կուլտուր-բարեգործական հիմնարկութիւններ՝ որբանոց, ապաստարան, աղքատանոց, բուժարան, դպրոց և այլն, համաձայն Բարեգ. Ընկերութեան ընդհանուր ժողովի որոշման։ Այս հիմնարկութիւնները պէտք է կրեն հանգուցեալի անունը և կարող են տեղաւորւել Խուդադեանից ժառանգւած տան, կամ մի այլ շէնութեան մէջ (յամենայն դէպս Թիֆլիզ.)

Այս կալւածներից ներկայումս ստացւում են տարեկան մօտ 6500 րուբլի, որից 1500-ը ծախսւում է նոյն կալւածների վրայ, իսկ մնացած մօտ 5000 րուբլին մնում է ընկերութեան տրամադրութեան տակ, որպէս և Խուդադեան անունը կրող տունը։

Թէև կարծիք է յայտնւում, թողնել զեկուցումների քննութիւնը մինչև որ կըտպագրւեն և այդպիսով միջոց կըտրւի ժողովականներին մօտից ծանօթանալու այս կարևոր խնդրի հետ, սակայն ժողովը նպատակայարմար է համարում անմիջապէս անցնել խնդրի քննադատութեան։

Տիգր. Յովհաննիսեանը Բարեգ. Ընկերութեան խորհրդի առաջարկը—որբանոցը վերակազման ենթարկել—գտնում է միանգամայն այժմէական, իշխանուհի Ս. Արղութեանի զեկուցումը՝ աւելի հիմնաւոր։ Հայ ժողովրդի կրթական խնդրում առանձնակի ուշադրութիւն պէտք է դարձնել կրթութեան ուղղութեան վրայ. հայ մատաղ սերնդի կրթութիւնը պէտք է տարւի այնպիսի ոգւով, որ բարձր պահւի ազգայինը.-Ներկայումս վտանգւած է հայ լեզուն,

որ ազգային կրթութեան հիմքն է կազմելու, հետևապէս վտանգւած է ազգային քաղաքակրթութիւնը։ Բարեգ. Ընկ. խորհուրդը և իշխ. Արղութեան գալիս են օգնութեան հայ ժողովրդի ազգային կրթական գործը նպատակայարմար պայմանների մէջ դնելու։ Իշխանուհի Արղութեանի զեկուցումը աւելի հիմնաւոր է գտնում այն տեսակէտից, որ այստեղ գլխաւորապէս ուշադրութեան է առնւած հայ մատաղ սերնդի համար ուսուցչուհիներ և դաստիարակչուհիներ պատրաստելու գործը։ Խօսք չկայ հայ ժողովուրդը մեծ կարիք է զգում նաև մանկաբարձուհիների, սակայն այս պահանջին կարող են բաւարարութիւն տալ այլ հիմնարկութիւններ, գուցէ հէնց կառավարութիւնը։ Հայոց Բարեգ. Ընկերութեան մնում է այնպիսի ուղղութիւն տալ որբանոցի վերակազման գործին, որ նոր հիմնւելիք հիմնարկութիւնները լայն չափով բաւարարութիւն տային ազգային-կրթական պահանջներին. այս տեսակէտից անպայման առանձնակի ուշադրութեան պէտք է առնել ուսուցչանոցները—ուսուցչական դասընթացները։

Մատաղ սերնդի կրթութիւնը պէտք է տարւի հայ լեզւով, ուստի և որբանոցը ոչ թէ պէտք է վերացւի, այլ ընդհակառակը պէտք է պահպանւի, որպէսզի այդ տեղից յիրաւի դուրս գան հայ լեզւով և ոգւով կրթւած անձնաւորութիւններ, որոնք ապագայում պէտք է լինեն ազգային կրթութեան միսսիօներները։ Ամուր պէտք է պահել այն «օջախը», ուր կանոնաւոր դաստիարակութեան շնորհիւ յիրաւի հնարաւորութիւն կըտրւի մանկութեան հասակից ազգային յոգւով կրթւած ուսուցչուհիներ ու դաստիարակչուհիներ ունենալ։

Առաջարկում է ունենալ ուսուցչանոց և որբանոց. վերջինիս փոքր սանուհիները կըկազմեն միաժամանակ այն մանկական պարտէզը, որ անհրաժեշտ է առաջնի-ուսուցչական դասընթացների համար։

Իսահակ Յարութիւնեանը գտնում է, որ յարուցած խնդիրը վերաբերում է ընդհանրապէս հայկական դպրոցական կեանքին։ Մենք չունենք ոչ միայն ուսուցչանոցներ, որտեղից պէտք է դուրս գան պատրաստւած ուսուցչուհիներ, այլ չունենք նոյնը ուսուցիչների համար։ Բարեգործ. Ընկերութեան առաջարկը այժմէական է և նրա իրագործումը խիստ ցանկալի. սակայն, աչքի առաջ ունենալով ներկայ հանգամանքները, դրականապէս կարելի է ասել, որ այդ չի յաջողւելու ընկերութեանս, որովհետև թոյլ չեն

տալ դասախօսութիւնները հայերէն կատարելու. կուրսերի լեզուն պէտք է լինի ռուսերէն և պէտք է ենթարկուեն Կովկասեան շրջանային հոգաբարձուին։ Անա այս պայմանները նախատեսելով նպատակայարմար է գտնում, օժանդակել Յովնանեան կամ Գայեանեան օրիորդաց դպրոցներին, որպէսզի սրանք պահեն յատուկ մանկավարժական դասարան իրանց դպրոցներին կից։

Սամ. Յարութիւնեան. այնուամենայնիւ ցանկալի է փորձել, գուցէ ընկերութեանս կյաջողուի կուրսեր պահելու իրաւունք ձեռք բերել։

Յովս. Ամիրխանեան գտնում է, որ յիրաւի այժմեան որբանոցը անկարելի է մի նպատակայարմար հիմնարկութիւն համարել ոչ միայն այն տեսակէտից, որ սա ներկայացնում է մի փակուած հիմնարկութիւն, այլ և այն պարզ պատճառով, որ այստեղից դուրս եկող օրիորդները անպատրաստ են ինքնուրոյն կեանքի համար։ Սակայն որբանոցի վերակազմութիւն չըպէտք է տանել այն ձևով, որ առաջարկում են պ. բժ. Աղասարեան և իշխ. Արղութեան, այլ որբանոցը պէտք է վերածել արհեստանոցի, պրոֆէսսիոնալ դպրոցի, որից դուրս եկողները յիրաւի վաղը պատրաստ կըլինեն կեանքի համար։

Առաջարկում է ընտրել մի յանձնաժողով, որ կըմշակէ ծրագիր այսպիսի պրոֆէսսիոնալ դպրոցի։

Յ. Տէր-Միրաքեան գտնում է, որ յիրաւի ժամանակ է որբանոցը վերակազմելու, միայն թէ անհրաժեշտ է այնպիսի ընթացք տալ գործին, որպէսզի մի կողմից միջոցները խնայուեն և միւս կողմից դիւրին լինի ծրագրած նպատակին հասնելը։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ որբանոցի ամեն մի սանը ներկայ եղանակով ընկերութեան կընստի ոչ պակաս 5000 րուբլի, առաջարկում է որբանոցը վերածել հանրակացարանի, ուր կընդունուեն նաև դուրսից եկած այն օրիորդները, որոնք պատրաստուելու են։ Ինչ վերաբերում է ուսուցչական կուրսեր բանալուն, աչքի առաջ ունենալով տիրող կարգերը, յարմար է դատում այդ միացնել Գայիանեան կամ Յովնանեան դպրոցներին, օժանդակելով սրանցից մէկին ու մէկին, կամ երկուսին։ Այսպէս ուրեմն հանրակացարանում կարող են բնակարան, ուտելիք և այլ յարմարութիւն գտնել այն օրիորդները, որոնք կըյաճախեն յիշուած դպրոցների մանկավարժական դասարանները։

Հայր Ղազազեան գտնում է, որ խօսողները հեռանում են դրուած հարցի անմիջական պատասխանից, առ այժմ մնում է որոշել, թէ արդեօք նպատակայարմար է որբանոցը վերակազմել թէ

ոչ. այս խնդիրը աւելի հեշտ իր լուծումն կըգտնի, եթէ ժողովականները աչքի առաջ ունենալով կարդացուած զեկուցումները, որոշէին նրանց նմանութիւնները և տարբեր կէտերը։

Ս. Յարութիւնեան.—Որբանոցը, ինչպէս ձեզ յայտնի է, հիմնուած է 1903 թ. քանի փոքր էին ընկերութեան միջոցով խնամուող որբերը, որբանոցի դժուարութիւնները աչքի չէին ընկնում, բայց այժմ, երբ մի շարք աւարտողներ ենք ունենալու, մեր առաջ ծանրացած է մի հարց,. ինչ պէտք է անեն աւարտողները և որքան է մեզ յաջողուել հայ հասարակութեան համար պիտանի անհատներ կրթել։ Անշուշտ մենք զանազան առաջարկներ կարող ենք ունենալ, թէ ինչ ձևով վերակազմել, վերափոխել որբանոցը, սակայն առ այժմ անհրաժեշտ է դեռ սկզբունքով որոշել, թէ արդեօք կարևո՞ր է վերափոխել որբանոցը, երբ դրականապէս որոշուած կըլինի որբանոցի վերափոխման խնդիրը, այն ժամանակ մեզ կըմնայ պարզել հայեցակէտերը—ընկերութիւնս արդեօք աչքի առաջ պէտք է ունենայ իր խնամատարութեան տակ ընդունուածների անհատական բարօրութիւնը, թէ պէտք է ձգտէ այնպէս կրթել իր սաներին, որ նրանք ոչ միայն անհատապէս բարեկեցիկ կեանք ունենային, այլ և հայ հասարակութեան համար լայն մտքով պիտանի անդամներ դառնային. այլ խօսքով վերակազմուած հիմնարկութիւնը արդեօք սոսկ անհատական բարեգործական բնոյթ պէտք է կրէ, թէ այստեղ պէտք է պատրաստուեն-կրթուեն հասարակական գործիչներ, սնուած ազգային ոգւով։

Նախագահը քուէարկութեան է դնում որբանոցի վերակազման խնդիրը. ժողովը միաձայն ընդունում է որբանոցի վերակազմութեան անհրաժեշտութիւնը։

Յ. Սպենդիարեան—մի հիմնարկութիւն, որ երկար կեանք է ունեցել, անշուշտ կարող է բարեփոխման ենթարկուել, եթէ ընդառաջ է գնալու կեանքի պահանջներին, նոյնը կարելի է ասել և որբանոցի վերաբերմամբ. սակայն պէտք է աչքի առաջ ունենալ թէ արդեօք հնարաւոր է այդ լինելու, պէտք է ընտրել այն ճանապարհը, որով հեշտութեամբ կարելի է հասնել այդ նպատակին. անա այս տեսակէտից միանգամայն նպատակայարմար կարելի է համարել պ. պ. Իս. Յարութիւնեանի և Տէր-Միրաքեանի առաջարկը, այսինքն չըփորձել բանալ առանձին մանկավարժական դասընթացներ, որովհետև, ինչպէս նկատուեց, այդպիսի դիմումները մերժուած են պաշ-

տօնական հիմնարկութիւնների կողմից, այլ օժանդակել Յովնանեան կամ Գայեանեան դպրոցներին։ Որբանոցը իբրև հաստատութիւն պէտք է պահել, որովհետև մեծ է կարիքը, չքաւորութեան ու աղքատութեան մատնուածները պէտք է տեղ գտնեն այստեղ, որբանոցի սաները ուսուցչական ասպարէզի համար պատրաստւում են վերը յիշուած միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում։

Տիկ. Ժ. Զարզարեան.— բժ. Աղասարեան և իշխ. Արղութեան զեկուցին, որ ցանկալի է ունենալ հայ բոննաներ-դաստիարակչուհիներ, որ հայ հասարակութեան մէջ այդ կարիքը զգացւում է. դժբախտաբար ինքն այլ եզրակացութեան է եկած. յիրաւի հայ ընտանիքները փնտռում են դաստիարակչուհիներ, սակայն ոչ թէ հայ, այլ օտար՝ ֆրանսուհի, գերմանուհի. այս տեսակէտից աննպատակայարմար է համարում հայ բոններ պատրաստելու խնդիրը, իսկ ինչ վերաբերում է ուսուցչանոցներին միանգամայն ցանկալի է և խիստ նպատակայարմար։

Հ. Մելիքեանը գտնում է, որ հայ բոննաների կարիքը խիստ զգալի է. գիւղերում այդ բնաւ չի զգացւում, սակայն քաղաքներում կարիքը շատ մեծ է. շատ անգամ է ինքը փնտռել հայ բոննայ, սակայն իզուր։ Հայ բոննաներից չի պահանջւելու բարձր կրթութիւն, այլ նրանք պէտք է գիտենան լաւ մաքուր հայերէն խօսել և երեխաների հետ վարւել։ Այս տեսակէտից իշխ. Արղութեանի և խորհրդի առաջարկը գտնում է այժմէական։

Յով. Մալխասեան ևս խիստ կարևոր է համարում հայ դաստիարակչուհիներ պատրաստելու խնդիրը. հայ հասարակութիւնը լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնի հայ լեզուի վրայ. հայ դաստիարակչուհիները նպաստելու են հայ լեզուի պահպանութեան և զարգացման։

Առ. Աւագեան կարդացւած զեկուցումները գտնում է հիմնաւոր. խորհրդի առաջարկութիւնը՝ վերակազման ենթարկել որբանոցը՝ այժմէական. մնում է որոշել այն հայեցակէտը, որի համաձայն պէտք է տանել վերակազման գործը։ Այդ հայեցակէտն է լինելու հայ լեզուի պահպանութեան և նրա զարգացման խնդիրը։ Ներկայումս հայ լեզուն կարծես թէ արհամարհւած է. Հայոց Բարեգործական Ընկերութիւնը նոյնպէս պէտք է մաքառէ սրա դէմ.— որբանոցը անշուշտ լայն չափով ծառայում էր այդ նպատակին. երեխաները սովորում էին հայ լեզուն և կրթւում էին հայ ոգւով. այժմ

պէտք է ջանալ աւելի ընդլայնել որբանոցը թողնող օրիորդների գործունէութեան շրջանը. պէտք է միջոց տալ նրանցից հայ դաստիարակչուհիների և ուսուցչուհիների պատրաստւած կոնտենգենտ ստեղծելու գործին։ Ներկայումս հայ միջնակարգ դպրոցները՝ Ներսիսեան, Գայեանեան, Յովնանեան մեզ չեն տալիս պատրաստի ուսուցիչ-ուսուցչուհիներ, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը պէտք է ջանայ այդ պակասը լրացնել։ Առաջարկում է պահել որբանոցը, որպէս մանկապարտէզ՝ մեծ աղջիկներին ուղարկել Յովնանեան և Գայեանեան դպրոցներին կից մանկավարժական լրացուցիչ դասարանները։

Գ. Վարդանեան ևս անհրաժեշտ է համարում մանկավարժական կուրսերը, որովհետև պատրաստի ուսուցիչ-ուսուցչուհիների կարիքը շատ և շատ մեծ է, բայց աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Բարեգործական Ընկերութեանը ևս հաւանականօրէն թոյլ չեն տալու կուրսեր բանալ, ուստի առաջարկում է նպաստել տեղւոյս օրիորդաց միջնակարգ դպրոցներին՝ Յովնանեան կամ Գայեանեան, բանալ լրացուցիչ մանկավարժական դասարաններ։ Ուսուցչական Միութիւնը անցեալում միջնորդութիւն էր յարուցած դասընթացների իրաւունք ձեռք բերելու, բայց չյաջողւեց, թէև դիմումները կատարւած էին Թիֆլիզի առաջնորդի կողմից Վեհափառ Կաթողիկոսի հաճութեամբ։

Որքան անհրաժեշտ են մանկավարժական դասընթացները, ոչ պակաս անհրաժեշտ է ունենալ մի հանրակացարան, ուր գաւառից Թիֆլիս եկող օրիորդները կգտնեն յարմար բնակարան և սնունդ։ —Հայ մատաղ սերունդը զուրկ է և յարմար բուժարանից, անհրաժեշտ է ընկերութեան հանրակացարանին կից բանալ և բուժարան չքաւոր աշակերտուհիների համար։

Ս. Մելքումեան. Համաձայն Խուդադեանի կտակի՝ Կովկ. Բարեգ. Ընկերութիւնը հիմնել է որբանոց, որ մի բարեգործական հիմնարկութիւն է. խորհուրդս լաւ զգալով հայ ժողովրդի կուլտուրական պահանջները, աւելի առաջ գնալով, ժողովին առաջարկում է որբանոցը վերափոխել. և քանի որ այս հարցը՝ որբանոցը վերափոխել՝ անցաւ միաձայն հետևապէս այժմ միայն մնում է ընտրել մի մասնաժողով, որ խորհրդին կից կմշակէ որոշ ծրագիր։

Տիգր. Յովհաննիսեան գտնում է, որ յիրաւի հայ հասարակութեան մէջ զգացւում է կարիք հայ բոննաների, որովհետև այդ ուղղութեամբ շատ անգամ են տեղի ունեցած դիմումներ։ Ինչ վե-

վերաբերում է բուժարանին, որ առաջարկեց պ. Վարդանեան գըտնում է աննպատակայարմար. այդ կարիքները հոգալու համար քաղաքում կան յատուկ հիմնարկութիւններ։—Ամենից կարևորն է համարում ուսուցչանոցները, սակայն համաձայն չէ պ. Իս. Յարութեանի և պ. Տէր-Միրաքեանի առաջարկութեան հետ, մանկավարժական դասընթացները կապել որ և է դպրոցի հետ։ Բարեգ. Ընկերութիւնը պէտք է աշխատէ ունենալ սեպհական դասընթացներ և այդ երկու տեսակէտից. նախ դրանք չըպէտք է լինեն միամեայ, այլ առնուազն եռամեայ, որպիսին անկարող են պահել յիշւած միջնակարգ դպրոցները և երկրորդ՝ առանձին մանկավարժական կուրսերի ժամանակ ընկերութիւնը հնարաւորութիւն կունենայ յատուկ այդ նպատակի համար փող հաւաքելու։

Ստ. Մալխասեան, որբանոցի վերակազման խնդիրը վճռւած համարելով, մտում է ընտրել մի մասնաժողով, որ կըմշակէ մանրամասնօրէն վերակազման ծրագիրը. սակայն առ այժմ անհրաժեշտ է որոշել, թէ ինչ ուղղութեամբ պէտք է տարւի այդ. վերակազմւած հիմնարկութիւնը պէտք է կրի անհատական-բարեգործական. թէ աւելի լայն ազգային հասարակական կնիք։

Բժ. Աղասարեան գտնում է, որ ժողովականները ծանրանալով հայ լեզւի պահպանութեան և զարգացման վրայ, անտես են առնում մանկաբարձուհիների կարիքը, այո՛ պէտք է պահել հայ լեզուն, բայց նախ և առաջ հայ ժողովուրդը. եթէ լեզուն անհրաժեշտ է, աւելի ևս անհրաժեշտ է հայի քանակը. չըպէտք է մոռանալ, որ հայ ազգը կորչում է. չըկան հայ մանկաբարձուհիներ, շատ տեղերում նրանց փոխարինում են օտարները, օրինակ հրէաները, բայց աւելի յաճախ գիւղերում տգէտ տատմայրերը, երբեմն նոյն իսկ հովիւները, օտար մանկաբարձուհիները անտեղեակ են հայի կարիքներին, սրանցից խորշում են հայ գիւղացիները։

Ս. Յարութիւնեանը կրկին անգամ շեշտում է այն մօտիւները, որ դրդել են խորհրդին որբանոցի վերակազման հարցը դնելու, շեշտում է և այն, որ Բարեգ. Ընկերութիւնը չըպէտք է սահմանափակէ իր գործունէութիւնը Թիֆլիզում, այլ քանի որ նրան տրւած է գործունէութեան լայն ասպարէզ, ուստի և առանձնակի ուշադրութեան պէտք է առնեն նաև գաւառի կենսական կարիքները։ Եթէ ընկերութեանը կըյաջողւի իր խնամատարութեան տակ գտնւող օրիորդներից պատրաստել ուսուցչուհիներ հէնց իր միջոցներով

պահւող գաւառական տարրական դպրոցների համար, դրանով զգալի կերպով զարկ տրւած կըլինի հայ ժողովրդի ազգային-կուլտուրական գործին։ Ներկայ որբանոցի վերակազմութիւնը այս ուղղութեամբ ոչ միայն հակառակ չէ Խուդաղեան կտակի իմաստին, այլ ընդհակառակն ընկերութիւնը այսպիսով վստահ կարող է լինել, որ Խուդաղեան միջոցները անհամեմատ աւելի նպատակայարմար եղանակով են շահեցրւած։

Յ. Ամիրխանեանը խնդիրը բաւականին լուսաբանւած համարելով, առաջարկում է ընտրել մասնաժողով, որը աչքի առաջ ունենալով ընդհանուր ժողովի խորհրդակցութիւնը, կըմշակէ մի ծրագիր. թէ ինչպէս պէտք է վերակազմել որբանոցը։ Մասնաժողովի ուշադրութիւնից չըպէտք է վրիպէ հայ ժողովրդի մէջ նկատւող պրոֆէսսիօնալ հիմնարկութիւնների մեծ կարիքը։

Փ. Վարդազարեան առաջարկում է ժողովին զբաղւել խորհրդի ներկայացրած զեկուցման քննադատութեամբ. ժողովին առ այժմ մնում է որոշել թէ որչափ ընդունելի է խորհրդի առաջարկը։

Տիգր. Յովհաննիսեանը առաջարկում է քւէարկութեան դնել հետևեալ հարցերը.

1. Լինի որբանոց, թէ ոչ.

2. Վերակազմւած հիմնարկութեան մէջ խնամւող սանուհիները արդեօք պէտք է սովորեն որոշ անհատներ, թէ նրանց կրթական գործին աւելի լայն ասպարէզ պէտք է տրւի։

3. Առաջարկւած ուսուցչական դասընթացները արդեօք պէտք է լինեն բոլորովին ինքնուրոյն, թէ կարող են միացած լինել այլ հիմնարկութիւնների հետ։

Գ. Դոլուխանեանը գտնում է, որ պրոֆէսսիօնալ պատրաստութիւն ձեռք բերող անհատներն ինքնըստինքեան բարձրացնում են հայ ժողովրդի կուլտուրական մակարդակը. աւելացնում են կեանքի դժւարութիւնների դէմ մաքառողների աւելի պատրաստւած անհատների թիւը. ուստի և պէտք է նսեմացնել սրանց նշանակութիւնը ուսուցչուհիների և դաստիարակչուհիների հանդէպ։ Այս տեսակէտից առաջարկում է, արդեօք հնարաւոր չէ վերակազմւած հիմնարկութեան մէջ բանալ թէ ուսուցչական և թէ պրոֆէսսիօնալ բաժանմունք։

Ց. Սպենդիարեան. թէ երէկւայ խորհրդին կից խառը ժողովում և թէ այսօր ժողովի սկզբից չէր դրւած որբանոցի լինել չըլինելու

հարցը, այլ խօսւում էր միմիայն որբանոցի վերակազմման մասին. այժմ լսւում են ձայներ «որբանոցի փակման» մասին. այս միանգամայն տարօրինակ և անհասկանալի է։ Որբանոցը ունի իր պատկառելի անցեալը. նրա մէջ խնամւող սանուհիները արժանացել են հրապարակային գովասանքի, մինչև այժմ չի լսած և ոչ մի բացասական կարծիք. հետևապէս, եթէ այժմ նրա փակման հարցն է դրւում, ապա ուրեմն խորհուրդը պէտք է պատճառաբանէր նրա վնասակարութիւնը, այլապէս ոչ ոք իրաւունք չունի հիմնայատակ անել մի «օջախ», որ հայ հասարակութեան կողմից միմիայն գովասանքի է արժանացել, խորհուրդը պէտք է ներկայացնէր նաև կանոնաւոր նախահաշիւ առաջարկւած հիմնարկութեան։

Ս. Յարութիւնեանը խորհրդի և իր կողմից յայտնում է, որ ոչ ոք իր դժգոհութիւնը չէ յայտնում ներկայ որբանոցի վերաբերմամբ. Բարեգործական Ընկերութեան որբանոցը իր ներկայ դրութեամբ կարելի է նոյն իսկ օրինակելի համարել և այդ տեսակէտից նա յիրաւի արժանացած է հայ հասարակութեան զանազան խաւերի գոհունակութեան և գովասանքին. սակայն խորհուրդը դէմ է որբանոցին այլ տեսակէտից։ Եթէ որբանոցը որպէս սոսկ որբանոց գտնւէր նոյն իսկ գաղափարական դրութեան մէջ, բայց հնարաւորութիւն չըտրւէր նրա մէջ խնամւող սանուհիներին լայն չափով պատրաստել ապագայ հասարակական գործունէութեան համար,—այն ժամանակ էլ որբանոցը կըճանաչւէր որպէս ոչ նպատակայարմար հիմնարկութիւն։

Այժմ որբանոցի վերակազմման հարցը դրւում է ժողովիդ առաջ, եթէ ժողովը կարտայայտւի այն ուղղութեամբ, թէ անհրաժեշտ է վերակազմել, այն ժամանակ միջոցներ ձեռք կառնւեն այդ ուղղութեամբ. այսինքն վերակազման խնդիրը կըյանձնւի յատուկ յանձնաժողովի, որի մշակած ծրագիրը կըներկայացւի ընդհանուր ժողովին ի քննութիւն և հաստատութիւն։ Գալով ներկայումս խնամւող օրիորդների վիճակին, այսքանը պէտք է ասել, որ 6 հոգի արդէն այս տարի թողնելու են որբանոցը, ամենամեծ մասը այն շրջանում է գտնւում, որ կարող է մնալ ապագայում վերակազմւած հիմնարկութեան մէջ առաջինների հետ, իսկ մի քանի ամենափոքր որբերին կարելի է տեղաւորել այլ տեղերում, օր. «Որբախնամ ընկերութեան» յանձնել։ Բարեգործ. Ընկերութիւնը կըհոգայ անխտիր բոլորի կարիքները.—բայց եթէ ժողովը մերժէ որբանոցի վերակազման առաջարկը, այն ժամանակ ամեն ինչ կըմնայ իր ներկայ դը-

րութեան մէջ։—Ահա սրան պէտք է վերագրել, որ խորհուրդս ոչ մի նախահաշիւ չի ներկայացրել ապագայ հիմնարկութեան համար, որովհետև համոզւած չի եղել, որ առաջարկը կընդունւի ժողովի կողմից։

Կ. Շիրինեան ևս որբանոցի վերակազմումը գտնում է անհրաժեշտ, նոյն իսկ արդարադատութեան տեսակէտից. արդարադատութեան տեսակէտից անթոյլատրելի պէտք է համարել, թողնել մի կողմը հարիւրաւոր չքաւորների կարիքները և ամբողջ հոգացողութեան առարկայ դարձնել մի 30 հոգի, որ հայ որբ և չքաւորների շրջանում բացառիկ երջանիկ դրութեան մէջ են գտնւում

Նախագահը Ձայնարկութեան է դնում որբանոցի վերակազման և յանձնաժողովի ընտրութեան հարցը։

Ժողովը միաձայն ընդունելով Բարեգ. Ընկերութեան որբանոցի վերակազման անհրաժեշտութիւնը, որոշեց ընտրել յատուկ յանձնաժողով, որ ուշադրութեան առնելով ներկայ խորհրդածութիւնը, բազմակողմանի քննութեան կառնի որբանոցի վերակազման խնդիրը և կըմշակի յատուկ ծրագիր, որ և կըներկայացւի ընդհանուր ժողովին ի հաստատութիւն։

Առաջարկւեցին յանձնաժողովի անդամների թիւը հաշւել 5 և 12։ Նրանք, որոնք առաջարկում էին 5, յարմար էին գտնում, որ խորհրդի կողմից ևս այդ ընտրւածներին միանան 5 հոգի, որպէսզի խորհրդի անդամների ձայնը խիստ չտարբերւի։

Յարմար գտաւեց յանձնաժողովի համար ընտրել 12 հոգի, որոնք խորհրդի հետ միասին պէտք է մշակեն ծրագիր։

Առաջարկւեցին 15 հոգի.—ընդհանուր ժողովի նախագահը առաջարկեց այս բոլորին էլ հաշւել յանձնաժողովի անդամ. պատճառաբանելով, որ զբաղման նիւթը խիստ ծանրակշիռ է, հետևապէս աւելի նպատակայարմար կըլինի աւելի լայն շրջանում քննութեան առնել, նամանաւանդ որ գուցէ ոչ ամեն անգամ նիստերին էլ ներկայ կըլինեն լրիւ կազմով։

Մասնաժողովի անդամ ընտրւեցին՝—իշխ. Ս. Արղութեան, տիկ. Իւ. Սպենդիարեան, տիկ. Ս. Մարտիրոսեան, բժ. Ա. Զարգարեան, բժ. Նաւասարդեան, Յ. Տէր Միրաքեան, Իս. Յարութիւնեան, Գ. Դոլուխանեան, Յ. Սպենդիարեան, Տ. Յովհաննիսեան, Ստ. Մալխասեան, Կ. Շիրինեան, Յ. Ասիլխանեան, Ա. Եզեկեան, Գ. Վարդանեան, Ս. Աբովեան։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

Քարտուղար՝ Ս. ԱԲՈՎԵԱՆ.

IV

1912 Թ. Նոյեմբերի 11-ին երեկոյեան ութ ժամին կայացաւ Հայոց Բարեգործական Ընկերութեան նոյեմբերի 4-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը՝ նախագահութեամբ բժ. Բ. Նաւասարդեանի:

Քննութեան առնեցին նախորդ նիստի օրակարգի մնացած խնդիրները—հետևեալ յաջորդականութեամբ՝

1. Մի քանի ճիւղերից ստացուած նախահաշիւների քննութիւնը և հաստատումը:

2. Խորհրդի առաջարկութիւնը՝ վճարել օբլիգացիաներով Թիֆլ. քաղաքային վարկային ընկերութեանը հասանելիք ընկերութեան 4619 ր. 92 կ. գումարի պարտքը:

3. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի յօգուտ ծխական-եկեղեցական դպրոցների 4000 րուբլի նպաստի ընդհատումն:

4. Առաջարկութիւն խորհրդի՝ դատ սկսել Սարիբէկ Շահազիզի դէմ (հանգուցեալ բանաստեղծ Սմբատ Շահազիզի եղբայրը):

5. Դպրոցական-ուսուցչական ֆոնդի բաժանումն և Ուսուցչական ֆոնդի հրահանգի հաստատումն:

6. Ընտրութիւն Աբովեան-Նազարեան ֆոնդի մասնաժողովի անդամների:

7. Ընտրութիւն խորհրդի 2 փոխ-անդամի:

1. Խորհրդի քարտուղար Յ. Տահնազարեան կարդում է Բարեգործ. Ընկեր. ճիւղերից ստացուած նախահաշիւները.

				մուտք.	ելք.
I. Շամշադին Բերդի՝ ճիւղի նախահաշւ. սպասւում է				135 ր.00	135 ր.00
II. Բաթումի	»	»	»	1770 ր.00	1770 ր.00
III. Սև քարի	»	»	»	100 ր.00	100 ր.00
IV. Արմաւիրի	»	»	»	1615 ր.94	1615 ր.94
V. Վերին-Ագուլիսի	»	»	»	170 ր.00	170 ր.00
VI. Սուլդա գիւղի	»	»	»	62 ր.00	62 ր.00
VII. Բաշ գիւղի	»	»	»	63 ր.00	63 ր.00

Այս նախահաշիւներով մուտքի յօդուածները կազմել են սովորաբար՝ անդամակցական վճարներ, նուէրներ, պարահանդէսներից ներկայացումներից եկամուտ, հարսանեաց հանդանակութիւն և այլն:—Ելքը

կազմում են դպրոցներին օժանդակութիւն, Թոշակ, տառապեալներին օգնութիւն, գրադարան-ընթերցարանի ծախսեր, դիւանական ծախսեր և այլն:

Վերին Ագուլիսի ճիւղի նախահաշւում մտած է 10 $^0/_0$ պահեստի գումար. այսինքն եկամտի՝ 170 րուբլուց 10 $^0/_0$—17 րուբլի հաշւած է Վերին-Ագուլիսի ճիւղի համար անձեռնմխելի պահեստի գումար:

Այս կէտը առիթ տւեց առարկութեան.—Պ. Խաչազեան գտնում է, որ ճիւղերը իրաւունք չունեն առանձին պահեստի գումարներ ունենալու, այդ իրաւունքը վերապահւած է միմիայն կենտրոնին:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Ընկերութեան կանոնադրութեան մէջ չկայ յատուկ յօդւած, որով արգելւէր ճիւղերին այդպիսի գումարներ ունենալ,—ժողովը ընդունեց Վերին-Ագուլիսի ընկերութեան ճիւղի որոշումը:

Ժողովի կողմից հաստատւեցին բոլոր նախահաշիւներն:

Բարեգործական ընկերութեան պատկանող Ղարաջեան տունը պարտք ունի Թիֆլիսի Քաղաքային Վարկային ընկերութեան 4619 ր. 97 կ., որի համար վճարում է որոշ $^0/_0$.—Խորհուրդը առաջարկում է հանգցնել այդ պարտքը օբլիգացիաներով, որով ընկերութիւնը տւեալք $^0/_0{}^0/_0$-ի մէջ շահւած կլինի:—Ընդհանուր ժողովը ընդունեց խորհրդի առաջարկը:

Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեան յայտնում է ընդհ. ժողովին, որ Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհուրդը պաշտօնապէս մերժում է այն տարեկան 4000 ր. նպաստը, որ նա տալիս էր շարունակ 1908 Թւականից, որպէս նպաստ Բարեգործական Ընկերութեան օժանդակութեամբ պահւող հայկական տարրական դպրոցներին: Այս գումարով ընկերութիւնը օգնութեան էր հասնում 20 դպրոցի: Այս տարւայ նախահաշւում մտած է այս գումարը որպէս մուտք: Մինչև այժմ դիմումներ են եղած Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, Թէ անմիջապէս խորհրդի նախագահի կողմից և Թէ Մեսրովբ սրբազանի միջոցով. սակայն հոկտեմբերի 15 ին հեռագիր է ստացւած, որով մերժւում է այդ գումարը:

Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը իր մերժումը պատճառաբանում է նախ նրանով, որ այդ գումարը պէտք է տրւէր միմիայն մի քանի տարի, մինչև որ մեր դպրոցները փոքր ի շատէ

նորմալ պայմանների մէջ կընկնէին և հայ ժողովուրդը կըսովորէր անձամբ հոգալու իր կրթական կարիքները,—միւս կողմից եկեղեցական խորհուրդը մտադիր է եկեղեցական շինութիւնները բարենորոգել, որը պահանջում է մեծ գումար: Այս իսկ պատճառով դադարեցրուած են նաև այլ հիմնարկութիւնների սովորական օժանդակութիւնները ամբողջովին, կամ մասամբ: Զնայելով այս բոլորին պ. Ս. Ցարութիւնեան գտնում է, որ եթէ Բարեգ. Ընկերութեան ընդհանուր ժողովի կողմից դիմում լինի եկեղեցական խորհրդին, հաւանականօրէն կըյարգւի ընկերութեան խնդիրը: Որոշւում է հեռագիր ուղարկել խորհրդին այդ ուղղութեամբ:

4. Ժողովը անցնում է հետևեալ խնդրին.—Սմբատ Շահազիզը իր կենդանութեան ժամանակ Բար. Ընկ. նուիրել էր 10,000 ր., որ հանգանակւած էր նրա յոբելեանի համար. Բ. Ընկ. փակումից յետոյ, այդ գումարը յետ էր դարձւած Շահազիզին: Ընկերութեան վերաբացումից յետոյ Ս. Շահազիզի եղբայրներից երկուսը յետ են դարձրած իրանց մասը, իսկ Սարիբէգ Շահազիզը օգտւելով այն հանգամանքից, որ կտակ չկայ, մերժում է այդ գումարը և նոտարի միջոցով յայտնում, որ «ոչ մի կոպէկ պարտ չէ»:—Խորհուրդը աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ կան որոշ փաստեր, որով կարելի է ապացուցել Սար. Շահազիզի Բարեգործ. Ընկերութեան պարտ լինելը,—առաջարկում է դատ սկսել նրա դէմ:

Ժողովը ընդունեց խորհրդի առաջարկը—դատ սկսել Սար. Շահազիզի դէմ:

5. Դպրոցական-ուսուցչական ֆոնդի բաժանումն և ուսուցչական ֆոնդի հրահանգի հաստատումն.—

Խորհրդի քարտուղար պ. Ց. Շահնազարեան կարդում է խորհրդի զեկուցումն այս խնդրի վերաբերեալ. Բարեգործական Ընկերութեան 30-ամեակը յաւերժացնելու համար խորհուրդը Փոխարքայից պատշաճաւոր թոյլտւութիւն ձեռք բերելով կազմակերպում է համակովկասեան ժողովարարութիւն դպրոցական-ուսուցչական ֆոնդի օգտին: Ներկայումս խորհուրդը ունի 92,400 րուբլի նոմինալ արժողութեան տոկոսաբեր թղթեր, բացի այս գումարից ունի ստանալիք եղբ. Անանեաններից 10,000 ր., որը ըստ խոստման այս օրերումս պէտք է մտցնւի ընկերութեան գանձարկղը:

Խորհուրդը մտադիր է գնել յօգուտ յիշեալ ֆոնդի մի մի տոմս վիճակախաղի բոլոր սերեաների:

Այս բոլոր գումարից, դուրս գալով պետական տուրքերը, ըսպասւում է մաքուր արդիւնք 4389 ր.:

Խորհուրդը տրամադիր է այս ամբողջ գումարը բաժանել երկու հաւասար մասի, որից մէկը զուտ դպրոցական, իսկ միւսը՝ ուսուցչական:

Վերջինիս համար կազմւած է յատուկ հրահանգ 10 յօդւածից:

Ուսուցչական ֆոնդի նպատակն է.—նիւթականապէս օգնել հայ դպրոցներում ծառայող ուսուցիչ-ուսուցչուհիներին կամ նըրանց այրիացած կարիքաւոր ընտանիքներին: Օգնութիւնը լինելու է կամ որպէս միանւագ նպաստ, կամ որպէս կենսաթոշակ:

Ուսուցչական ֆոնդը գտնւելու է խորհրդի անմիջական հսկողութեան տակ, բայց կառավարւելու է առանձին յանձնաժողովով, ուր մտնելու են ա. բացի խորհրդի նախագահից և երկու այլ անդամներ խորհրդից, բ. Կով. հայոց դպրոցների ուսուցիչ-վարժուհիների ընկերութեան վարչութեան կողմից մէկ ներկայացուցիչ, գ. Կովկ. Բարեգ. Ընկեր. ընդհանուր ժողովից ընտրւած երկու անդամ և դ. Թեմական տեսուչները:

Զեկուցման ընթերցումից յետոյ ժողովը անցնում է զեկուցման և հրահանգի մէջ շօշափւած կէտերի քննութեան:

Խաղարկու տոմսերի վերաբերմամբ ժողովը հետևեալ որոշումն է կայացնում. գնել երբեք հատ վիճակախաղի տոմս մի մի հատ իւրաքանչիւր սերիայից յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆոնդի, այն պայմանով, որ տարած դէպքում, ստացւած գումարը բաժանւի երկու ֆոնդերի մէջ հաւասարապէս:

Գալով այն հարցին, թէ դպրոցական-ուսուցչական ֆոնդի օգտին ստացւած գումարը ինչպէս պէտք է բաժանել, ժողովականների կողմից տարբեր կարծիքներ են արտայայտւում:

Խորհրդի նախագահ պ. Ս Ցարութիւնեանը գտնում է, որ արդարութեան տեսակէտից միակ ելքն է հաւասարապէս բաժանումը: Խորհուրդը թէ դպրոցների և թէ ուսուցիչների վիճակի բարելաւումն միատեսակ գնահատելի է համարում և որովհետև ժողովարարութիւնը տեղի է ունեցել անբաժան երկու ֆոնդերի անունով, իսկ նւիրատուներից շատ քչերն են որոշակի յայտնել իրանց ցանկութիւնը, ուստի նպատակայարմար պէտք է համարել խորհրդի որոշումը: Խորհուրդը շատ խոր է հասկացել հայ ուսուցչի վիճակի բարելաւման անհրաժեշտութիւնը և ստացւած գումարի փոքրու-

Թիւնը մեծ կարիքի առաջ, ուստի առաջարկում է այլ միջոցներ
ուսուցչական ֆոնդի ընդլայման համար:

Լէօ, Գ. Վարդանեան, Ա. Նազարէթեան եւ Ս. Աբովեան գըտ-
նում են, որ դպրոցական-ուսուցչական ֆոնդի անունով ստացուած
գումարից պէտք է պահել յատուկ դպրոցական ֆոնդի անունով
տրուած նուէրները (այսպէս Մանթաշեանների 30,000 ր.) և մնացա-
ծը ամբողջովին յատկացնել ուսուցչական ֆոնդին: Հաւասար բա-
ժանման դէպքում ուսուցչականին ընկնում է մօտ 50,000 ր. մի
գումար, որ վերին աստիճանի սահմանափակ է, որպէսզի նրա %
%-ով հնարին լինի գէթ մինիմալ չափով բաւարարութիւն տալ հայ
ուսուցչի կարիքներին: Այսպիսի բաժանումը ցանկալի պէտք հա-
մարել նաև այն տեսակէտից, որ ս. Էջմիածնում արդէն հիմք է
դրուած յատուկ «դպրոցական ֆոնդի», ուրեմն և Բարեգործ. Ընկե-
րութեան կրմնար ստացած գումարի մեծ մասը յատկացնել ուսուց-
չական ֆոնդին, և այդպիսով աւելի հաստատ հողի վրայ դնել ու-
սուցչական ֆոնդը: Բայց որովհետև այս գումարն էլ ինքնըստին-
քեան շատ փոքր է, ուստի ցանկալի է միջոցներ գտնել ուսուցչա-
կան ֆոնդը աւելի ընդլայնելու. այսպէս ուրեմն այժմեան գումարը
միմիայն հիմք պէտք է ծառայէ ուսուցչական ֆոնդի: Գալով այն
հարցին,—թէ քանի որ նուիրատուներից շատերը չեն յայտնել, թէ
ինչ նպատակի են յատկացնում իրանց նուէրները, ուստի և արդա-
րութեան տեսակէտից նպատակայարմար պէտք է համարել ամբողջ
գումարի երկու հաւասար մասի բաժանելը,—գտնում են, որ այն-
քան էլ հիմնաւոր չըպէտք է համարել այդ պատճառաբանութիւնը,
որովհետև աւելի մեծ հաւանականութիւն կայ կարծելու, որ նուի-
րատուների սուար մեծամասնութիւնը աչքի առաջ է ունեցել ու-
սուցչական ֆոնդը:

Հ. Առաքելեան.—երկու նպատակն էլ նուիրական են և դժուար
է ասել, թէ որին պէտք է նախապատուութիւն տալ, սակայն ար-
դարութեան տեսակէտից ցանկալի է համարում զատել յատուկ նը-
ուէրները, իսկ մնացածը բաժանել հաւասարապէս ուսուցչական և
դպրոցական ֆոնդերի միջև:

Իս. Ցարութիւնեան եւ Ս. Մալխասեան գտնում են խորհրդի
առաջարկը արդարացի, որովհետև այդպիսով լայն չափով պաշտ-
պանուած են ուսուցիչ-ուսուցչուհիների շահերը, պ. Մալխասեան
գտնում է, որ այդպիսով Բարեգործական Ընկերութիւնը ընդ առաջ

է գնում ապագայում կազմակերպուելիք «ուսուցչական Թոշակար-
կղի», որով միմիայն հաստատուն հիմքի վրայ կդրուի հայ ուսու-
ցիչ ուսուցուհու ապահովութեան խնդիրը:

Նախագահը խնդիրը լուսաբանուած և վիճաբանութիւնները
սպառուած համարելով, քուէարկութեան է դնում խորհրդի առաջար-
կը, որ և անցնում է գրեթէ միաձայն, հետևեալ յաւելումով.—եթէ
ապագայում Բարեգործական Ընկերութիւնից անկախ պատճառնե-
րով անհնարին լինի ուսուցչական ֆոնդը իր որոշ նպատակին ծա-
ռայեցնել, այն ժամանակ թոյլատրւում է այդ գումարը գործադրել
ընկերութեան կանոնադրութեամբ թոյլատրելի այլ նպատակների,
համաձայն Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի ո-
րոշման:

Սարգ. Խարազեան ուշադրութեան առնելով ուսուցչական ֆոն-
դի վերաբերեալ խորհրդի մշակաց հրահանգը գտնում է, որ ու-
սուցչութեան օգնելու խնդիրը դրուած է զուտ բարեգործական հիմ-
քերի վրայ, մինչդեռ ցանկալի է այնպիսի միջոցներ գտնել, որով
բնաւ վիրաւորած չենք լինիլ ուսուցչութեան ինքնասիրութիւնը,
բայց և անհամեմատ մեծ օգուտ հասցրած կլինենք նրան: Այս
տեսակէտից առաջարկում է կազմակերպել ուսուցիչ-ուսուցչուհի-
ների ապահովագրութիւնը, առանձնակի ուշադրութեան առնելով
խմբովին ապահովագրելու եղանակը, որ ընդունուած է շատ հիմնար-
կութիւններում:

Ժողովը ցանկալի համարելով ապահովագրութեան կէտն ևս մըտ-
ցնել հրահանգի մէջ, առաջարկում է ընտրել յատուկ մասնաժողով,
որ քննութեան կառնի խորհրդի մշակած հրահանգը, ուշադրութեան
առնելով ժողովում արտայայտուած կարծիքներն և ցանկութիւն-
ները:

Մասնաժողովի անդամ են ընտրւում բաց քուէարկութեամբ՝—
պ. պ. Ս. Խարազեան, Իս. Ցարութիւնեան, Ս. Մալխասեան, Ա.
Նազարէթեան և Գ. Վարդանեան:

Հայր Ծուղուրեանի այն հարցին, թէ արդեօք դպրոցական ֆոն-
դը պէտք է Էջմիածին ուղարկւի, թէ մնալու է Բարեգործական
Ընկերութեան մէջ, խորհրդի նախագահը պատասխանում է, որ
մնալու է Բարեգործական Ընկերութեան մէջ:

6. Ընտրութիւն Աբովեան-Նազարեան ֆոնդի մասնաժողովի
անդամների:

Ընդհանուր ժողովը խնդրում է մասնաժողովի անդամներ պ. պ. Եզեկեանին, Լէօ և Եր. Լալայեանին մնալ մասնաժողովի մէջ մինչև առաջիկայ տարեկան ընդհանուր ժողովը։ Պ. պ. Եզեկեան, Լէօ և Լալայեան ընդունում են առաջարկը։

7. Ընտրութիւն խորհրդի 2 փոխ-անդամի։

Գաղտնի քուէարկութեամբ ընտրւում են բժ. Ա. Ղազազեան 25 ձայնով և պ. Ա. Նազարէթեան 19 ձայնով։

Օրակարգի նիւթերը վերջացած համարելով ընդհ. ժողովի նախագահ պ. բժ. Նաւասարդեանը փակում է նիստը երեկոյեան ժամի 10-ին։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Քարտուղար՝ Ս. ԱԲՈՎԵԱՆ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

Երես

1) Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի կազմը և նրա գործունէութիւնը 1912 թւին 1
2) Որբանոց 9
3) Գրադարան-ընթերցարան 10
4) Ճաշարան 19
5) Կ. Հ. Բ. Ընկ. 1912/13 ուսումն. տարւայ դպրոցական գործունէութիւնը 22
6) Ցուցակ 1912 թւին ստացւած նւէրների . . . 33
7) Ընկերութեան ճիւղերը 36
8) Քաղւածքներ Կ. Հ. Բ. Ընկ. նւերատւութեանց մասին եղած կտակներից 137
9) Ցուցակ ընկերութեան ճիւղերի 139
10) Ցուցակ Կ. Հ. Բ. Ընկ. հիմնարկութիւնների . . 141
11) Ցուցակ Կ. Հ. Բ. Ընկ. կենտրոնի 1912 Թ. անդամների. 143
12) Կենտրոնի 1912 Թ. հաշիւները 151
13) Համառօտ ընդհանուր հաշիւ մուտքի և ելքի կենտրոնի և ճիւղերի. 192
14) Ցուցակ Կենտրոնում գտնւած արժէթղթերի . . . 194
15) Ցուցակ 1912 Թ, ընթացքում ճիւղերից ստացւած անձեռնմխելի և պահեստի գումարների . . . 197
16) Վերաստուգիչ Յանձնաժողովի արձանագրութիւնը. . 200
17) Խորհրդի բացատրութիւնը Վերաստուգիչ Յանձնաժողովի նկատողութիւնների 203
18) Ընդհանուր ժողովի արձանագրութիւնները

ՆԿԱՏԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Վեր.	Ներք.	Տպած է	Պէտք է լինի
9	»		I	VI	IV
62	»	10	—	Նախագաահ	Նախագահ
63	»	—	4	շնորհակալ է	շնորհակալութիւն է յայտնում
67	»	3	—	12 14	12—14
109	»	8	—	20 ր.	80 ր.
157	»	—	10	Մնացորդ ծախս	անվերադ. ծախս
164	»	2	—	հրատարակութեան համար	հրատարակութեան և այլ պէտքերի համար
177			1	6070—65	6077—65
191	»			Կոստանեանի	Խալաթեանի
	8	»	—	500 ր.	5000 ր.
14	»	10		տփլիզնի քաղաքային բանկի	իպօտիշնի բանկերի

ՀՀ Ազգային գրադարան
NL0219930

42.840